

103

4
2 50

2304-10

669
num

ՀԻՍՈՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ
№ 1 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 1

(ԶԵՊԱԳՐԻ ԽՐԱՎՈՒԹԻՒՆ)

ԳՐ. ՂԱՓԱՆՑՑԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ, ՀԵԶՑՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

Գ Ի Ր Ք 1

—
—

Ց Ե Ր Ե Վ Ա Ն

ԳԻՏԱՑՈՒՅՑԻ ՏՊԱՐԱՆ

1937

4

Հ-50 այ ՀԻՍՈՅ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

(Զեւագրի իրավունքով)

ԴՐ ԳՐ. Պ.Ա.ՓՈՂ.ՆՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(ՆԵՐԱԾՈՒԿԱՆ ՄՈ.Մ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՈ.Մ, ՀԱԶՅՈՒՆԱԳԱԽԹՅՈՒՆ)



593

Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն Մ Ա Ս

ՀԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԾՔԻ, ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԵԽ ԴԻՍՑԻՊԼԻՆՆԵՐԸ

Լեզվաբանությունը յուր պատմական զարգացման սաղմերը ստանում ե Քրիստոսից գեռ շատ դարեր առաջ, վորի մասին կը խոսենք մենք գրքիս վերջում։ Այսուղ, սակայն, չենք կարող չնշել նրա վերջին ընթացքը, վորը գերիշխում է այժմյան «քաղաքակիրթ» աշխարհում։

19-րդ դարի առաջին քառորդից լեզվաբանությունը մտնում է յուր Sturm- und Drangperiode։ Կապիտալիզմի արագ ծաղկումը անդրադառնում ե և այդ գիտության վրա։ Յերեան ևն հանվում այսպես կոչված «Հնդեվրոպական» կամ նախկին սխալ գործածությամբ «արիական» լեզուներ և դրանց ազգակցությունը՝ մայր «նախալեզվից» ստացված։ Առաջին պատվանդան գցողը յեղել ե Ֆրանց Բուզլը։ Այդ լեզուների հայտնագործումը մեծ թափ ե տալիս նաև այլ դիսցիպլինների վերամշակման և զարգացման, ինչպես պատմությանը, մարդարանությանը և այլն։ Սակայն այդ լեզվաբանությունը «Հնդեվրոպական լեզուների համեմատական քերականություն» պիտակով հիմնականում յուր մեթոդոգիամով և նպատակներով արտացոլում ե տիրող գասակարգերի շահերը, նկրտումները։ Առաջ ե մզկում «ռասայական» տեսակետը, այն և՝ հնդեվրոպացիների «ազնիվ» լինելը, ոժավածությունն ու հակամետությունը իրնե ավելի զարգացած լինել քանուրիշները։ Մասնավորապես զաղութային քաղաքականության ասպեկտով անգլիացիք, որինակ, հատկապես ուսումնասիրում են հնդիկների հին (սահմակրիտ) և նոր լեզուները (բարբառները), գերմանացիք նվիրվում են մասնավորապես այն հին ու նոր լեզուների ուսումնասիրության, վորոնք ընկած ելին իրենց կողմից կառուցվող Բաղդադի յերկարությամբ, սաեղծելով

Թիմիքատի սպառան
Գլավիս № 2126
Պատվեր № 15
Տիրած 1000

111
37



այդ լեզուներն ուսումնասիրող մի շաբք «Արևելյան ընկերություններ» (Orient-Gesellschaft). Գերմանացի լեզվագետներն, իրենց «ազգային» նկրտումներից յելած, դեռ համառ կերպով շարունակում են հնդեվրոպական լեզուները կոչել «հնդերմանական»*:

Պետք է ասել, սակայն, վոր տիրող հնդեվրոպական ուղղությունը «յերիտասարդ քերականներից» հետո ունի և յուր առաջավոր դպրոցը, ինչպիսին ե Սոսյուրի և Մեյերի «սոցիուդիական» դպրոցը, յեթե չխոսենք նման կոնցեպցիա ունեցող վիճնայի համարարանի հանգուցյալ պրոֆեսոր Հուգո Շուխարդտի մասին, կամ Ռուսաստանում՝ Ֆորտունատովի, Բողուն դե Կուրտենեյի և այլոց մասին: Սակայն, այստեղ լեզվի «հասարակայնությունը» այսինքն՝ նրա ֆակտուրաների պատմահասարական բովանդակության զարգացումը վերցվում ե ինքնարապէ և հոգերանական մոտեցումով: Լեզվի հասարակայնության բնույթը և ընթացքը չի կապվում հարատևորեն յուր պատվանդանի (բազիսի) հետ. լեզուն չի վերցվում իրեն վերնաշնչնք, վերնաշնչնքային կուլտուրա: Լեզվի մեջ չեն տեսել հասարակական մտքի կնիքը, լեզվի և մտածողության պատմական աղերսը, դասակարգերի պատմական փոխարարերությունը, պայքարը և այլն, թեպետ վոմաց կողմից և շեշտվում ե դասակարգային կամ պրոֆեսիոնալ տարբեր լեզուներ:

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր յեթե չկար ընդհանութեաս լեզվի մատերիալիստական ըմբռնում, չեր ել կարող մինել վերլուծման և նորագույն մարքսիստական կոնցեպցիան, յուր մատերիալիստական դիալեկտիկայով:

Թեպետ հնդեվրոպական և այլ լեզվագետները ճգնում են ցույց տալ, վոր իրենց գիտությունն ապօլիտիկ ե, քաղաքականության չի հետևում, տարվում ե միայն հանուն «մաքուր գիտության», սակայն մենք գիտենք, վոր այդ այդպես չե, վոր այդ լեզվագետներն իրենց մեծողութիւնով դրսեփորում են տիրող գասակարգերի նպատակադրումները, շահերը: Մեր վերաբերմունքը գեղի այդ լեզվաբանական ուղղությունները պիտի լինի հարկավ բացառական, սակայն պետք ե խիստ քննադատորեն վերամշակելով վերցնել այդ «պատմական», «նատուրալիստական», «կուլ-

*) Հնդեվրոպարանության արամաբանական զարգացումը Գերմանիայում այժմ, ինչպես գիտենք, հանգեցրել է Փաղիստական տեսության՝ գերմանական վզդու և ռասուցի գետիշացմաբը Այդ «ազնվագրաբ» լեզվաբանության փշքանքներով կերպում են և հայ ազգայնամուները:

տուրապատմական», «յերիտաքերականական», «հոգեբանական», «սուցիուսիական» և այլն դպրոցների մի շաբք փաստական քննությունները, նրանց տեխնիկան: Մեծ գեր են խաղացել դրանք լեզվի հնչյունական կողմի ուսումնասիրության մեջ, ինչպես և նրա ձեւբանական կառուցվածքի, սելեքցիոն դասդասման և վերլուծման մեջ: Թույլ ե անշուշտ լեզվի «հոգեկան», «իմաստաբանական» (Семантика) և սոցիալական կողմերի քննությունը, այն ել կատարված իդեալիստական ակնոցներով:

Մատերիալիստական լեզվաբանության տեսակետից չկան արտօնյալ և գաղութային լեզուներ, ինչպես նաև չկան աղնիվ և ցած լեզուներ, ինչպես վոր տեսնում ենք հնդեվրոպական շատ լեզվաբանների մոտ: Ընդհակառակը, մենք ճնշման կապանքներից տպատում ենք մի շաբք լեզուներ, վորոնք ցարական Ռուսաստանում լեզու կոչվելու իրավունքն անգամ չունեյին, ինչպես «մարբ», «ուզմուլտ», «մորդվա», «կարել» և այլ լեզուները: Մենք վոչ միայն իրավահավասարության լեզվական քաղաքականություն ենք վարում, այլև ավելին, այդ ճնշված աղերսի լեզուները զարգացնում ենք մեր սոցիալիստական պայքարի համար. շեշտը դընում ենք ազգային ըստ ձեփե կուլտուրաների ծաղկման վրա (պըրեւետարական՝ ըստ բովանդակության): Դեռ ավելին, մենք ամիական ու աֆրիկական բնիկների մեջ լեզվի ազգային քաղաքականությունը գարձնում ենք կապիտալիզմի հենարանները խարիւելու միջոց, մենք այդ լեզվային ազգային քաղաքականությունը ծառայեցնում ենք սոցիալիստական հեղափոխության առորյացի համար: Վերջապես, ապագա միջազգային սոցիալիստական մի հայրենիքում մենք կարգավորելու յենք և միամսնական այդ միջազգային լեզվի ինդիբը:

Այդպիսով, ինչպես տեսնում ենք, լեզուն և լեզվաբանությունը մեզ համար ստանում են վոչ միայն տեսական առարկայի ընույթ, այլ նաև մեր հեղափոխական պրակտիկայի և հեռանկարների մի զենք: Ավելորդ չենք համարում այստեղ բերել մի բուրժուական լեզվագետի մտորումներն այդ գալիք հեղափոխության ու լեզվի մասին: Այդ լեզվաբանը դուրս ե յեկել Փրանսիական «սոցիոլոգիական» դպրոցից (Meillet-ի աշակերտն ե), վանդրիյս ազգանունով, վորն ասում ե, «Յեթե մենք պատկերացնենք մեզ քաղաքական կամ սոցիալական մի կատակեղում, վորը փշրե այն առաջանաները, վոր գոյություն ունեն այժմ մարդկային խմբավո-

բուժների մեջ, վորը (կատակլիզմը) խառնե յուր տակնուշը լրացի մեջ այլ և այլ դասակարգերի, ազգությունների, ուսաների ներկայացուցիչներին, վորը վոչչացնե մեր դարավոր քաղաքակրթությունը, փորպեսի տեղ հարթի այլ բազայի վրա հիմնված նոր քաղաքակրթության համար, միթե լեզուն առաջնոր չի յենթարկվի այդ կատաստրոֆային: Ի՞նչի կվերածվի այս ժամանակ մեր ֆիճանսիական լեզուն. — վոչ ավել, վոչ պակաս, քան վայրենիների մի լեզվի» (տես Հ. Դаниլով, Կրակի օշակի տարբերակություն: Կարծում ենք, վոր կոմմինարքիաներն ավելորդ են, քանի վոր կան յերկու աշխարհներ, յերկու հակամերժ տեսակետներ, իսկ պատմական պրակտիկան Խորհրդային Միության մեջ ընալ չհաստատեց Վանդրիյեների տեսակետը. հեղափոխության հետևանքով մեղ մոտ լեզուները զարգացն և ծաղկեցին:

Լեզուն և լեզվաբանությունն ունեն մեզ համար և առորյա սոցիալիստական շինարարության համար մեծ նշանակություն: Մենք պիտի ստեղծենք պրոլետարիական գրական լեզու, մենք լեզուն պիտի յուր հին անմատչելի դիրքերից իջեցնենք մասսաների սպասարկմանը, զրանով ընալ այդ լեզուն փուլքարիզացիայի չենթարկելով: Յեթե ընդհանուր միջազգային բառերն ավելի յեն գործածական ու մասսաներին հասկանալի, զրանք պիտի վորդեզվեն: Լեզվաստեղծման այն տեսդենցները, վոր նկատվում են լեզվի զարգացման դինամիկայի մեջ և ունեն մասսայական բնույթ և յուրացում — այդ ավելի շուտ պիտի մանեն պրոլետարիական «գլուրական» լեզվի արևենալը, քան շատ հին բառեր ու վոճեր, վորոնք խոսողի գիտակցության և կենդանի աշխարհայցքին վոչինչ չեն ասում:

Լեզվաբանությունը, իրեն ընդհանուր առարկա, ունի յուր գործադրական նշանակությունը և մեր դպրոցական պրակտիկայի ասպարիզում, մայրենի կամ ոտար լեզվի ուսուցման տեսակետից: Ա. Տոմանի ասելով՝ «Нечего говорить, напр. о том, что преподаватель языка, не изучивший основательно известных отделов языковедения, может преподавать лишь так, как может лечить знахарь, не изучивший анатомии, физиологии, фармакологии и пр.» (տես Կրակ Общее языковедение, Одесса, 1910, եջ 3): [1]

Լեզվաբանությունը յուր ընդհանուր նշանակությամբ մեծ ձառնայություններ և մատուցում նաև այլքայլ գիտությունների

սոցիոլոգիային, պատմությանը, հնագիտությանը, իրավաբանությանը, մարդաբանությանը, ազգագրությանը և այլն և այլն: Դիցուք թե լեզվաբաննը պարզում է, վոր մեր հայոց «օրիորդ», «օրեար» կամ «օրեանք» (տերեր) և «օրեն ե» (վայել ե, սկզբում — տիրոջական ե) բառերն առաջ են յեկել մի հնագույն օրի արմատից, վոր նշանակել ե «տեր»: այստեղ սոցիոլոգը յուր տեսակետով կը մոտենա, իրեն գասակարգային բառաստեղծագործության փաստերի, պատմաբանը՝ յուր տեսակետով, իրեն ուրարտական (նախահայկական) ժառանգությունն, իրավաբանը՝ յուր տեսակետով (օրենք = այն ինչ վերաբերում է տիրոջ) և այլն*:

Լեզվի մեջ կատարվելիք «Հնեաբանական» այդ պեղումները մեզ կարող են տանել մի այնպիսի շրջան, յերբ մինչև անգամ նյութական կուլտուրայի մնացորդները կամ չկան և կամ քիչ ըան են ասում: Լեզվաբանությունը լեզվի այդ հնագույն շերտերի մեջ յերեան և հանում մարդուս հնագույն աշխարհայցքը, ինչպես, որինակ, կոսմոգոնիական — տոտեմական շրջանից: Լեզվի տարրերի խաչակրումը, յերբ ցեղերի կամ եթոսաների գոյացման ժամանակ մի քանի լեզվական միավորներից կամ սխստեներից ստացվում է նոր սինթետիզացիա, վկայում և սկզբնական արտադրական կողմելումների նույն խաչակրումն պրոցեսին յենթարկվելը: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, լեզվի և իրեն կրողի սոցիալ-պատմական ուսումնասիրությունն անանջատ չեն իրարից. և հիրավի, լեզվաբանությունը մեծապես շահած կլիներ յուր նվաճումների ձգգրիտ լինելու մեջ, յեթե համընթաց լիներ և՛ պատմա-սոցիալական դիացիպինների մասնակցությունը, մանավանդ վոր գասակարգերի գոյությամբ և պայմանավորված և՛ դաստիարակային լեզուն. խել վերջինս մեղ համար, զեթ լեզվի պատմական ետապներում, փաստ և և հաստատվում է լեզվի առորյայով, նրա պատմական ուր փուլերով:

Այժմ գանք այն հարցին, թե լեզվի ուսումնասիրությունն

* Կամ թե հայոց լեզվում ունենք «սարգե», «ձիր» (վորից՝ ձրի, ինչպես ուսուց ձար—ձարու), «զատարագ», «ընծա», «ձոն», «նվեր» բառերը, վորոնք «նվեր» են նշանակում. այստեղ նմանապես տարբեր ընազումների տեսաբանը յուր վերաբերմունքը կցուցաբերի. սոցիոլոգի համար շեշտ զրվելու յերանց գասակարգային դրյացման վրա, այն ե՛ մին դասակարգը և ինչ տեսակի նվեր և մատուցել պատմաբանի համար հետաքրքիր և նաև այդ բառերի ծագումը, որինակ հարևան լեզուներից փոխառած լինելը և այլն («պարգի» և «նվեր» պարսկերեն են):

Բնչ մեթոդներով և տարվել, և լեզվի բնչ առանձին խնդիրներ կարող են այդտեղ քննության առնվել ամբողջապես թե մասնակի:

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՑԻՓԼԻՆԵՐԸ

Լեզուն կարելի յէ ուսումնասիրել թէ ընդհանրապես, այս պես ասած ընդհանուր կերպով և թէ այս կամ այն լեզուն վերցրած առանձին: Լեզվի ընդհանուր ուսումնասիրության կոնցեպցիան բնական է, վոր յուր նախնական ձևակորման շրջանում ծնունդ պիտի առնի կոնկրետ լեզուների ուսումնասիրությունից: Այդ վերջին ուսումնասիրությունը, այսինքն՝ վերցրած միայն կոնկրետ լեզուները, կարող են լինել թէ պատմական հաջորդութանության մեջ (դիախրոնիկ) և թէ մի փուլի մեջ (սիխրոնիկ) թէ ընդհանուր նկարագրական և թէ դրանից յելած՝ պրակտիկ-գործնական, վորն ե սովորական դարձողական նորմատիվ քերականությունը: Կոնկրետ լեզվի ընդհանրապես ուսումնասիրությունը, այսինքն՝ աչքաթող անելով դրա մանկավարժական և այլ գրվածքը, շատ նման ե այլ փորձնական՝ եմպիրիկ գիտություններին, ինչպես են, որինակ՝ ֆիզիկան, քնագիտությունը:

Մակայն, այդ նկարագրական կոնկրետ ուսումնասիրությունը վոչ միայն յուր ընդհանուր բնույթով և ծագալով տարրերով և այդ տվյալ լեզվի պրակտիկ քերականությունից*, այլև յուր մեջ պիտի արտացոլե մարդկային լեզվի ընդհանուր կողմերը, պիտի ցույց տա այդ մասնավոր կոնկրետի մեջ ընդհանուր լեզվականը, վորովնետե վոչ միայն կա այդ ուրույն մի լեզվի բնագավառը, այլ դրա մեջ՝ ընդհանուրը, վոչ միայն այդ մասնավոր մի լեզվի նկարագրությամբ մենք շեշտում ու դրսեվորում ենք «ինքնուրույնը», «տարրերությունները», այլև ընդհանուրը: Այդպիսով, ինչպես տեսնում ենք, մենք «ընդհանուր լեզվաբանությունը» և մի վորեե կոնկրետ լեզվի նկարագրական ուսումնասիրությունը (ստատիկ թէ դիմամիկ ասպեկտներով) չենք դարձնում միմյանց հակամերժ, ինչպես այդ արվում է հայտնի ֆրանսիացի լեզվաբան, սոցիոլոգիական դպրոցի ռահվիրա՝ Ֆերդինանդ

* Տվյալ լեզվի մի կոնկրետ փուլի ակադեմիական (գիտական) նկարագրությունը տալիս ե այդ լեզվի և նորմատիվ յերեսութների նկարագրությունը և նոր սկզբող կամ սապմասփորփող, ի մեջ առնելով և՛ լեզվի ըստուկտորան («քերականությունը») և՛ լեքսիկան: Եյութի դասավորության մեջ են այդ դիմացիալինան աղատ ե: Այլ և պրակտիկ, մանկավարժական թեքումով քերականությունը:

գե-Սոսյուրի կողմից (Ferdinand de Saussure) յուր սինխրոնիկ և դիախրոնիկ լեզվաբանությունների մեջ: Այդպիսի ուսումնասիրությունը, այսինքն՝ լեզվի ընդհանուր առումով («ընդհանուր լեզվաբանություն») կամ նրա կոնկրետ՝ մասնավորը, մեզ մոտ միայն պիտի իրար լրացնեն, մեկը մյուսով պայմանավորվեն և արգասավորվեն: Այստեղ կա վոչ միայն այդ դիմացիալինաների հակադրություններ, այլև դրանց միասնությունը:

Վերցնենք այժմ կոնկրետ լեզվի ուսումնասիրության բնագավառը և մեթոդները: Ինչպես վերևում արդեն շեշտվեց, կա կոնկրետ վորեե լեզվի սովորական գործածական (գլոբոցական) քերականություն, վորը վոչ այլ ինչ է, քան նույն լեզվի լոկ ըստուկտուր մասի ուսումնասիրությունը՝ նորմատիվ որինաչափություններով և մանկավարժական նպատակներով: Մենք խոսելու յենք այդ կոնկրետ լեզվի ընդհանուր գիտական նկարագրության մասին: Այստեղ մենք կարող ենք ուսումնասիրել կամ դրա հընչունական մասը, կամ բառաձեերի տեսակները (բառափոխություն, «թեքում»), կամ բառակազմությը (словообразование), կամ բառերի գասավորության յեղանակը, կամ բառամիթերքը և յուր նշանակություններով գասպառումը, կամ լեզվի իմաստական՝ նշանակողական կողմը: Կարող ենք ուսումնասիրել և այդ բոլորը միասին: Հետեւապես կատացիւն կամ նկարագրական «հայունաբանություն» (фонетика), կամ «ձեւաբանություն» (морфология), կամ «բառակազմություն» (словообразование), կամ «շարահյուսություն» (синтаксис), կամ «լեքսիկոլոգիա», կամ «իմաստաբանություն» (семантика, семасиология):

Ինչպես ասացինք, կարելի յէ և այդ բոլոր կողմերը միացյալ ձեռվ ուսումնասիրել: Յեվ այդ վերջին գեպօւմ մենք կուննանք մի վորեե կոնկրետ լեզվի նկարագրական գիտական քերականությունը*:

Բայց կոնկրետ լեզուն կարելի յէ վերցնել ուսումնասիրելու վոչ միայն մի տվյալ ժամանակամիջոցում, վոչ միայն, այսպես ասած, յուր ստատիկ մի վիճակում, այլև յուր անցած փուլերի մեջ, այսինքն՝ պատմականորեն: Այստեղ արդեն նկարագրական ուսումնասիրությունն ընդգրկում է ավելի մեծ շրջան, այն և՝

* Կոնկրետ լեզվի փուլի գիտական այդ ամբողջական ուսումնասիրությունը մեթոդոլոգիապես իրեն ավելի պիտի արդարացնի, քանի վոր լեզվի բոլոր քերականությունները միացյալ են, միասնաբար են հանդես գալիս, միանց կապակցությամբ են լավ հասկացվում և պայմանավորվում:

կոնկրետ լեզուն յուր պատմականորեն հայտնի բոլոր ժամանակակիցները սպառում են այդ գործությունը: Յեթե այդ կոնկրետ լեզվի մի ավյալ ուսումնասիրությունն ենք կատարում, մենք այդտեղ լեզվական փաստերը կամ յերևոյթները ըստ իրենց տեսակների կամ հատկանշների ընտրում և գասդառում ենք, սելեքտիչա յենք կատարում, պահելով դրանց մեջ վորեւ հաջորդականություն: Բայց յեթե այդ լեզուն վերցնում ենք յուր զարգացման պատմական շրջանների մեջ, մենք արդեն ամեն մի լեզվական պատկանելիություն, ամեն մի իրակություն (փաստ) պիտի համեմատենք նախորդ և հաջորդ ձեռքի մեջ և, գտնելով հետզետե դրանց հնագույնը, վորքան թույլ և տալիս այդ լեզվից մնացած պատմական մատերիալը, մենք մոտավորապես ստանում ենք ավյալ լեզվի հնագույն փուլի պատկերը յուր հետագա զարգացումով, կամ ընդհակառակը՝ նոր փուլը յուր նախորդ և տապներով: Այս կիրանի այդ լեզվի «պատմական ուսումնասիրությունը» կամ ինչպես ասում են «պատմական քերականությունը»: Բայց կարելի յէ կոնկրետ լեզվի պատմական ուսումնասիրությունը շարունակել ավելի հնագույն ժամանակաշրջանների մեջ: Այստեղ թեպետ այդ լեզուն պահած չունի գրավոր հին ձեւը, բայց այլ «ազգակից» լեզուների սկզբանը մենք, համեմատելով պատմական այդ լեզվի ձեւերն ազգակից այլ լեզուների նման ձեւերի հետ, կարող ենք մոտավորապես վերականգնել ավելի հին տեսակները: Որինակը մեր ժողովրդական «ախալեր» (=երանակ) ձեւն ատացվել է «ազգիեր», ոս ել «ազբայր» հնագույն պատմական ժողովրդական ձեւից (հմմտ. զբարարի «եղբայր» ձեւը): Բայց մյուս ազգակից լեզուների ոգնությամբ մենք այդ «ազբայր»-ը ձեափոխած ենք համարում „l bayr“, ոս ել „blayr“ || „brayr“, իսկ վերջնաս՝ bhrater (=երան) նախնական և հին ձեւից: Այսպես կարող ենք անել վոչ միայն մի բառի նկատմամբ, վոչ միայն կոնկրետ լեզվի բառամթերքի՝ լեքսիկոնի, այլև լեզվի մյուս բոլոր տարրերի նկատմամբ:

Այստեղ արդեն մենք թեզվակոխում ենք կոնկրետ լեզվի «նախապատմական» շրջանը: Ամեն պարագայում, ինչպես տեսանք, մեթոդը համեմատական եր և հետևապես ստացվում են ավյալ կոնկրետ լեզվի «պատմական քերականություն» և «համեմատական քերականություն»: Այդ բաժանումը, հարկավ, պայմանական ե. յերկուստեք տեղի ունի այդ ավյալ լեզվի պատմական ուսումնասիրությունը համեմատական մեթոդով. միայն մի դեպ-

քում՝ այդ ուսումնասիրությունը կամպ և առնում յեղած զբագոր հիշատակարանների հնագույն շրջանում, սկսած յուր զարգացման նորագություն ըլջանից և ստացվում և «պատմական քերականություն», իսկ մյուս գեղգում՝ այդ պատմահամեմատական ուսումնասիրությունը, չունենալով այդ տվյալ լեզվի ավելի հին զբագոր աղբյուրներ, հենքում և «ազգակից» պատմական և հին լեզվունների նման ձեւերի վրա և համեմատական ուսումնասիրությունից հանում լեզվի ավելի հին «նախապատմական» ձեւեր, այդ ինարկե անկատար պիտի լինի:

Այս պատմական և համեմատական ուսումնասիրությունները կարելի յէ կատարել թե կոնկրետ լեզվի ամբողջության նկատմամբ և թե նրա վորոշ մասերի: Յեկ յեթե այդ վերջին մոտեցումն ունենանք, ապա կստանանք, գիցուք թե «պատմական հընչյունաբանություն» (հայերենի, վրացերենի, ռուսերենի...) «պատմական ձեւաբանություն» և այն և այն, ինչպես և «համեմատական հնչյունաբանություն» և այն:

Յերբ բառերի, կամ ավելի ճիշտ՝ բառարմատների ծագումն ու հետագա ձեւերն են քննում, այդ կոչվում և բառերի «ստուգաբանություն» կամ «ուսումնարեն լեզվով ասած՝ «ետիմոլոգիա» (etymos logos „ИСТИННОЕ СЛОВО“). Բայց պրակաիկ գլոբոցական քերականությունների մեջ այդ «ստուգաբանության» անվան տակ յերբեմն սիսամմարմ վերցնում են հնչյունաբանությունն ու ձեւաբանությունը:

Համեմատական քերականությունն այժմ յեվրոպական լեզվաբանության հիմքն ու գլուխ գործոցն ե: Կարելի յէ հաստատասեր, վոր «հնդեվրոպական լեզուների համեմատական քերականությամբ» և ծնունդ առնում և ընդհանրապես գիտական լեզվաբանությունը: Եյստեղ տեսդինց կա գտնել վորոշ խմբի լեզուների հնագույն ձեւը, աստիճանը. զբանց պատմական համեմատականության մասին, զբանց որինաչափական փոխհարաբերությունների մասին, զբանց ծագման մասին մի ընդհանրությունից և այն: Այդ ձեւով վերստեղծում են, որինակ, սեմական լեզուների «նախալեզվ», այսինքն այն սկզբանական գրությունը, վորի հաջորդական և հետագա ձեսփոխություններն են ասորաբարելական, արաբական, քանանեական-հրեյական-սյուրիական (ասորական) լեզուները: Նմանապես, հիմնվելով ուսուերենի, լեհերենի, բոլգարերենի, սերբերենի, չեխերենի և այլ սլավոնական լեզուների պատմական ուսումնա-

սիրությունների վրա, դրանք բոլորը հանում են մի «նախասլավոնական» մայր լեզվից, վոր յեղած պիտի լիներ նախապատմական շրջանում և ծնունդ տված այդ պատմական լեզուներին*:

Ինչպես ասացինք, առաջին և ամենամեծ գյուտն եր «հընդեմական» կոչված լեզուների հայտնաբերումն ու դրանց համեմատական ուսումնասիրությունը՝ «համեմատական քերականությունը»: Դրա հիմնադիրն ե գերմանացի լեզվագետ Թրանց Բոպպը, վորը 1833 թվին հրատարակեց յուր համեմատական այդ քերականությունը: Հետագայում այդ գարոցն** ավելի ու ավելի զարգացավ, կատարելագործվեց և դարձավ ընդհանրապես լեզվի գիտության բովը: Հնդեվրոպաբանությունը (Индоевропеистика) հետագայում շատ ձևափոխությունների յենթարկվեց, ունենալով յուր «յերիտասարդ քերականների» գարոցը, «հոգերանա-

* Ինչպես տեսնում ենք, համեմատական մեթոդը («կոմպարատիվիզմը») վոր միայն թերի յե, ձևական ե, չի պայմանավորվում լեզվի սատմա-հասարակական ֆակտորներով և դրանցով բացառովում, այլև միմիայն նպատակդրված և ընդհանրությունների տեսական վերականգնումով՝ վերականգնել նաև սկզբանական դրանց աղբյուրը—մայր լեզուն: Լեզուների տարբերությամբ այդ մեթոդը գրեթե չեր զբաղվում, վորովհետեւ իրեն նպատակին խանգարում եր: Իսկ ընդհանրությունների այլ բացարություն նրանք ի վիճակի չեն տալու, ինչպես և տարբերությունների բացարությունը:

** Հնդեվրոպական լեզվաբանության այդ առաջին փուլի մասին Ֆր. Ենգելը տվել է դրական կարծիք, շեշտելով այդ գարոցի պատմական մեթոդի առավելությունը, նրա առաջաերեւ լինելը: Ենգելը ասում ե. «Господин Дюлинг, изгнав из своего учебного плана всю современную историческую грамматику, оставляет для обучения языкам в своей школе только старомодную, выкроенную в стиле древней классической филологии, техническую грамматику, со всей ее казуистикой и произвольностью, порождаемыми отсутствием в ней исторического основания... Очевидно, нам приходится иметь дело с филологом, никогда не слыхавшим об историческом языкознании, так сильно и плодотворно развившемся в последние 60 лет, и поэтому отыскивающем “современные возвышенные образовательные элементы” языкознания не у Боппа, Гrimma и Дица, но у блаженной памяти Гейзе и Беккера» (Энгельс, Антидюлинг, Москва 1932, № 233; Հնդգծումը մերն ե. Թ. Դ.): [2] Ն. Մատը անհաշտելի յե համարում համեմատական լեզվաբանությունը յուր տեսության հետ («По этапам развития яфет. теории». Предисловие, 1926 г.) և ընդհանրապես բուրժուական անցյալի ժառանգականության ոգտագործման խնդիրը նրա մոտ կարծեն թե բացասկում ե, յելակետ ընդուներով միայն իրեն տվյալները, այն ինչ բուրժուական այդ լեզվաբանությունն անդամ շատ նվաճութեր ե տվել, ինչպես շեշտել ե Ենգելը:

կան» դպրոցը, «սոցիոլոգիական» դպրոցը և այն: Սակայն, հիմնականում այդ հնդեվրոպաբանությունը ծնունդ ե առնում և ծաղկում կապիտալիզմի հետ և անհրաժեշտորեն դառնում նրա իղձերի և տեսչանքների արտահայտիչը: Այդ լեզվաբանական ուղղությունն իշխում ե այժմ և սեմագետների, և թյուրքագետների, և կովկասագետների, և այլոց մոտ: Տօն տվողը նա յե յուր սնախահայրենիքով, թեպետ շատերը հենց իրենցից սկսում են թերահավատ լինել և դեպի այդ նախալեզուաներն ու նախահայրենիքները և դեպի համեմատական մեթոդի այդ ձևական կիրառումը: Մարքսիստ-մատերիալիստ լեզվաբանները իրենց հերթին դեռ չեն պատասխանել լեզվական մի շարք յերեսույթների պատճառականությանը: որինակ, ժխտելով նախալեզուաները, նրանք դեռ չեն բացատրել այն ընդհանրությունները (բառարմատ և ձևեր), վոր կան մի շարք «ազգակից» լեզուների մեջ: Հիմնական ազդակը վոմանց կողմից համարվում ե «խաչավորումը» (скреещение), իբրև սկզբնական արտադրական միավորումների (կոլեկտիվների) խաչավորման արդյունքը: Բայց սա ել ընդհանրությունը կրում և լեզվի շատ կողմից դեռ չեն լուսաբանված, շատ բան ել դեռ չի կոնկրետացված, լեզվաստեղծ պատվանդան սուբստրատը, այն ե՝ արտադրական պրոցեսը յուր հասարակական դինամիկ հարաբերություններով դեռ կոնկրետ չի լուսաբանված լեզուների պատմական վորոշ դարաշրջանների տեսակետից: Իլ չենք ասում այդ լեզուների նախնական՝ նախապատմական ձևերի համար: Պատմականորեն յեթե կա լեզվի հենքնազարդացում և ժառանգականություն, կա և լեզվի հեղափոխություն, լեզուների սինթետիզացիա (խաչավորում), կա և լեզվի դասակարգային շերտավորում՝ դասակարգային լեզուներ, հասարակական հարաբերություններից յելած և կազմակերպված հոգեբանություն, իբրև հասարակ միջնորդավորող գործոն, վորն անմիջապես յուր կնիքն ե զնում նախորդ լեզվական ժառանգության վրա, յուրացնելով կերպարանափոխում այդ վերջինը:

Ահա յենելով հենց այս ընդհանրությունից և ոգտագործելով կոնկրետ լեզուների պատմական թե ստատիկ նկագրությունները, ծնունդ ե առնում լեզվի մի նոր գիտություն՝ ընդհանրությունը լեզվաբանություն: Այդ դիսցիլինան կոչվել ե կամ հենց այդպիս, այսինքն ընդհանրություն (общее языковедение), կամ լինգվիստիկա (лингвистика) լատիներեն Շլինգվա (lingua) «լեզու» բառից, կամ «լեզվի տեսություն», «լեզվի

փիլիսոփայություն», կամ ավելի շուտ «լեզվաբանության ներածություն» (Введение в языковедение): Ընդհանուր լեզվաբանությունը յուր նյութը վերցնում է կոնկրետ լեզուների պատճառամեմատական կամ նկարագրական ուսումնասիրություններից՝ հիմնվում եւ դրանց վրա և այդ եմպիրիկ գիտությունները փոխարինում եւ սիստեմատիկ գոկտրինայով։ Այդպիսով, ինչպես տեսնում ենք, ընդհանուր լեզվաբանությունը ուսումնասիրում եւ ընդհանրապես մարդկային լեզուն և վոչ թե կոնկրետ այս կամ այն լեզուն, լեզուն այդտեղ վերցվում եւ արստրակա գրությամբ, ուսումնասիրությամբ, սակայն, յենելով կոնկրետներից, քանի վոր չկա արստրակարը, այլ կան պատճառական լեզուներ։ Այս նոր գիտակալինայի համար բոլոր լեզուներն ել կարենը են, սկսած կուլտուրապես ամենացածր մակարդակի վրա կանգնած ցեղերի (բուշմենների, հոտենտոտների, նեղրիտոսների) լեզուներից մինչև «ամենակատարյալ» յելքուղականը։ Դեռ ավելին, պրիմիտիվ կամ վայրենի ցեղերինը ավելի կարենը կարող եւ լինել նայած վայրենին եւ շոշափվում։

Կարելի յեւ վերցնել վոչ միայն «ամարդկային լեզուն» ընդհանրապես, այլ նրա վորոշ մասերը. որինակ, կարելի յեւ ուսումնասիրել միայն հնչյունաբանությունը կամ միայն ձեւաբանությունը և այլն։ Այս գեպքում, ինարկե, պիտի ոգտագործվին աշխարհիս բոլոր լեզուները, յեթե դրանց պատճառական և նկարագրական կոնկրետ ուսումնասիրությունները կան։ Բայց այս մասնագրված ուսումնասիրությունները լեզվի հասարակական արժեքավորման տեսակետից անբավարար են։

Ընդհանուր լեզվաբանությանը յենթակա յեւ, իրեւ ուսումնասիրության որյեկտ, մարդկային լեզվի տարրերի (resp. ֆակտուրայի) ուսմունքը, և՛ նշարագրորեն և՛ ծագմամբ ու դարպացման պրոցեսով։ Այդպես են քննվելու, որինակ, լեզվի հնչյունները, իրենց նկարագրությամբ սկսած հոտենտոտների կամ բուշմենների «գլուխցներից» (ներշնչական հնչյուններից) մինչև մեր այժմյան հնչյունները. դրանց ֆիզիոլոգիան և ակուստիկան, դրանց համագրումը արտասանությամբ և դրանց վոխաղղեցությունը, դրանց պատճառական զարգացման դինամիկան ու փոփոխությունը, դրանց պատճառական զարգացման դինամիկան ու փոփոխությունը, վերջիններիս հիմնական դրդապատճառները, սոցիալ-սուստեսական ֆակտորը, գասակարգային «արտասանություն» և այլն և այլն։ Նման վերաբերմունք պիտի լինի հարկավ և՛ ձեւաբանության, և՛ իմաստաբանության, և՛ բառաստեղծման վերաբերյալ։

Բայց ընդհանուր լեզվաբանությունը վոչ միայն սահմանափակվում է լեզվի, այսպես ասած, ներքին աշխարհով, նրա ֆիզիկո-ֆիզիոլոգիական, հոգեկան և սոցիալական կողմերով, այդ գիտությունն զբաղվում է և լեզվի ծագման խնդրով, լեզվական իրակությունների և հասարակական-տնտեսական յերևույթների փոխհարաբերությամբ, լեզվական ընդհանուր որբնաշափությունների խնդրով, լեզվի և մտածողության փոխհարաբերությամբ, լեզվի և հոգեբանության փոխհարաբերության խնդրով, լեզուների խաչավորումով, լեզվի դիալեկտիկայով, լեզվի և գրի փոխհարաբերությամբ և այլն, և այլն։

Ընդհանուր լեզվաբանությունը կամ ինչպես այլ կերպ նաև ասում են «լեզվի գիտությունը», (наука о языке, лингвистика) ուսումնասիրում և վերոհիշյալ լեզվական իրակություններն ու խնդիրները միասին վերցրած։ Բայց ընդհանուր գրամաքի տեսակետից, այսինքն վոչ կոնկրետ լեզվի նկարագրությամբ, մենք կարող ենք, ինչպես արդեն ասվել ե, ուսումնասիրել և առանձին այդ լեզվական յերևույթները։ Սակայն այդ մասնավոր հետազոտություններն անգամ այնափ մեզ համար ընդունելի պիտի մենք (իրենց ծավալով ու մեթոդոլոգիայով), վորչափ գրանք նըսպասում են լեզվի մյուս իրակությունների աղերսակցված ճանաչողության և բնութագրման։ Որինակ, հնչյունաբանությունը առանձին ուսումնասիրում են՝ ֆիզիոլոգիապես ակուստիկայի (ֆիզիկայի) տվյալներով, հնչյունները գծագրում են զանազան գործիքներով՝ կազմելով դիագրամներ, և այլն. ստեղծում են այսպես կոչված «փորձնական» (եքսպերիմենտալ) հնչյունաբանություն։ Ինչ խոսք, վոր ընդհանուր գիտակալինայի մեջ՝ ընդհանուր լեզվաբանության մեջ՝ այդ փորձնական հնչյունաբանության մտցընելը ավելորդ ե, թեսպես վոմանք այդ արել են մասսամբ, ինչպես Ա. Տոմսոնը։ Նմանապես արտասանության անատոմիական և ֆիզիոլոգիական բարդ մեքենան յուր կենարոններով ուղեղում և այլն։ Այդ մասնավոր թեքմամբ պիտի հետաքրքրվեն թերեւ ըշնախումները և գուցե բժիշկները, յերբ հարց եւ առաջ գալիս, զիցուք թե, բուժել թլվատությունը կամ կակազությունը. սակայն ընդհանուր լեզվաբանների համար այդ լեզվի մասնավոր կողմերի ընդհանուրը պիտի շաղկապվի լեզվի մյուս տարրերի դրսեւքորման ու բացատրության հետ։ Այդ նույն կոնցեպցիան, ինչ-

պես ասվել է, մենք ընդհանուր լեզվաբանություն կազմելու տեսակետից ունեյինք և մասնավոր կոնկրետ լեզուների տվյալների նկատմամբ, յերբ պատմականորեն ի հայտ յեկած այդ բոլոր մասնակի որյեկտները ոգտագործվում են մեր ընդհանուր այս գոկտրինայի համար: Բայց այդ կոնկրետ լեզուներն ու իրենց պատմական խնդիրները մեղ համար ակտուալ են գառնում, յերբ իրենց մեջ արտացոլում են ընդհանուրը, ապա թե վոչ՝ շաղկապումը կամ կլիներ անհնարին կամ մեխանիկական:

II

ԸՆԴԱՆՈՒՐ ՄԱՍ

ՀԵԶՈՒ—ԽՈՍՔ—ՄԻԾՔ. ԱՐՏԱՍԱՆՎԱԾՔԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Խոսելով լեզվի մասին, մենք այստեղ առայժմ ստումանափակվելու յենք միայն նրա Փունկցիոնալ նկարագրությամբ, թողնելով գրուտոգոնիական ընդհանուր հարցերը մի այլ թեմայի, ուր տրվելու յե լեզվի ծագումը, զարգացման պրոցեսը և այն:

Վեզում միշտ չի յեղել. նա յուր ծնունդն առնում ե մարդուս դեռ կիսավայրենի վիճակում, հետագայում կազմակերպվելով հասարակական աշխատանքի պրոցեսից կամ պրոցեսի հետ չետեապես լեզուն պատմական կատեգորիա յե, մարդու կողմից ձեռք բերած մի նվաճում, պատմակուլուրական մի բարդ արվեստ, վերնաշենքային մի բարձր կուլտուրա: Լեզուն, ուրեմն, պատմահասարակական յերկույթ ե:

Փոքր հասակից այժմ մարդս յուրացնում ե այդ լեզուն յուր շրջապատից. նշանակում ե այդ լեզուն ընազդորեն և նրան հատուկ չի յեղել վոչ ել հատուկ ե յեղել նրա ցեղին կամ ուսույին: Յերեխան վո՞ր շրջապատն ընկնի, այն լեզուն ել կյուրացնի, թեպետ այս գեպքում ևս ժառանգականության ունակությունները վորոշ չափով դեր կարող են խաղալ: Որինակ արաբական ուրույն սիստեմի լեզվի ժառանգականությունն զգացվել ե այն գեպքում, յերբ արաբ փոքրիկ չխսող յերեխային տարել են Ֆրանսիա և Փրանսերեն սովորեցրել: Յերեխան, սակայն, նույն տեմպով և մանավանդ նույն կատարելիությամբ չի յուրացրել այդ ֆրանսերենը, այս պատմական փորձը վերագրում են լեզվական սիստեմի մասնակիորեն ժառանգական ունակություն ստանալուն, թեպետ այդ ևս պրոբլեմատիկ ե և այսպես կարող ե լինել միայն մի սերունդի կամ ավելի ճիշտ՝ վորոշ տարիքների համար: Համենայն դեպք, լեզվի այս կամ այն տիպը կամ տեսակը, չլինելով բնապատմական որդանիզմ, անհրաժեշտորեն չի կապված այս կամ այն



ուստայի կամ ցեղի հետ։ Պատմությունը մեղ շատ ու շատ դեպքեր և տալիս, յերբ ցեղերը և ազգերն իրենց լեզուները փոխում են, յուրացնում են այլ ցեղի կամ ազգի լեզու։ որինակ բոլգարները թյուրքական ցեղից են, բայց յուրացըել են սլավոնական մի բարբառ, կամ Կովկասի (Թեմիր-խան-Շուրայի մոտ) հրեաները, գաղթած լինելով միջնադարյան Պարսկաստանից, բերել են այնտեղից և հին ձեր պարսկերենը, վորը յուրացըել եյին նրանք դեռ Պարսկաստանում, և այն և այն։

Հնդկանուր լեզվաբանության համար բնականորեն բոլոր լեզուները համարժեք և կարեոր են։ Մենք համամիտ ենք Ալեքսանդր Տոմանի հետ, յերբ նա ասում է. — „Все языки и говоры, даже самых диких и некультурных народов, имеют одинаковую ценность для науки; последние во всяком случае более подходящие об'екты научного исследования, чем литературные языки образованных народов, которые для лингвиста то же, что оранжерейные растения для ботаника“ [3] (տես նրա—Общее языковедение, Одесса. 1910, եջ 4): Այսուղ զբական լեզու» ասելով հասկացվում ե մասսամբ արվեստականը, ինտելիցիանայի կողմից ձեսփոխածը, կոկածը. ավելի ևս կարելի յե այդ տողերը վերագրել միջազգային արվեստական լեզուներին (ևսպերանտո, վրապյուկ և այլն): Յերկրորդ լեզու ասելով, մենք այս գեղքում (այսինքն՝ լեզվաբանության համար իբրև կարևորություն) պիտի արժեքավորենք նաև ամեն մի բարբառ, յենթարբարառ կամ խոսվածք (ГОВОР), վորովհետև գրանք ել իրենց հերթին պարզաբանում են լեզվական սիստեմի գորոշ կարևոր մոմենտներ, հատկապես մամսավորի և ընդհանուրի փոխհարաբերության ինդրում։ Իսկ առանց այդ բոլորի մեղ համար պարզ չի լինի, թե ինչ ե լեզու։

Այժմ գանք հենց այդ զիշավոր հարցին, ի՞նչ ե լեզու։
Մարքսը լեզուն համարում ե «ուեալ գիտակցություն» („реч-

* Դեռ հնագույն շրջանում, յերբ տոհմերն ու ցեղերը եքուգամփայի (այլ ցեղից կին վերցնելը), առեւրական փոխանակության և պատերազմական բաղադրաման հետեւանքով լեզվական նորանոր հարաբերություններ և փոփոխություններ եյին ստեղծում, արդեն այդ ժամանակից իսկ լեզուների պատմական նորագոյացումները կուեկտիվների հասարակական (և վոչ սասայական) փունկցիայից եյին սերվում։

альное сознание“)*, վորով պարզաբանվում և լեզվի սպեցիֆիկում, իբրև վերնաշենքի։ Իսկ քաղաքանատեսության քննադատության յուր ներածականում 1859 թվին նա ասում եր. — «Լեզվի զարգացումը առանց միասին ապրող և միմյանց հետ խոսող մարդկանց — անմտություն ե»։ Լեզվի ծագման մասին գրել ե Ենգելսը յուր «Աշխատանքի գերը կապկի մարդկայնացման պրոցեսում» բրոցյուրում. լեզվի զարգացման մասին ասել ե նաև Մարքսը (տես մեղ մոտ «Լեզվի ծագումը»):

Լեզվաբանների կողմից տրված բնորոշումից բերենք յերկուսը. Առաջինը Գարելինցի, Կնառուերի, Տոմանի և այլոց բնորոշումն ե, վորն ասում է. «Լեզուն տարրորոշված (расчленененный) մտքի հաղորդման միջոցն ե հնչյունների միջոցով»։ Այստեղ խոսքի «հնչյունները» շեշտվում են այն տեսակետից, վոր միտքը կարելի յե հաղորդել նաև այլ միջոցներով, որինակ, միմիկայով (յերեսի մկանունքների շարժումով), պանտոմիմայով (ձեռքի և մարմիի շարժումներով), արտաքին առարկաներով կամ նվազարաններով, ինչպես այդ անում են, իբրև խաղ, Հյուսիսային Ամերիկայի բնիկները («հնդիկները») կամ Աֆրիկայի նեղըերը. Բայց, իհարկե, նշանացի այդ խոսակցությունը «հնչյուն-լեզվին» և վերջինս նրբություններին չի կարող փոխարինել թեպետ այդ նըշանացի «լեզվով» յերեսն վերացական գաղափարներ ել են արտահայտում։ Գծային ժեստերի այդ գերը առաջին սննդամ ուժեղ կերպով շեշտել ե վունդտը։ Ի միջի այլոց, այդ նշանացի կամ «ձեռք-լեզու» (կամ գծային լեզուն) մի ժամանակ որդանական նախորդությունն ե յեղել հնչական լեզվի և իրեն մեջ զարգացրել ե այդ վերջինը, ինչպես կարծում ե Ն. Մառը. Մեր ժողովրդի մեջ (հայերի մեջ) մի ժամանակ ունեյինք կանանց մի դաս—նորահարսեր, վորոնք իրենց սկեսուրի, սկեսուրյիր, կնքահոր և այլ «մեծամեծների» հետ իրավունք ունեյին խոսել միայն «նշանացի լեզվով», թեպետ այս յերեւյթը, ըստ իս, նոր սոցիալական հարաբերությունների հետեւանք ե, կապված սեփականության հետ և վոչ թե հնագույն մնացորդ ե, ինչպես կարծում ե Ն. Մառը:

* «Լեզուն նույնչափ հին ե, վորքան և գիտակցությունը։ Լեզուն — այդ պրակտիկ ուղիների համար գոյություն ունեցող, հետևազեր և ինձ համար գոյություն ունեցող, ուեալ գիտակցությունն ե։ Յեկ լեզուն, գիտակցության նըման, գոյանում ե այլ մարդկանց հետ հաղորդակցիւր պահանջից»։ (Архив Маркса и Энгельса, книга I, стр. 220):

Վերոհիշյալ բնութագրումը՝ «լեզուն տարրուշված մտքի արտահայտությունն է հնչյուններով» պիտի ունենա, ըստ իս, վորոշ վերապահումներ: Նախ, չի շեշտվում լեզվի հաղորդման ձեւվական կողմը, ստրուկտուր մասը. յերկրորդ, լեզուն և խոսքը այստեղ նույնացվում են. յերրորդ, լեզվի գեֆինիցիան տրվում ե ստատիկ ասպեկտով և վոչ նաև լեզվի զարգացման պատմահասարակական գենետիկայից յելած. չորրորդ, չի շեշտվում լեզվի հասարակական կողմը: Տարրորոշված միտք (членораздельная мысль) մարդուս առաջին թոթովանքի ժամանակ կարող եր և չինել: Հավանութեն, նախամարդը նախադասությունը («միտքը») մի միամսական բառով կամ բառավոնով և արտահայտել «գծային» լեզվի ոգնությամբ. որինակ, «ջուր» կամ «գայլ» բացականչելով, նա մի ամբողջական միտք և ցանկացել տալ («ջուր տուր», ջուր խմիր»... նայած պարագային և կամ «գայլը յեկավ, գայլը «փախչում ե» և այլն), կոնկրետացման համար դիմելով ժեստերի ոգնության, վոր սկզբում գերակշիռ եր: Հետագայում այդ ամբողջությունը յերկինդիվելով բաժանվում և ըստ առարկայի («գոյականներ») և հատկանշի կամ գործողության («ածականներ», «ըայեր», վորպես գրա ստորոգումը): Այսպես վոր լեզվի վերոհիշյալ բնութագրումը դեռ տարակուսելի կետեր ունի յուր ծագմաբանական տեսակետից, իսկ այժմյան կատարյալ լեզուների տեսակետից, ինչպես և յեղած պատմական ամենապրիմիտիվ լեզուների, այդ բնութագրումը մասսամբ և ճիշտ և ընդունելի, յեթե ինդիրը վերաբերում և լեզվական սոսկ ակցիային:

Քերենք և մի յերկրորդ բնութագրում, այն և ֆրանսիացի լեզվագետ, Ա. Մեյլետ (A. Meillet), վորն այժմ համարվում է

* Կենդանական «լեզվի» համար համեմտաբիր վ. Պորժելինսկու հետեւյալ խոսքերը. «Не переоценивая наших средств в деле раскрытия внутреннего мира животных вообще, мы должны признать, что некоторые вопросы истории человеческого языка, касающиеся его происхождения, должны получить важные указания для их разрешения из изучения языка животных. Замечу здесь же, что существенное отличие этого последнего от языка людей заключается в отсутствии разделности в выражении внутренних переживаний; звук или сочетание звуков выражает у животных их переживания как нечто цельное, не разложенное на части. Само собой разумеется, языком в тесном смысле этого термина, мы не назовем и здесь непроизвольных звуковых рефлексов, которые так многочисленны у животных» (В. Поржезинский, Введение в языкоковедение, Москва, 1913 г., стр. 4—5): [4] Ընդգծությունը մերն են:

յելրոպական ամենամեծ լեզվագետներից: Նա ասում է. «Անհատի տեսակետից լեզուն մի բարդ սիստեմ է, կազմված խոսքի գործարանների և դրանց զգացումների անդիտակցելի զուգորդություններից, վորը (սիստեմը) նրան հարավորություն ե տալիս խոսել և ուրիշի բառերը հասկանալ: Այդ սիստեմը պատկանում է յուրաքանչյուր անհատին և նույնանման կատարյալ ձևով չի գտնվում ուրիշի մեջ: Բայց նա (սիստեմը) նշանակություն ունի միայն այն չափով, վորչափով նույն սոցիալական խմբի մյուս անդամներն ունեն նման սիստեմներ. հակառակ գեղքում այդ անհատը չեր հասկացվի ուրիշների կողմից և չեր հասկանա ուրիշներն: Ամեն մի անհատ խուսափում է նորմալ տիպից վորեւ կերպ թեքվել և շատ զգայունությամբ և վերաբերվում ամենափոքը թեքվելուն անգամ, յերբ վերջինս նա գտնում է ուրիշների մոտ: Լեզուն, լինելով մի կողմից անհատների սեփականություն, մյուս կողմից պարտադիր կերպով փաթթվում և (հանձնաւայլ) ուրիշներին և դրա չնորհիվ նա (լեզուն) դառնում է վոչ միայն բնախոսական և հոգեկան յերեւյթ, այլև սոցիալական» (տե՛ս նրա գիրքը սուսերեն թարգմանած Վведение в сравнительную грамматику индо-европейских языков, Юриев, 1911, եջ 21):

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, շեշտվում են վոչ միայն լեզվի բնախոսական (Փիլիոլոգիական) և հոգեկան այդ յերկու կողմերը, այլև յերրորդը՝ սոցիալականը: Բայց Meillet-ն, յեթե «լեզուն» չի վերցնում իրեւ սոսկ մի անհատական ակցիա, ըստ իս, մի սիստեմ է գործում, յերբ լեզվական այդ սիստեմն ուրույնացնում և յուրահատուկ և դարձնում միայն անհատին*: Վերջինիս մեջ այդ սիստեմը միայն չափով գոյություն ունի և կենսունակ և վորչափով դա կա և հասարակության մեջ, անհատական ուրույնածովությունը և նախադասություն կազմելու յեղանակներն անհատի հետ մեռնում են, իսկ ժառանգաբար փոխանցվում և միայն ընդհանուրից (կոլեկտիվից) վերցվածը՝ կոլեկտիվի լեզվաստեղծման նորամուծություններով: Անհատը ներգործոն է և լեզու տարածող կամ փոփոխող միայն այդ ընդհանուր ու դիմամիկ հասարակական լեզվի տեսակետից: Ճիշտ և Meillet-ի այն սոցիա-

* Ֆերդ. գե-Սոսյուրը ևս «Փոսային գործունեությունը» (речевая деятельность, франц. language) հասկացնում է զիմավորապես անհատին, լեզվին (langue) սակայն տալով սոցիալական ընդհանուր բնույթ յուր բառազատկերների և դրանց կապի ընդհանուր սիստեմով:

ւական պարտադրության շեշտումը, յերբ անհատը չի կարող թեքվել ընդունված տվյալ լեզվական սխսեմից, շրջապատը նրան հարկադրում է իրեն նման մտածել և խոսել։ Հիշենք հենց այն տգեղ վարմումքը, վոր ցույց են տալիս շատերը դեպի կակազները կամ թվաժամերը, յերբեմն «անազներ» անելով կամ ծիծաղելով այդ թերալեզվանիկների վրա։ Բայց մինչդեռ դրանք դժվար թե ուղղվեն, վորովնետե այդ դեփեկտները որդանական ընույթին կրում, դրա դիմաց սովորական շեղումներն այդ հասարակական հարկադրումից և ճնշումից ուղղվում են, ակամայից յենթարկվում են ընդունված միջին հավասարեցուցիչ հասարակական լեզվին։ Այս հասարակականը անշուշտ վերացական և ունիվերսալ ընույթ չպիտի կրի, ինչպես կարծում ե սոցիոլոգ Դյուրկհեյմին հետևող Ա. Մեյեն։ Այն, լեզվի սոցիալական լինելը մեղ համար վերացական և միապաղադության իմաստ չպիտի ունենա, այսինքն՝ տվյալ հասարակությունն ու յուր մտածողությունը (և աշխարհայացքը) ինքնարավ և միաձույլ չեն, այլ յենում են կրնկրեա, մատերիել բաղայից, արտացոլում են տվյալ արտադրական հասարակական պրոցեսը, մակարդակը, թեպետ և վոչ անմիջապես։ Սրա հետ կա ինարկե և լեզվի ինքնազարդացումը հասարակության այդ կացության մեջ, ինչպես և լեզվի հաջորդականության (преемственность) խնդիրը, նախորդ ձեկի յուրացումը։

Հարկ ենք համարում մատնանշել և ուսւ լեզվաբան Վ. Ա. Բողործողիցկու տեսակետը լեզվի մասին, վոր շատ ռեալիստական և „Каждый язык в своей разговорной, а письменный и в литературной форме, представляет продукт деятельности социальной среды, среды взаимодействующих индивидуумов не только данного времени, но и предшествующих эпох; усваиваемый с детства вместе с другими явлениями социального характера—нравами, обычаями и пр., он становится естественно-необходимой нормой общения членов коллектива данного времени и частных в нем об'единений по труду, классовости и др., и кажется существующим как бы особо от ума или представления отдельных индивидуумов этого коллектива; в своем развитии он отражает хозяйствственно-экономические, социально-политические и умственные переживания общества“.

տես проф. В. А. Бого родицкий, Общий курс русской грамматики, 1935. [5]

Լեզուն, այդպիսով, սկած մարդու ամենապրիմիտիվ արտա-

դրական կուլեկտիվի կյանքից մինչև այժմյան հասարակական տնտեսական բարդ ձևալորությունիրը բեկտել ե (պրելօմլայք) և արտացոլել յուր մեջ այդ պատմական մատերյել սուրստրատը, հասարակական հարաբերությունների այդ բարդ պատմական կոմպլեքսը։ Արտադրական պրոցեսի անմիջականությունը լեզվի հանդեպ զգալի յի մանավանդ պատմական զարգացման նախնական հտապներում, յերբ ինքը արտագրությունը պարզ բնույթի եր կուռում։ Հետագայում այդ անմիջականությունը վոչ միայն գրեթե չի զգացվում, այլ լեզուն ինքն արդեն դառնում և ազդեցության ֆակտոր (գործոն) յուր բազիսի վրա, մարդկային հասարակական տնտեսական զարգացման բարդ սխսեմի վրա՝ յուր մտածողությամբ և աշխարհայացքով։ Լեզվի այս անդրադարձ բնույթը այժմ, կարելի յե ասել, արդեն գերիշխողն ե։

Ի նկատի ունենալով լեզվի այս սոցիալական բնույթը, ինչպես և նրա պատմական հաջորդականությունը, մենք հետևապես, լեզվի մեջ պիտի տեսնենք ցեղի, դասակարգի թոր. դասի ինչպես և ազգության սոցիալ-կուլտուրական և քաղաքական անցյալը, այն եւ նախնական արտագրության պրիմիտիվ վիճակը յուր աշխարհայացքով, հետագա աշխատանքի բաժանման պրոցեսը յուր այլայլ ստադիաներով, դասակարգերի հանդես գալը և գըրանց աշխարհայացքը, պայքարը և այն։ Լեզուն այլպիսով դառնում և մի շահմարան, ուր մասամբ պահպան այդ անցյալը յուր բազմազանությամբ, միայն հարկավոր և «պեղումներ» կատարել այդ բոլորը հայտնաբերելու։

* Այստեղ մատերիալիստական դիակետիկայի լուսաբանումով, կոնկրետ պատմական պայմաններով կարող են գործարվել մեզ բոլորի հայտնի լեզուների պատմահամեմատական ուղղությունը (կոմպարատիվիզմը), վորը ցայծմ յեղել և զուա փորմալ կտրված լեզուները կրողների պատմահասարակական պայմաններից։ Դիցուք, թե մենք տեսնում ենք, վոր «կոն»—կոն վորոց տեղ և ժամանակ նշանակել ե «ձի», վորոց տեղ և ժամանակ՝ «շուն» և վորոց տեղ և ժամանակ՝ «ցեղջերու», ինչպես հյուսիսային մի շարք ցեղերի մեջ. դրանց յեղակացնում և հասարկայնորեն հաստատում ենք, վոր այդ «կոն» բառը սկզբում գրասահ (вывочное животное). Փունկցիան արտահայտող բառ ե յեղել. հետագայում, յերբ շունը փոխարինվում է յեղջերույիլ կամ ձիով, այդ նախնական բառն և յուր փունկցիան առումը փոխադրում է նոր առարկաների վրա։ Մասի մոտ գերիշխում ե և, կարելի յե ասել, միակն ե նրա «հնեաբանական» մեթոդը, վորը դառնում և մտահայեցողական և վորով նա աշխարհիս բոլոր լեզուները համագլաւարը ուսումնամիելով ուղղում է գանել լեզվի և հասարակության բոլոր նախնական տարրերը, պատկանելիությունները։ Խնչ խոսք, վոր այդտեղ ծայրահեղությունների և յերևակայությունների անսահման դուռ և

Բայց լեզվի հասարակական բնույթը յերևան և գալիս վոչ միայն նրանով, վոր այդ լեզուն մարդու հասարակական-տնտեսական ամբողջ բարդ կոմպլեքսն և վերաբացում յուր մեջ իբրև լեզվի «նյութական» մնացորդ և վկայություն։ Լեզուն այդ հասարակական անհամեստ բնույթը պահում է անընդհատ և լեզվի, իբրև խոսքի, արտաքերման ժամանակ. այսինքն՝ լեզուն, իբրև ավալ մոմենտում (ստատիկ վիճակում) մի բնախոսական և հոգեկան ակտ (գործունեյություն) յուր այդ յերկու կողմերի վըրա ևս կրում և հասարակության (կելլեկտիվի) անմիջական աղդեցությունը։ Մենք յուր տեղում կտեսնենք, վոր հնչյունն անգամ յուր փոնեմա-մոտապատկերով անհատին չի պատկանում և դրանք յերկուստեք հասարակական կացության մեջ են փոխադարձար ազդում, ձևակերպվում և պայմանավորվում։

Բայց մենք վերցնենք քննության այդ լեզուն վոչ թե յուր պատմա-հասարակական զարգացման կամ ձևավորման ասպեկտով, այլ յուր դրսեվորված կողմով, իբրև ավյալ մոմենտի մի ֆիզիոլոգիական, ֆիզիկական, հոգեկան և սոցիալական մի ակտ, հասարակական թե անհատական, վորովհետև վերջիվերջո այդ հասարակական կոնկրետ խոսելու ակտն անգամ անհատների միջոցով և լինում։ Այստեղ, հետևապես, լեզուն վերցվում և իբրև խոսելու արտահայտություն, իբրև խոսվածք (речениք), անկախ նրանից, վոր այդ բոլորն անցնում ե մեր կազմակերպված, ցեղային, դասակարգային կամ առագա անդամակարգ հասարակության հոգեկանության միջոցով, դրա բովով։ Այս արվում և հարկավ մեթոդական տեսակետից և կրում և վորոշ պայմանավորվածություն։ Լեզուն այստեղ վերցվելու յե յուր խոսողական ակցիայում։

Խ Ո Ս Ք — Մ Ի Տ Ք

Մենք գիտենք, որինակ, վոր համբ-խուլերը նույնպես «խոսում» են, մեղ նման մտածողություն և դատողություն ունեն։

Բացվում: «Հնաբանական» այդ ընդհանուր (և մասամբ՝ վերացական) մեթոդի հետ, անաղվելու և տեսաբանվելու լուրջ նյութ պիտի լինի լեզվի պատմականությունը («հիստորիզմը»), հենց յուր մեջ նրա պատմական մեղ հայանի (զըրավոր աղբյուրներից) ետապների որինաչափությունները, աենդենցները։ Վերջինները իբրև հողը պիտի ունենային և նախորդ «նախապատմական» շրջաններում և անայստեղ միայն մատերիալիստական սոցիորգիան ե, վոր ի վեճակի յե յուր գիտական և վերջական խոսքն տաելու այդ բոլոր ֆազերի նըկատմամբ։ Լեզվի իմմանենալը և պատմականը պիտի հասկացվեն հասարակական մարդու կացությում, մարդկային մտածողության միջոցով։

սակայն այդ նրանք կատարում են յերեսի միմիկայով կամ ձեռքերի այլեւայլ շարժումների միջոցով։ Այդտեղ, այդ շարժումները ծառայում են նրանց համար իբրև աղղանիշեր (սիգնալներ) իբրև ներսում միտք արտաքերելու և ուրիշի մեջ նույնը զարթեցնելու համար։ Այստեղ, այդ շարժումները նրանց «խոսելու» հնչյունների տեղ և ծառայում։ Նույն գերը մեր հնչական լեզվի մեջ, այսինքն՝ նորմալ տիպի խոսողների մոտ (վոչ գեֆեկտավորների մոտ, ինչպես համբ-խուլերը) խաղում են մեր սովորական հնչա-աղմկային արտադրությունները։ Հնչյուններն այդտեղ աղղանշանների գեր են խաղում, լեզվաբանների կողմից կոչվում են նաև «նշաններ», «ժեստեր», իսկ արտասանվածքը՝ դըրանց հանրագումարը։ Ինչպես Բողուն-ղեւկուրատեսներն եր ասում, հնչյունները, „մետկա“ չեն, ինչպես տեսնում ենք, որինակ, թաշկինակի վրա։ Հնչյունները աղղանշանակներ են, վորովհետև կոմպլեքսով նրանք կապակցվում են վորոշ պատկերացումների կամ հասկացողությունների հետ, այսինքն՝ վոչ միայն նշանակություն են պատճառում, այլև ունեն իբրև ներքին պատկերացումների առանձին։ Կա այդ հնչյունների հոգեկան աղբյուրը և հետևապես հնչյունը սոսկ «նշանախեց» (մետկա) չե։ * Գերմանական լեզվագետները այդ աղդամշանները կոչում են նաև հնչաժեստեր (Lautgebärde):

* Մեր արտաքերվող խոսքը, իբրև տարրորոշված լեզվի (գերմ. gegliederte Sprache) կոնկրետ և հիմնական գրավորույթը, իր մեջ պարունակում է սինտակտմատիկ միավորների (թիշ թիշ շատ անկախ) մի շղթա։ Այդ իմաստալից միավորները հանդիսանում են հասկացողությունների, յերկությների կամ ֆունկցիաների պայմանական աղղանշանները։ Յեթե բնությունից մենք անմիջապես ենք ստանում տպագորություններ, տպա լեզվական մտածողության ժամանակ հնչյունական այդ աղղանշանների (խորհրդանիշերի) միջոցով մենք միջնորդաբար ենք ստանում մաքի ստարկաների պատկերացումները։ Հայոնի Փիլոփոր Ի. Պ. Պավլովը հուլիսի 30-ին (1935թ.) Լոնդոնում կարգացած յուր գեկուցման մեջ հետևյալն ե ասում լեզվի մասին (տե՛ս „Известия“ կենտրոն որաթերթի № 177, հուլիս 30, 1935թ.).

„Животное до появления семейства homo sapiens сносилось с окружающим миром только через непосредственные впечатления от разнообразных агентов его, действовавших на разные рецепторные приборы животных и проводимые в соответствующие клетки центральной нервной системы. Эти впечатления были единственными сигналами внешних об'ектов. У будущего человека появились, развивались и чрезвычайно усовершенствовались сигналы второй степени, сигналы этих первичных сигналов,—в виде слов произносимых, слышимых и видимых. Эти новые сиг-

Յերեխան, յերբ սկսում եւ լեզու սովորել արդին անաշտամիական և քնախոսական տեսակետից ավելի յէ պատրաստունակ այդ նոր պրոցեսը (լեզուն) յուրացնելու, քան յերբ վայրեն եր այդ ուղղությամբ առաջին քայլերն անում: Յերեխան արդին հանդիպում եւ քիչ թե շատ կայուն և կազմակերպված մի լեզվական սխտեմի և նրան մնում եւ այդ յուրացնել, ոժտված լինելով անշուշտ ժառանգաբար ստացած քնախոսական զարգացման լեզվական ունակությունից: Առաջին տպավորությունները (գրգիռները) նրա համար լեզվի արտաքին՝ հնչյունական կողմն հն, բայց դրանց հետ հետզհետեն յուրացնում եւ լեզվի ներքին՝ իմաստական (բովանդակության) մասը: Ինչ խոսք, վոր նրա մտապատկերները թանձրացած առարկաներին միայն պիտի վերաբերեն կամ դրանց հետ կապված տարրական գործողություններին (ջուրխմել ծիծիւուտել, հաց-ուուտել, հաց-տալ և այլն): Յերբ յերեխան վերաբարել եւ փորձում բառերի հնչական կողմը, վորի մտապատկերային տպավորությունը նաև անընդհատ ստանում եւ մեծերից, նաև (յերեխան) կարողանում եւ այդ անել հարկավ միայն մասմբ, թոթովելով այդ հնչական մասը կամ յերեմն առաջին վանկերը միայն վերաբարելով: Հնչյուններն անգամ, քնական եւ, վոր 100 տոկոսով չպիտի զուգադիպելին մեծերի արտարկումներին: Լեզվի ներքին (իմաստական) և արտաքին (հնչական) կողմերի յուրացումը կարող եւ լինել և վոչ միաժամանակ: Յերեխմն և, թերեւ, հաճախ յերեխան սկսում եւ հասկանալ, այսինքն՝ ունենում եւ, ձեռք եւ բերած լինում ուրիշներից լեզվի այդ տարրերը, բայց վերաբարել անմիջապես չի կարողանում, հետագայում միայն զանդաղորեն նաև սկսում եւ թոթովել լեզվի հնչական մասը: Կեզվական բարդ սիստեմը յերեխան իհարկե միանգամից չի յու-

налы, в конце концов, стали обозначать все, что люди непосредственно воспринимали как из внешнего, так и из своего внутреннего мира, и употреблялись ими не только при взаимном общении, но и наедине с самим собой. Такое преобладание новых сигналов обусловила, конечно огромная важность слова, хотя слова были и остались только вторыми сигналами действительности; благодаря двум сигнальным системам и в силу давних и хронически действовавших разнообразных условий жизни людская масса разделилась на художественный, мыслительный и средний типы. Последний соединяет работу обеих систем в должной мере. Это разделение дает себя знать как на отдельных людях, так и на целых нациях»: [6] Այդ վերջին մասը՝ ազգերի այսկերպ կամ այնկերպ մտածողաբար բաժանվելը՝ հարկավ մատերիալիստական չի:

րացնում, այլ այդ սիստեմի հիմնական, ցայտուն մասը: Յեկ այդ կելքում յերեխան վոչ միայն վերաբարերողի՝ դերումն եւ լինում (այսինքն՝ յերբ յուրացրած եւ լինում լեզվի տարրական սխտեմը), այլև արտադրողի գերում: Որինակ, յեկեւ Աշտարակի յերեխան յուր յուրացրած տարրական գավառաբարբառային սխտեմն համընթաց լսում եւ կտարբմ եմ—կտարեցի, խմբ'մ եմ—խմեցի, վազզըմ եմ—վազզեցի..., նա «անալոգիայով» կազմում եւ ուղիղ ձևով (յուր տարրական սխտեմին հատկացնելով) նաև՝ Եթըմ եմ—եթացի, հւտըմ եմ—հւտեցի և այլն*, այնինչ գյուղացիք, իրենց բարդ լեզվական սխտեմի մեջ, նախորդ ձեերից պահած ունեն Եթըմ եմ—վանցի, հւտըմ եմ—կերա և այն: Վերջիվերջո յերեխան կորցընում եւ յուր սեփական նման լեզուն, յուր ուղիղն ու տարրականը. Նա յենթարկվում եւ մեծերի, հակասություններով լի, բարդ լեզվին: Այդ ամբողջ յուրացման պրոցեսը մի յերկումք ե, մի ծանր աշխատանք, վոր կատարում եւ յերեխան: Հիշենք հենց այդ տեսակետից, թե վորքան դժվարության ենք հանդիպում, յերբ լսելով անգլիական թի հնչյունը, ստանալով նրա վորոշ հնչական տպավորությունը, այնուամենայիլ մենք անմիջապես շնոր կարողանում անգլիացու պես արտասանել. մենք այլևայլ փորձեր ենք կատարում բերնի որգանների մեջ, մեր յեղած արտասանական, մայրենի լեզվի հնչական պաշարի ոգնությամբ մի կերպ աշխատում ենք թի մոտավոր անգլիական հնչումը տալ և յերկար վարժվելուց հետո մենք ի հարկե այդ հնչումը հարազատորեն կտանք, վորի հետեւնքով դրա սկզբնական «հնչական տըպավորությունը», իբրև գրգիռ, մեզ մեջ արդեն առաջացնում եւ այդ հնչյունի քիչ թե շատ կայուն և ձեռք բերած մտապատկերը՝ ֆոնեման: Հնչյունի յուրացման այդ ներքին պրոցեսը՝ արտաքինից ստացված տպավորության հանդեպ՝ յուր հերթին դառնում է հականերգործության մի ֆակտոր և այն ել՝ ավելի կայուն և հարատես, կապվելով փոխադարձարար յուր արտաքերումների հետ:

Հիմնական պահանջը և նախադրյան ե՝ յուրացրած ունենալը առների հնչական մտապատկերները (представления), իբրև բառիմաստի և մտքի առաջին պայմանը: Մենք ունենք, որինակ, «բայց», «սակայն», «յեկ», «իսկ», «վորովհետեւ», «յեղակացու-

* Իմ աղջեկը հոգնակին միայն եր մասնիկով եր կազմում, ինչպես բաժակեր, կոչիկեր և այլն. յերեկի նրա հայոց բառապաշարում հոգնակի-եր մասնիկը ավելի յե աղջել նրա վրա, քան հոգնակի-եր մասնիկը:

թյուն», «հույս», «սեր» (ЛЮБОВЬ) և նման հասկացողությունների բառահնչական մտապատկերը մեր մեջ վորոնց չորրհիվ ենք կարողանում հաղորդել և դրանց բովանդակությունը՝ հասկացողությունները: Ինչպես ունենք հնչյունի մտապատկեր՝ ֆոնեման, այնպես պիտի ունենանք և ամբողջ բառի հնչական մտապատկերը և վոչ միայն վերացական հասկացողությունների, ինչպես բերինք վերևում, այլև շատ կոնկրետ, ինչպես «ջուր», «քար», «սեղան» և այլն: Յեվ մեր մտածողությունը մեր լեզվական սիստեմի ձևի միջոցով կատարվում և հենց այդ հնչական բառապատկերների կապակցությամբ (զուգորդությամբ) իրենց նշանակությունների հետ անմիջապես թե միջնորդապես, այսինքն՝ «սեղան» հնչապատկերը կարող է զուգակցվել թե ընդհանրապես «սեղան» գաղափարի հետ, ստանալով «նշանակություն» կամ թե կոնկրետ մեր վրա ավելի ազգած մի սեղանի հետ*: Միայն «ընաձայնական» բառերն են, վոր իրենց հնչական մտապատկերի արտարերման ժամանակ (հնչելիս) անմիջապես կապվում են առարկայի հետ, — հմտությալը, «բղուալ», «գլուց» և այլն:

Մեզ հետ հաճախ ե պատահում, վոր ունենք «բառի» հնչական մասի մտապատկերը, սակայն իմաստը՝ միտքը չփխտենք. այդ պատահում և մանավանդ տեխնիկական տերմինների կամ հին բառերի հետ: Որինակը յետ ունեմ «ագրեգատ» բառի հնչական պատկերացումը և գիտեմ, վոր դա վերաբերում է հիդրօկայանի մի ինչ վոր մասին, սակայն զրա ճիշտ բովանդակությունը (նշանակությունը) ինձ հայտնի չե: Կամ հին գրածքներ կարդալիս, կարող ենք պատահել որինակ, ըմբոշինել ոռջնական, սինդրոր և նման «բառերի», վորոնց նշանակությունը յերկար ժամանակ չիմանանք (յեթե բառարան չնայենք կամ մի տեղյակ մարդ չափ): Հաճախ պատահում ե և ընդհակառակը, այն ե՝ առարկայի պատկերացումը կամ մի հասկացողություն ունենք մեր մտքում, բայց դրա բառական, այսինքն՝ հնչական մասը չենք հիշում: Այս իհարկե մասնակի և արտուղի դեպքեր են, վորով բառի իսկական «բառացում» գեռ չկա:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, լեզվի մեջ բառերի հնչական պատկերացումներ ունենալը (հիշողության մեջ պահելը) անհրաժեշտ նախապայմանն ե հանդիսանում մի առարկայի պատկերացում կամ հասկացողություն նշանակելու համար և հե-

* Այդ կոնկրետ կապակցությունը շատերի կողմից բացավում ե, այն ինչ, անշուշտ, այդ յերկուսն ել կան, թե ընդհանուրը և թե կոնկրետը:

տեապես մեր լեզվական մտածողությունն ունի իրեն անբաժան և բաղկացուցիչ մաս՝ բառերի հնչական պատկերացումները: Լուս կարգալու ժամանակ տառերի շարքն առաջ ե բերում մեր մեջ հնչական բառերի պատկերացումները, վորոնք, կապվելով վորոշիմաստական պատկերացումների հետ, տալիս են մեզ նախադասության (խոսքի) բովանդակությունը, իբրև մի ամբողջական միասնական միտք: Սակայն, լեզվի հիմնական և կենդանի պրոցեսը վոչ թե լուս կարգալն ե կամ մեր մեջ մտածելը, այլ բարձր խոսելը, այսինքն՝ մեր մտքերը լսելի հնչյուններով ուրիշին հաղորդելը: Այս գեղքում մեզ ոգնության ե զալիս մեր արտասանական ապագարատը, վորի գործունելությունն այդ արտասանական պրոցեսում մեր կամքի և լսողության, ինչպես և լսողի (շրջապատի) կոնտրոլի տակ ե*: Արտասանության ժամանակ մենք ստանում ենք բառի հնչական, մեր մեջ յեղած հնչապատկերի իրացումը. այդ գեղքում մենք ստանում ենք նաև արտարերման՝ արտիկուլացիայի մոտորային զգացմունքները, կամ ավելի ճիշտ զգայումները և դրանց բոլոր զուգորդությունները:

Հնչյուններից առաջացած ալիքները գրգռում են լսողի ականջաթաղանթը և նյարդի միջոցով՝ առաջ բերելով բառերի հնչական պատկերացումներ նրա ուղեղում, զուգակցվում են նաև իմաստական կատեգորիաների հետ. այսինքն՝ այն պրոցեսը, վոր խոսողի մեջ կատարվում ե, նույնն արտացոլվում ե և ընդունողի մեջ: Հստ Ա. Տոմսոնի ** ստանում ենք հետեւյալ ողակավորումներն այդ լեզվահաղորդության մեջ: (Ցես աղյուսակ 1)

Այդ նկարը մեզ ասում ե, վոր յեթե հնաշվենք՝ արտաքին (փիզիկական) աշխարհի միջնորդությունը, ապա խոսողի և լսողի մեջ հիմնականում կատարվում են յերկու պրոցեսներ. առաջինի մոտ մտքի մոբիլիզացիա իրեն մասիրի հնչական պատկերացումներով և դրանց ֆիզիոլոգիական արտաքրումը (артիկուլացիա) արտասանական որգանների միջոցով, իսկ լսողի մոտ լինում ե ընդհակառակը՝ բառահնչյունների ակուստիկական՝ ֆիզիոլոգիա-

* Հմտություն. Նաև Ֆ. Ենգելսի խոսքերը մեր այդ պատկերատի պատմականորեն արմարվելու մասին. «Потребность [что-то сказать друг другу] создала себе орган: неразвитая глотка обезьяны преобразовывалась медленно, но неуклонно, путем постепенно усиливаемых модуляций, и органы рта постепенно научились произносить один членораздельный звук за другим». անոն Նրա Դialectika prirody. 1929 թ. եջ 65): [7]

** Տես Ա. Տոմսոն. „Общее языковедение“, Одесса, 1910 թ. եջ 84:

ԽՈՍՈՂ

A
Բարդ պատկերացում
յել զգացումներ
(անանչաս միտ)



1
Նախադասության
համակուրյուններ
(դատողություն)



2
Լսողական պատկերացումներ բառերի նախադասության մեջ



3
Խոսի որգանների
շարժումների պատկերացում



4
Խոսի որգանների
շարժում

Աղյուսակ 1

ԼՍՈՂ

B
Բարդ պատկերացում յեվ զգացումներ



8
Նախադասության
համակուրյուններ
(դատողություն)




7
Լսողական պատկերացումներ բառերի նախադասության մեջ



6
Լսողության վորոց
որգանների տասանումներ



5
Ողի հնչական
ալիքներ



6
Լսողության վորոց
որգանների տասանումներ

Կան պլրոցեսն ականջի շնորհիվ և հնչական բառապատկերացումների միջոցով՝ ներքին հոգեկան իմացական պլրոցես։ Առանց դրսի, այս ե՞ւ ֆիզիկական աշխարհի միջնորդավորման այդ մտքի հազորդումն ուրիշն չեր կարող լինել։ Ինքը խոսողն ևս իր ականջներով ընդունում և իր արտասանած բառերի պատկերացումները, սակայն նրա համար դրանով նոր հոգեկան ներքին պլրոցես չի գոյանում, քանի վոր դրսելորման, արտարերման պլրոցեսը և նման ֆիզիոլոգիական ընդունման պլրոցեսը, յերկուսն ել միենույն «ներքին» լեզվի միաժամանակ կատարվող պլրոցեսի կողմերն են. այդ ներքին հոգեկանը մի յի յերկուսի համար ել, իրեւ աղբյուր։ Խոսողի համար իր լսողական պլրոցեսը մտքի յուրացման տեսակետից կարեռություն չունի, այդ լսողականակուստիկը կարեռ և միայն ընդունողի (լսողի) համար։ Սակայն սրանով մենք չենք ժխտում խոսողի արտարերման (արտիկուլացիոն) պլրոցեսի կարեռությունը «ներքին լեզուն» կազմակերպելու մեջ, այդ արտարերական լեզուն և յեղել հասարակական լեզվի կազմակերպի մեջ։ ունենալով իր գրգման պատճառները հասարակական աշխատանքի մեջ։ Միայն արտարերական այդ հաղորդման լեզվով և կազմվել լեզվի «ներքին», այս ե՞ւ հոգեկան կողմի սխտեմը. այդ ներքին լեզվական սխտեմի կրումը մեր մեջ մենք կոչում ենք լեզվի իմացում (значение языка): Վերջնս մեր մեջ մնում և իրեւ մի ընդունակություն, իմմանենտ վիճակ, վորը ցանկացած ժամին, հատկապես ուրիշի հետ խոսելու համար, ստանում և իր գրսեռությը հնչյուններով։

Իսկ լսողի (ընդունողի) համար մեկ և, թե այդ հնչական գրսեռությը այդ փրազիկական հնչյուններով ով կկատարի, — մարդ, թե այլևայլ խոսող մեքենաներ՝ գրամֆոն, ռադիո, հեռախոս...: Ընդունող-լսողի համար կարեռ են այդ արտարին հնչական գլրգինները, վորոնք նրա ականջի միջոցով հնչական բառապատկերացումներ են ծնեցնում նրա ուղեղի մեջ և ասոցիացիաներ կազմում բառիմաստների հետ։ Ինքն ըստ ինքյան հասկանալի յէ, վոր այդ ընդունողի մոտ նախապես պիտի կազմված լինի նույն լեզվական նույն սխտեմի ունալ գիտակցումը, այս ե՞ւ տվյալ այդ վորոշ լեզվի գիտությունը, ապա թե վոչ՝ գրսից ստացվող այդ հնչական գրգինները կմնային սոսկ այլպիսիներ, այսինքն՝ կըստացվեյին միայն հնչական տպավորություններ և դրանով չեր իրացվի լեզուն։

Մենք գիտենք նմանապես, վոր գրագետ մարդս հնչական

գրգիռների փոխարեն կարող եւ ստանալ տեսանելի նշանների (տառերի) գրգիռը, վորոնք նմանապես ընդունողի (կարգացողի) մեջ առաջ են բերում հնչական բառապատկերներ և դրանց հետևանքով՝ բառիմաստներ։ Այստեղ ականջի փոխարեն աչքն եւ ընդունող որգանը հանդիսանում։ Յեկ յերկուստեք միենույն նշանակումները (назначаемость) ունեն՝ առաջ բերել հնչական մտապատկերներ, միայն մեկը՝ ողի ալիքների միջոցով, իսկ յերկուրդը՝ տառերի միջոցով։ Ականջի փունկցիռնալ այդ գերը գենեալոգիական տեսակետից հնագույնն ու հիմնականն են, իսկ յերկորդը՝ աչքի փունկցիռնալ դերը, արգամիք և նոր դարաշրջանների, «քաղաքակիրթ» մարդու նվաճումն եւ։ Այդտեղ տառերին կարող են փոխարինել և այլ տեսակի սիմվոլներ՝ նկարներ, գաղափարագրեր, գծերի և կետերի սիստեմ (հեռագրերի ապահովագում) և այլն և այլն։

Ինչպես տեսնում ենք, մտածողությունը և այդ նույնը ուշից մոտ զարթեցնելը (մտքի հազորգումը) միմիայն լինում են հնչական պատկերների միջոցով։ Սակայն, այդ հնչական բառապատկերացումները, ինչպես և լեզվական ամբողջ սիստեմի կացությունը, ինքնարավ չեն, այլ կապված են և փոխադարձարար պայմանագործում են հնչական լեզվի սլրական գործադրումից, իբրև հասարակական ամենաուժեղ մի գործնից։ Այդտեղ գոյությունը ունի զբանց դիալեկտիկական միամնությունը։

Յեթե մեր գատողությունը (մտածողությունը) հասարակական պրակտիկայի հիման վրա պայմանագործած և հնչյունական պատկերներով, ապա վերջիններս, իբրև հոգեկան կատեգորիաներ, իրենց ձևագորման աղյուսը ունեն ուեալ հնչյունի փիզիոլոգիական և ֆիզիկական (ակուստիկական) գոյացումների մեջ։ Հատկապես արտասանական ապարատի և հատկապես նրա ակտիվ որդանների (լեզվի, փափուկ քիմքի և շրթունքների) մոտորային զգացումների կոմպլեքսն առաջ եւ բերում են հնչյունի պատկերացման զուգորդությունը։ Այն աստիճանի յեւ սերտ հնչյունի այդ յերկու կողմերի (Փիզիոլոգիական—մոտորային և հոգեկան) կապը, վոր յերազում մտածելիս՝ շատերի մոտ սկսում եւ գործել և այդ ֆիզիոլոգիական կողմը, այսինքն՝ քնած մարդը նաև արտասանում եւ բարձրածայն (բայց ինքը չի զգում և չի լսում)։ Մինչև անդամ արթուն ժամանակ, յեթե մենք մեր մեջ մտածում ենք այսինքն՝ գործ ենք ածում լեզվի ներքին հոգեկան մասը, ակաւմայից մեր փակ բերնում սկսում են հնչյունական թույլ մոտու

բային շարժումներ կամ ավելի ճիշտ՝ զըմաց զգացողությունները։ Յեկ դա բնական է, չե՞ վոր հնչապատկերի հիմնական կազմակորման աղբյուրն եւ յեղել դրա գործականությունը, նրա մատերիել մրացը, իբրև պատմական առորյա փաստ։ Շատ մարդկանց մոտ, մանավանդ ծերերի և յերեխաների, այնքան թույլ եւ լինում ներքին արգելակումը, վոր մտածողության նրանց պրոցեսը զուգակցվում եւ արտասանականին, այսինքն՝ մեն մենակ խոսում են։ Կարելի յեւ ասել զբանք պիելի ճիշտ են վերաբռագրում նախնական մարդու պատմական լեզվական պրոցեսը, հարկ են տալիս «ատավիզմին»։

Պատմական անհրաժեշտություն չկա, վոր այսինչ հնչակումը բարկաց մտապատկերը (պատկերացումը) հատկացվեր միայն այս առարկայի պատկերացմանը, այս իմաստին, այս հասկացողությանը։ որինակ, ինչո՞ւ «հաց» հնչյուններով պիտի նշանակվեր մեր սովորական ուտելու առարկան, իսկ «քար»-ով՝ քար տարկան և վոչ թե այլ կերպ կամ ընդհակառակը։ Այստեղ ամենակարեւոր մոմենտը հնչյունական առաջին (սկզբնական) հատկացումն եւ առարկային կամ յերկույթին, այդ կապակցելիության (յայլական) կոնկրետ պատմությունը գիտնականները գեռակ պարզված չեն համարում*։

Բառի այդ անվանումն ու իմաստն իհարկեր իր տվյալ գրությամբ չեն մնում, այլ փոփխվում են։ Այստեղ հիմնական ազգեցության պատմական հասարակական պատմական մտածողության (և աշխարհայացքի) հարափոփոխությունն եւ, իսկ այդ իմաստի փոփխությունը կատարվում է տարբեր յեղանակներով՝ ըստ կցորդության, նմանության և հակադրության զուգորդությունների։ Բառի և նախադասության (resp. լեզվի), ձևի և բովանդակության փոխհարաբերության մասին իրենց պատմական զարգացման մեջ մենք կիսունք առանձին («Զեաբանություն»—«Իմաստաբանություն» հատվածում)։

Լեզվագետներ կան, ինչպես, որինակ, Մառը, վորոնք կարծում են, վոր սկզբնական բառանվանումն ընդգրկում եր առարկաների կամ հասկացողությունների մի ամբողջ շարք, ինչպես,

* Հստ իս, աշխատանքի պրոցեսի հետ գոյացող պարսագիր հասարակական մտածությունը, իբրև կազմակերպման և հաղորդակցման անհրաժեշտություն, սկզբում պատահականորեն միայն կարող եր առաջացնել այս կամ այն բառանվանումները, վորոնք իբրև նվաճումներ արդեն դասնում են լեզվական կուրսուրայի անհրաժեշտ տարրերը (տես «Լեզվի ծագումը»)։

որինակ, մի «յերկինք» կարող եր նշանակել «յերկինք», «աստղ» «թռչուն», «բարձրություն», «շրջան», «աշտարակ», «տաճար» և այլն և այն: Բայց այսեղ ևս գործում են մեր մատնանշած ասոցիացիաների որենքները (կցորդության և նմանության) թերկուզ և «տոտեմական» կամ մոգական (նախարարամբանական) մտախության մեջ: Իսկ Մատի պնդումը, վոր սկզբում յեղել են միայն վորոշ հնչական միավորներ կամ ելեմնտները (sal, ber, roš, yon), վորոնք աշխարհիս բոլոր սկզբնական լեզուներին պիտի պարտադիր լինելին, կազմելով հնչական և բազմիմասս բառի սաղմնային ատաղձը, հարկավ սոսկ յենթագրություն և, կրում և վերացական բնույթ և քննադատության չի դիմանում, քանի վոր այդ ֆիքս ելեմնտների համատարած պարտագրույթը չի կարելի հասարակայնորեն ապացուցել այլ միայն բնագիտորեն:

ԱՐՏԱՍԱՆՎԱԾԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ

(Լեզվի սարք)

Յեթե վորեմ մեկի արտասանածը մենք չենք հասկանում, բնական ե, վոր այդ մեր վրա միայն հնչյունական մի ամբողջ շարքի տպավորություն կթողնի, վորը ժամանակի և տարածության տեսակետից մի կապակցված հոսուն շղթա յե կամ, ինչպես Փրանսիացի լեզվագետ Սույուրն և ասում, մի հնչյունական շղթա յե,—la chêne phonétique: Յեթե, որինակ, այդ արտասանածն իր մեջ վորոշ տեղերում շեշտեր ունի, ապա այդ արտասանածի վերլուծությունը կարելի յե կատարել նախ և առաջ ըստ այդ շեշտավոր կտորների, այսինքն՝ ամբողջ արտասանածը («շղթան») մենք կարող ենք բաժննել «շեշտավոր կտորների»: Ամենալավ նմուշն այդպիսի ամբողջության և ըստ շեշտի բաժնաման՝ փոտանավորն ե: Համեմատիք, որինակ, իին ավեստական լեզվից այդպիսի մի կտոր—«Ա՛ադ հե մրառմ Զա՛րատուշտրայ, ազըմ յո Անուրամազդայ, վիսաննա մե յի՛մա սրիրա, մրտն բրտա-չա դե՞նայայ (=Արդ, հետելան և՛մ ասում Զրադաշտին, յես, վոր Արամազդան եմ, ծառայիր ինձ «յիմա» գեղեցիկ՝ համբավող և կրող կրոնի): Բայց շեշտավոր կտորներն ես ըստ արտաշնչման մասերի (ըստ ձայնավորների) մենք կարող ենք բաժանել «վանկերի», իսկ վերջններս ել իր բազմացուցիչ մասերի՝ հնչյունների (=ձայնավոր և բազածայն): Մինչէ իսկ մեր սեփական արտասանության միջոցով մենք հնչյունի մոտորային (արտիկուլացիոն) մոմենտներն անդամ կարող ենք տարբերել և

դգալ. և հետեւապես այդ հնչյունն ամբողջությունը, իբրև ակուտիկական հոգեկան և պատմահասարակական մի անբաժանելի միավոր, մենք ֆիզիոլոգիապես կարող ենք տարբորոշել, այսինքն՝ բաժանել յուր արտիկուլացիոն մոմենտների:

Սակայն արտասանածի վերլուծությունը սովորաբար գուգագիպում և դրա (արտասանածի) լըմբոնմանը*, այսինքն՝ մենք հասկանում ենք խոսղին: Ապա այս գեղգում այդ արտասանածը մեղ ի՞նչ «ապավորություններ» եւ պատճառում: Նախ այն, վոր մենք ստանում ենք մի ամբողջական միասնական միտք — նախադասություն: Կարող ել լինել և դրանց կապակցված շարքը կամ շարքերը: Բայց մենք վերցնենք միայն մի նախադասություն: Ի՞նչ ենք ստանում ամբողջական այդ միասնական նախադասության մեջ, դգնեմ ենք, արդյոք, դրա իմաստական մասերի («բառերի») կամ միավորների ներկայությունը: Անշուշտ, զգում ենք: Ապա թե վոչ—միասնական ամրողջ «նախադասությունը» չեինք հասկանա: Իսկ այդ հասկանալու համար պետք ե մեր մեջ կրնենք խոսղի լեզվական սխսեմը, լինենք մինչեւ իսկ նրա խավի, դասակարգի միավորը, ունենանք նման ապակեցիցիա (յեթե ուզում ենք 100% ուղղ ըմբռնել խոսղի միտքը): Որինակ բերենք մի պարզ լեզվական ամբողջություն՝ «Paul aime Olga» (Փրանսերեն) կամ հայկան բարբառով ասած՝ «Պողոս կսիրե Ոլգա»: Այդ հասկանալի ամբողջությունը մեր ըմբռման մեջ ունի իր իմաստական ողակները՝ մասերը (Պողոս = Paul, կսիրե = aime, Ոլգա = Olga): Բայց բացի այդ, կա այսեղ և արտահայտության ձեզ՝ կերպը, այսինքն՝ այդ իմաստական կտորների գասավորության հաջորդականությունը, վորի շնորհիլ ե միայն ամբողջական ճշգրիտ միտք ստացվում: Այլ իմաստ կունենար, յեթե գասավորված լիներ Olga aime Paul («Ոլգա կսիրե Պողոս»): Այդ գասավորությունը («շարահյուսություն») այս տիպի լեզուներում կամ այդ տիպի լեզվական արտահայտությունների մեջ կրում ե ձևաբանական նշանակություն: ուրիշ տիպի լեզուներում կարող ե դրան փոխարինել իրեն բառի ձեզ և դրանց հարակցությունը, անկախ գասավորությունից: Որինակ, ուսուաց «Պավել լիօբիտ Օլ্যգ» կամ մեր՝ «Պողոսը սիրում ե Ոլգային» հենց այդպիսի կազմություն ունի, թեկուզ բառերի տեղերը փոխենք («Օլիգ լիօբիտ Պավել»,

* Մինչեւ իսկ անձանոթ լեզուն, սեփական լեզվի ներքին ավալներով, սկսում ենք իմաստավորել «հասկանալ», բայց ինարկե այդ խաբութիկ ե:

«Ուլգային սիրում և Պողոսը» կամ «լիօբիտ Օլյգ Պավել» «սիրում և Ուլգային Պողոսը» կամ «լիօբիտ Պավել Օլյգ», «սիրում և Պողոսն Ուլգային»): Այստեղ մի փոքր նրբություն կարող է մըտցնել միայն այսպիս կոչված «հոգեբանական» (վերաբերմունքի) շեշտը (Օ’լյգ լիօբիտ Պավել այլ և քան Օլյգ լիօ’բիտ Պավել, քան Օլյգ լիօբիտ Պա’վել)*:

Տեսական վերլուծման յենթարկենք հայերեն այսպիսի մի նախադասություն—«մտավորականության դիրքը ցայժմ յերերուն և յեղել»: Նախ, այս ամբողջությունը մենք բաժանում ենք յերկու բաղկացուցիչ մասի՝ «մտավորականության դիրքը» և «յերերուն և յեղել». «ցայժմ» բառիմաստը սահմանագծում ե (կոնկրետացնում ե) ընդհանուր այդ ասվածքը («ստորագրվածը») ըստ ժամանակի, այսինքն՝ վոր յերերուն և յեղել վոչ թե ընդհանրապես, այլ մինչև հիմա, մինչև վերջերս: Ֆորմալ վերլուծության տեսակետից, մենք բաժանում ենք նաև «մտավորականության դիրքը», ինչպես և «յերերուն և յեղել», իբրև «յենթաամբողջություններ» նախադասական միամնության հանդեպ: Որի՞նակ, առաջին ամբողջությունը — «մտավորականության դիրքը» (=յենթական) հայոց լեզվի մեջ կարող և հակադրվել նման այլ ասուլյթների, այսինքն՝ վոչ միայն ունենք «մտավորականության դիրքը», այլև «մտավորականության» աշխարհայացքը», «մտավորականության վիճակը», «մտավորականության կազմությունը» և այլն, ինչպես նաև — «զինվորության դիրքը», «գյուղացիության դիրքը», «ուսանողության դիրքը» և այլն և այլն**: Այդպիսով մենք զգում ենք, վոր միացյալ «մտավորականության դիրքը», իբրև ամբողջական յենթական խոսքի (դրա մասին և խոսվում) իր հերթին մեր գիտակցության մեջ բաժանվում և յերկու ստորամասերի՝ «մտավորականության» և «դիրքը»: Սակայն, լեզվական նման վերլուծությամբ մենք այդ փոքրիկ ամբողջություններն են բաժանում ենք իրենց ավելի փոքր իմաս-

* Օ’լյգ լիօբիտ Պավել նշանակում է Ուլգային և սիրում և վոչ թե ուլգային, Օլյգ լիօ’բիտ Պավել նշանակում է Ուլգային սիրում և վոչ թե ատում կամ անտարբեր ե, իսկ յերբորում՝ միայն Պողոսն և սիրում:

** Այս վերլուծման մեր մեթոդը կիր են առնում բոլոր լեզվաբանները (Բողունը, Սոսյուրը և այլն): Սոսյուրը այդ կոչում և սինտազմատիկ և առցիատիվ զուգորդությունների յեղանակ: Այս մեթոդը, ըստ իս, բաժանման և կապի դիմակելտիկական սկզբունքն ե, իբրև հակադրամիանություն:

Այս մասին մանրամասնորեն տես «Զեկաբանության» մեջ:

տական մասերի, վորոնք թե ֆունկցիոնալ (ըստ պաշտոնի) նշանակություն ունեն և թե նշանակողական: Այդպիսով, յեթե վերցնենք «մտավորականության» ամբողջությունը՝ դրան կարող ենք հակադրել «մտավորականություն», «մտավորականությունից», «հոգեվորականությամբ» և այլն, ինչպես և «զինվորականություն», և այն և այդպիսով մենք զգում ենք «մտավորականություն» ամբողջության մասերը՝ մտ (=մըտ-միտ) + ավորականություն: Բայց քանի վոր ունենք նաև «մտավորական—մտավոր — միտ», ինչպես «հոգեվորական — հոգեվոր — հոգի», ինչպես «զինվորական — զինվոր — զին(ք)», ապա «մտավորականության» ամբողջությունն ըստ պաշտոնի և նշանակության պիտի բաժանել «մըտ — (<միտ —) + ա + վոր + ական + ություն», թեպետ կարելի յե բաժանել նաև «ական» յերկու մասի «ա — կան» (հմմտ. գնաց — կան, լալ — կան...): Դև «ություն» մասնիկը նաև յերկու ստորամասնիկների (հմմտ. բնույթ — բնություն դրույթ — զրություն...), այն և «ութ (<ույթ) + յան», վորը (-յան) արտահայտում ե նշանակության հետ նաև կախվածության փունկցիա («սեռական» հոլով): Այդպես և «դիրքը» ամբողջությունը մենք բաժանում ենք «դի + ր + ք + ը»: Նման վերլուծություն կարող ենք տալ «ցայժմ» (հմմտ. «այժմ», «ցման» «ցտեսություն»...) ամբողջությունը, իբրև «ց + այժմ», իսկ պատմական վերլուծությամբ նաև «այ-(<այս) + -ժըմ (<ժամ)»: Նմանապես «յերերուն և յեղել» բաժանվում ե յերկու մասի «յերերուն» + «և յեղել» (=յեղել ե), ինչպես և դրանցից ամեն մեկն՝ իրեն ստորամասերին: Համեմատել «յերերուն» միասնության համար «շարժում», «մնայուն», «կայուն», «ցց — ուն», «յեռադյուն»..., իսկ «յերեր» — (=հին, «երեր — եր — եր —) հիմնական մասը պատմական վերլուծությամբ մենք համարում ենք կրկնակի ձեւ, ինչպես «զողզող-ալ» (հմմտ. «զող-զո-ջուն», ուր «ջ»-ն ստացվել և «զ» հնչյունից), «տատմն-վել» կամ «ծածան-վել», (արմատներն են «տան-»և «ծան-») գոռպոռալ բարբառել և այլն:

Նմանապես «և յեղել» վորը հենց իրեն հակադրությամբ («յեղել ե») զգացվում է յերկու մաս, ինչպես և «յեղել» միասնությունը = յեղ + ել (հմմտ. յեղ-ա, յեղ-ար...). մի խոսքով այս մեր բերած ամբողջ նախադասությունը ներկայացնում է մի միասնություն զանազան իմաստալից մասերի, վորոնք նշանակողական կամ փունկցիոնալ (ձևական) դեր են խաղում միմյանց համապես: Այդ մասերի մեջ մենք տեսնում ենք նաև տարբեր

ստորամասեր, վորոնք ևս բաժանվում են յենթամասերի և այլն: Ամենավերջին բաժանելի միավորը մենք քերականորեն կոչում ենք մորֆեմա (մօրֆեմա), վորոնցից հիմնական միաք ցույց տվողը կոչվում է արմատ, այդ ընդհանուրը կոնկրետացնող կամ սահմանագծող ձևական մասերը՝ ածանցներ (= նախածանց, միջածանց, վերջածանց), իսկ կապակցող՝ փունկցիոնալ տարրը կոչում ենք «վերջավորություն» (ֆլեքսիա, օկոնчանութեամաս և առաջարկած կապակցիան մեծ մասամբ «վերջավորություններ» միջոցով եւ ավելացած լինում, կարող եւ կատարվել մեր լեզվում և բառավերջի ածանցի մեջ կամ հենց իրեն բառի մեջ. հմմտ. «մտավորականություն — մտավորականության» կամ «տուն — տան», ուր վոչինչ չի ավելանում, բայց, որինակ, քաղաք — քաղաքի — քաղաքից — քաղաքով — քաղաքում այդ փունկցիոնալ հարաբերությունն արտահայտվում է նոր մասնիկների — («վերջավորություններ») հավելմամբ*: (Այդ մասին մանրամասնորեն տես «Զեւրանության» մեջ):

Մեր այս «արտասանվածի վերլուծությունը» բերում է մեզ այն յեղրակացության, վոր խոսքի մեջ մենք գործ ունենք վորոշակտելի տարրերի հետ: Նախ՝ գործ ունենք հնչյունների հետ, հնչյունական կողմի հետ, հետո՝ կա այդ հնչյունական ձևով իմաստի կամ մաքի ամբողջությունն իր բաղկացուցիչ իմաստալից կտորներով (բառեր, մասնիկ — ածանցներ) և վերջը՝ նախադասության ձևական մասը, վորն արտահայտվում է թե բառերի փունկցիոնալ կապով (մասնիկ — Փլեքսիայով), բառերի դասավորությամբ և այլն: Այդ վերջին ձևական մասը քերականները բաժանում են յերկու մասի — «ձևաբանություն» նեղ իմաստով, վերցրած սոսկ յերկրորդական ձևը բառի մեջ, և «շարահյուսություն»՝ այդ ձևերի արտահայտչական կողմը բառերի դասավորման մեջ (ինչպես և բառերի ու նախադասությունների դասավորումը և արտահայտչականը): Այդ յերկումն ել արտահայտում են խոսքի ձևական մասը՝ կազմելով «քերականությունը»: Մենք, յերբ մտածում ենք, անշուշտ այդ լեզվական մտածողությունը կատարում ենք հնչապատկերների թուրք: բառերի հնչապատկեր-

* Մի ժամանակ մեր գաղոցներում սովորեցնում եյին, հենվելով մեր մի հայտնի հայագետի վրա, վոր այդ «քաղաք», քաղաքի, քաղաքից, քաղաքով, քաղաքում — առանձին բառեր են, առանձին բառիմաստներ են, այնինչ ամենուրեք գրանք «քաղաք» են նշանակում, իմաստն անփոփոխ է, միայն փունկցիաներն են տարբեր:

ների միջոցով: Այդ հնչական մասը, կատարվի դա մեր մեջ՝ ներքուստ, թե գրակորպի (այս ինդրում այդ մեկ ե), մենք անհրաժեշտորեն գործ ունենք այս «հնչաբանական» կատեգորիայի հետ, և հետեւապես՝ այս «ընդհանուր լեզվաբանություն» առարկայի մեջ հենց առաջին գննելի մասը պիտի լինի այդ հընդունաբանությունը: Հետո, քննելու յենք լեզվի (խոսքի) ձևաբանական կամ ստրոկակտոր կողմը, ներառյալ և շարահյուսությունը, և ի վերջո՞ նաև բառագիտությունը և իմաստաբանությունը, այսինքն՝ բառերն ու նրանց նշանակողական — իմաստական մասը, (սեմանտիկա): Այդ բոլոր մասերն անշուշտ պիտի վերցվեն թե ստատիկ և թե դինամիկ՝ պատճական ասպեկտներով: Բացի այս և մի շարք այլ գլոտանոգիական ինդիքներից (լեզվի ծագումը, ընթացքը և այլն), մեզ նմանապես մտն պիտի լինի և լեզվի «գրային» ձևը, թեպետև հետագայում եւ դա առաջ գալիս և հնչական լեզվի զիմաց կրում և «արտաեզրվային» բնույթի: Բայց քանի վոր «գրային» լեզուն քաղաքակրթական հսկայական նշանակություն ունի, ազգում և նաև ազգային գրական լեզու ստեղծելու վրա, ինչպես նաև հնչական լեզվի արտահայտության ընդհանուրացման և գրա պահպանման վրա, — ուստի այդ «գրային» լեզուն ևս պիտի մտնի «ընդհանուր լեզվաբանության» առարկայի մեջ, թող թե գրի նշանակությունը մեր ապագա միջազգային լեզվի կոնսոլիդացիայի խնդրում:

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(ՓՈԽԵՏԻԿԱ)

Մ Ա Ս Ի

(ՀՆՉՅՈՒՆԵՐԻ ՖԻԶԻՈԳԻԱ)

Խոսքի վերլուծման ժամանակ մենք տեսանք, վոր նախադաւության հիմնական ատաղձը կամ մատերիալը հնչյուններն են (Փոնեմաներ), վոր մինչեւ անգամ լուռ մտածելիս կամ լուռ կարտալիս մենք այդ լեզվական մտածողության պրոցեսը հնչյունական մտապատկերներով ենք կատարում, բայց բառերի հնչական մտապատկերներով: Թողնելով նախադասության մյուս հիմնական տարրերը (ձևաբանություն և իմաստաբանություն), մենք այստեղ ձեռնամուխ լինենք լեզվի հնչյունական տարրերի ուսումնափրության:

Հնչյունն առանձին վերջնելով, թերևս, մենք գրանով արըստրակցիա յենք կատարում, այսինքն՝ կենդանի հնչյունը հանում ենք կենդանի խոսքի կամ բառի միջից, բայց ուսումնասիրության այլ յեղանակ մենք չունենք: Պետք եւ ընդգծել սակայն, վոր կան և առանձին հնչյուններ, իրեն բառեր կամ բառի դեր կատարողներ, հմմտ, յեւ ու դու, ուսւաց օ հեմ; յ ա տի; յ ցօրօրի, ա օն հե слушает..., բայց թե գրանք ել վերջ ի վերջու իրենց գիրքով հնչյունների շարքի մեջ են և մասամբ զրանց աղղեցությունն են կրում. այդ «միայնակ» հնչյուններն անգամ անանջատ չեն և պայմանափորվում են (աջից և ձախից) հարեւան հնչյունների գիրքով և վորակով:

Մենք արդեն մատնանշել ելինք (առաջին մասում), վոր հնչյուններն ընդհանրապես կարող ենք յերկու մոտեցումով ուսումնասիրել—ստամֆիլ վիճակում, այն եւ մի տվյալ ժամանակաշրջանում և դիմամիկ վիճակում, այսինքն՝ հնչյունական պատմական գարգացումը: Յուր տեղում մենք ցույց կտանք, վոր հընչյունների ստամփիկան («կացությունը») անգամ իր մեջ պարու-

նակում ե շաբժումնային վիճակ և մոմենտներ և հետևապես այն բաժանումը, վոր տալիս են լեզվագետ բողունենդը կուրտենեն և ուրիշները, մենք պետք ե ընդունենք պայմանական ձևով: Այդ բաժանմամբ ընդհանություն՝ «հնչյունաբանություն» հատվածը պիտի բաղկանա յերկու հիմնական մասերից—հնչյունների այժմյան արտաբերությունն իր բոլոր կողմերով («ստատիկա շաբաթ») և հընչյունների պատմական փոփոխությունները («դինամիկա շաբաթ»):

«հնչյունաբանություն» ասելով, մենք հասկանում ենք այն, ինչ լեզվաբանները հասկանում են «Փոնետիկա» անվան տակ (հունարեն բառ ե): Սխալ և հայերեն թարգմանելեած գործածել «հնչյաբանություն»: Վորովհետեւ մենք հնչելու ուսմունքը չենք տալիս, վորն ի միջի այլոց կոչվում է «Փոնոլոգիա», «Փոնացիա», այլ տալիս ենք կրնկրետ հնչյունի ուսումնասիրությունը, այդ հնչյունի ուսմունքը (=հնչյունաբանությունը): Ել չենք խսում այն մասին, թե այդ «հնչյունաբանության» անվան տակ մտնում է նաև հնչյունի պատմական կյանքը, նրա պատմական փոփոխությունները, հետևապես այստեղ չկա հնչյաբանություն*:

Իսկ հնչյունն առանձին վերցրած այնչափ մեզ համար նշանակություն ունի, իբրև վերլուծելի առարկա («որքեկտու»), վորչափով նա կազմում ե լեզվի հասարակական գիտակցման մեջ անհրաժեշտ և հշանակելի տարր և մեր հոգեկանության մեջ մի ամբողջություն, այսինքն՝ վորչափով մենք ունենք նրա ամբողջական պարտապիկը պատկերացումը—հիշողությունը: Հետևապես այդ հնչյունն իրեւ «Փոնեմա» յեւ ի հայտ գալիս մեր մեջ և իրեւ այլ պիտին կազմում լեզվի հիմնական ատաղձը, շինանյութը: Ակուստիկական, հոգեկան և պատմահասարակական յուրացման մեջ գոնեման անքակտելի վորակ ե:

Այդ հնչյուն-փոնեման կարող ելինել շատ պարզ (ա, ե, օ,... և, լ, տ...): բայց կարող ելինել և բարդ (Ձ=Ջ, Ձ=Ճ, Ը=Ծ...) կազմված լինելով յերբեմն յերեք հնչական միավորներից, ինչպես ունեն, որինակ, արխագները (թ+փ+ս, իբրև մի հնչյուն): Սկզբանական այդ բարդ, անանջատ հնչյունները կոչվում եյն «գիֆփուզոփիպ» հնչյուններ: Սակայն չի կարելի ասել վոր միջա բար-

* Ավելի սխալ կլիներ գործածել «Ճայնախոսություն» տերմինը, վոր գործ ե ածում, որինակ ընկ. Աճայանը, քանի վոր «Ճայն» (ГОЛОՅ) կոչվածը մտնում ե միայն ստիմանափակ հնչյունների մեջ (Ճայնավոր, սոնանտ), վորոնց հակադրում են «աղմկավորները»:

գերը վեր են ածվում պարզերի, կա և հակառակ պատմական յեւրիութը—պարզի վերածվելը բարդի:

Բայց, ընդհանրապես, իբրև փաստ պետք է ընդունել, վոր սկզբնական շրջանում յեղել են ավելի դժվար հնչյուն-ազմուկներ և այն ել արտասանվելիս են յեղել գլխավորապես կոկորդում. հետագայում արտասանության բովը դառնում է բերանի խոռոչը, իսկ կոկորդային դժվարաբասանելի շատ հնչյուններ անհետանում են, ինչպես, որինակ, վրաց յ (է) հնչյունն այժմ անհետանում ե մինդրելերենում (արդեն չկա լաղերենում) կամ հին վրաց քի բարդը վեր և ածվել այժմ միայն «ի» պարզի: Նույնը նկատում ենք և արարերենում, ուր հին «այն» (չ) բաղաձայն այժմ վեր և ածվել կոկորդի սոսկ կծկման («ընդհատման»):

Արտասանության համար պետք է նկատի առնել նաև այն հանգամանքը, վոր սկզբնական շրջանում, յերբ մարդս նոր եր դուրս գալիս կապկային վիճակից, հավանորեն շատ են յեղել «ներշնչական» հնչյուններ, ինչպես այդ մասամբ մնացել և այժմ վայրենիների մեջ՝ Աֆրիկայի բուշմենների (6 «հնչյուն») և հոթենատների մեջ (4 «հնչյուն»): Այդ «ներասանելի» հնչյունները նման են արու հնդկանավի գլուցին, այսինքն՝ գրանց արտաքերումը (արտիկուլացիա) կատարվում է որի ներշնչման ժամանակ և վոչ թե արտաշնչման, ինչպես լինում է այժմ մեր այժմյան արտասանության ժամանակ:

Կենդանիներից այժմ միայն թութակներն են, վոր կարող են մեր մարդկային հնչյուններն արտաքերել, ունենալով յերեկ ավելի դյուրին արտասանական ասլպարատ, քան այլ կենդանիները:

Լեզվի հնչյունն ունի յերեք կողմ՝ ընագիտական, հոգեկան և սոցիալ-պատմական: Առաջինի մեջ մտնում են հնչյունի ֆիզիոլոգիական-անատոմիական, ֆիզիկական (ողի ալիքները) և ակուստիքական-ֆիզիոլոգիական («լսողություն») մոմենտները: Յերեքրորդի (հոգեկանի) մեջ մտնում է հնչյունի ընդհանուր մտապատկերը կամ պատկերացումը (հիշողությունը), առանց վորի մենք չենք կարող կոնկրետ հնչյունն արտաքերել: Յեզ վերջապես, հնչյունի յերրորդ կողմը՝ նրա սոցիալ-պատմական պատվանդանն է, վորովհետեւ, այդ հնչյունները գոյացել են մեր մեջ կոլեկտիվի հարկադիր կազմավորմամբ և այնչափ արժեք ունեն անհատի մեջ, վորքան այդ հնչյունը դրեթե նույն արտիւ-

կուլացիայով գոյություն ունի մշտական անհատների մեջ, ապա թե վոչ հասարակական լեզու չեր ստացվի:

Մեր քննելի նյութն եւ լինելու հնչյունի ընագիտական կողմը և այն ել՝ բնախոսական («Փիզիոլոգիական») մասը, այսինքն՝ թե ինչպես եւ արտաքերվում հնչյունը մեր արտասանական ապարատի միջոցով և ինչ խմբերի յեն այդ հնչյունները բաժանվում («հնչյունների ֆիզիոլոգիան և կլասսիֆիկացիան»): Այս մասի բովանդակալից իմացումը մեծ գործադրական նշանաւնկություն ունի լեզվաբանության մեջ, թեպետ ինարկե հնչյունի այդ ֆիզիկո-ֆիզիոլոգիական կողմը արգասավորվում եւ և կապակցվում նրա մյուս կողմերով:

ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԱՊՊԱՐԱՏԸՆԿ

Մեր լեզվի գործարաններն ըստ իրենց գերախաղացության բաժանվում են յերեք տեսակի՝ գեկավարող (վարիչ) գործարան, կատարողական գործարան և ընդունող գործարան: Եվկավարող գործարանի գերը խաղում ե, ինչպես հայտնի յի, ուղեղը, վորի հանդեպ հոգեկան-լեզվային գործունեյությունը դեռ մնաւմ ե մըթին և մեծ մասամբ անմատչելի գիտական հետազոտության: Մենք գիտենք միայն վորոշ կետեր այդ ուղեղում, վորոնք կենացքունն են կազմում խոսելու, զրելու և այլն*: Կատարողական գործարանը արտասանելիի (վորման) ապարատն է, իսկ լեզվի գրային («ռեպրոդուկտիվ») ձևի նկատմամբ՝ նախ ձեռքը և այլնայլ զրող մերժենաներ-զրամեքենաներ: Վերջապես ընդունող գործարանն ե՝ ականջը, իսկ «գրային լեզվի» նկատմամբ՝ նաև աչքը:

Կատարողական և ընդունող գործարանները կապված են մեր ուղեղի հետ յերկու տեսակ նյարդային հաղորդիչներով՝ կենտրոնախույս ու կենտրոնաձիգ: Կենտրոնախույս արտասանական պրոցեսը կոչվում է «գոնացիա», իսկ ընդունող՝ կենտրոնաձիգ պլրոցեսը կոչվում է «առողջիցիա»: Իսկ այն պրոցեսները, վորոնք կատարվում են անհատական ուղեղում, իբրև հոգե-քիմիկական հականներգործությունների ամբողջություններ, կոչվում են ցե-

* Խոսելու (արտաքերելու) կենտրոնը գտնվում է մեր ուղեղի ձախ կեպանդի յերրորդ խորշում՝ գալարում (ԻԶՎՈՒԻՆԱ), վոր կոչվում է Բըրկայի կենտրոն, խոսելու խանգարումը կոչվում է ափազիա: Հիշողության կենտրոնը դրա (Բըրկայի կենտրոնի) մոտ է (Վերնիկեյի կենտրոն), վորի խանգարումը կոչվում է ամփեղիա: Գրելու խանգարումը կոչվում է ազրափիա:

բերացիս» (լատիներեն սերեբրում =ուղեղ), — լեզվի վերաբերամամբ՝ լեզվային ցերերացիս» (ըստ Բոդուեն դը Կուրտինենի):*

Գալով բուն արտասանական ապարատի նկարագրության, մենք այդուեղ պիտի ընդգծենք մի քանի մասեր: Նաև, սկզբնային մասը — դա կրծքի խոռոչն է, վորն արտասանության համար նյութ (=ոդ) և մատակարարում և վորը միակ կարգավորիչն է վանկավոր («սիլլարիկ») արտասանության, ինչքան առանձին արտաշնչումներ կան — այնքան ել վանկեր կան: Բացի գրանից, կրծքային խոռոչը հարմարվում է արտասանական (կատարողական) գործարանի մյուս մասերին, ավելացնելով կամ նվազեցնելով արտաշնչման ողի քանակը:

Կրծքային խոռոչի մասերն են — ստոծանին (diafragma) և թոքերը, վորոնք շնչափողի հետ մեր արտաշնչման գործարաններն են հանդիսանում: Միշանկյալ պիտի ասվի, վոր ստոծանու ընդհատ կծկվելու ժամանակ առաջանում են տարրեր և արտասովոր հնչյուններ: Որինակ, յերբ այդ ստոծանու ընդհատ կը կը վելուն միանում է ողի ներշնչումը, այն ժամանակ ստացվում է այն, ինչ վոր կոչում ենք «հեծկլտանք», «հեծկեկանք» (րիձան): Իսկ այն ժամանակ, յերբ այդպիսի ընդհատ կծկվելուն միանում է ողի արտաշնչումը, առաջանում է փոնջտալը (փիշանում) և, յերբ այդպիսի արտաշնչումը բաժանվում է մի շարք հրնդումների, զարկերի (толчок):

Հետեյալ մասը — կոկորդն է (larynx), վորով վերջավորվում և մեր շնչափողը (trachea): Կոկորդը սահմանափակվում է առջեց վահանաձև խրճիկով (cartilago thyreoida), վորը դուրս է պրծած և պարունակում է իր միջ «կաղիկ» կամ «Աղամյան խնձոր» կոչվածը: Այդ վերջինը տղամարդկանց մոտ ավելի յե առաջ յեկած, քան թե կանանց, իսկ այդ հանգամանքը կապակցություն ունի ձայնալարերի յերկարության հետ և հետեապես ձայնի կամ «տոռնի» բարձրության հետ:

Ձայնալարերը (chordae vocales) միացած և ամրացված են վահանաձև խրճիկի վրա, թեքված են միմյանց վրա և հետեապես կազմում են անկյուն, դրա կատարն է միայն հանգչում վա-

* Դա մի բարդ կոռրդինացիս և աղերսակցություն է կատարողական (բրոկայի) կենտրոնի արտասանական ապարատի և նիշության (Վերնիկեյի) կենտրոնների միջև: Այդ համապարծակցության խախտումն առաջ է բերում լեզվական դեֆեկտներ (ափաղիս, ամնեզիս, ագրաֆիս, թրվատություն, կո-

հանաձև խրճիկի վրա, իսկ մնացած մասերը հանգչում են այսպիս կոչված «դրզալաձև» կամ «բրզաձև» փոքրիկ խրճիկների վրա (черпаловидные или пирамidalные хрящи) — աջ մասը՝ աջ խրճիկի վրա, ձախ մասը՝ ձախ խրճիկի վրա: Ձայնալարերի միջին անկյունը (ծերպը), վորը կոչվում է րիմա glottidis («ձայնածերպ») և շատ նման է բերնի շրթունքներին, կարող է ընդունել այլայլ դրություններ: Մինչև իսկ դրանք կարող են սերտ միանալ և ծերպ չկազմել: Ձայնալարերը հանդիսանում են մեր կազմարանքի գլխավոր յերաժշտական գործիքը. դրանք են միակ աղբյուրը յերգեցողության, բայց վոչ սակայ գեր են խաղում և հնչյունների արտասանության ժամանակ, մանավանդ «ձայնավորների» և «սոնանաների»: «Խուլ» հնչյունների ժամանակ ձայնալարերն այնքան են արձակ, վոր թոքերից հոսող ողը չի կարողանում յերաժշտորեն շարժել նրանց: Ձայնի «ինտոնացիաները» նմանապես ձայնալարերի արգասիքն են: Շնչելիս (шօպօտ) ձայնավորները չեն ստանում ձայնալարերի աշխատանքը:

Ի միջի այլոց, կոկորդի գործունեյությամբ է պայմանավորված և ի հնչյունը (придыхание, spiritus), վորը ճիշտ կլիներ կոչել «չնչյուն», թեպես դա փոնեմա յե և ամեն լեզվում չի գտնվում*:

Կոկորդի վերեկից գտնվում է մի «մակալեզու» (epiglottis, надгортанник), վորը կարող է կոկորդը բացել կամ ծածկել. նա բարձրացած է վերեկ՝ շնչելու և արտասանության ժամանակ, իսկ ուսելու ժամանակ փակ է, վորպեսզի կերակուրը չանցնի շնչափողն ու թոքերը, իսկ այս վտանգավոր է կյանքի համար: Իջած մակալեզովի վրայով ամեն մի թանձր կամ հեղուկ նյութ գնում է վորկորը:

Կոկորդից հետո գալիս է բերնի խոռոչը (cavum oris), վորի հետին մասն է «յերախը» (pharynx, зев):

Բերնի խոռոչը մեր արտասանության ամենագլխավոր բովն է: Նրա յետերի և վերեկի մասում գտնվում է շարժվող քիմքային ծածկոցը — վարագույը (velum palati, небная занавеска) և փափուկ քիմքը (palatum molle, мягкое небо), վորը կոշտ և անշարժ քիմքը (palatum durum) շարունակությունն է և հնարագործությունն է տալիս բացել կամ դրացել քիմքը («ուղնգային»)

* Սովորական շնչառության ժամանակ ձայնալարերի ծերպը ավելի քիչ է բացված լինում, քան ի հնչյունի ժամանակ:

Խոռոչը կամ «քոանները» (choanae): Այնպես վոր փափուկ քիմքը մի դոնակի դեր ե խաղում, մի կողմից յերախի և բերնի խոռոչների միջև, իսկ մյուս կողմից՝ յերախի և քթի խոռոչների միջև: Սովորական շնչառության ժամանակ, յերբ մարդ չի խոռոչ, մեր փափուկ քիմքը իջած ե և ողն անցնելով քթի խոռոչի միջով կամ գուրս և գալիս, յերբ արտաշնչում ենք, կամ ներս և գնում մեր թոքերը յերբ մենք ներշնչում ենք: Արտասանության ժամանակ ավելի քիչ և պատճում, վոր փափուկ քիմքը իջած լինի և քթի խոռոչը («քոանները») բաց լինի. մեծ մասմբ այդ փափուկ քիմքը բարձրացած ե և քթի խոռոչը փակ է: Վերջինիս բաց լինելը տեղի ունի այսպես կոչված «ռնգային» (հօսօնեց) հնչյունների ժամանակ, ինչպես Տ, Պ, Ջ, Շ և այլն (համեմատիք քրանս. temps, տոն և այլն, ուր այդպիսի ոնդաշին ձայնավորներ կան): Այդ փափուկ քիմքը ցածից վերջանում է մի «լեզվակով» (uvula, յազչեկ), վորը հատուկ դեր ե խաղում վորոշ ցեղերի և անհատների արտասանության մեջ (որինակ ֆրանսիերնում, գերմանիերնում):

Ինչպես մեր բարանյին խոռոչը, նույնպես և քթինը, ամբողջ արտասանական—կատարողական գործարանի հանդեպ հանդիսանում և իբրև մի «վերամբարձ փող» (զերմաններն) An-satzrohr, ուռւ. надставная труба) և ծառայում ե, իբրև արձագագարան (резонатор) այն ձայնեղ ողի համար, վորը ձայնալարերի շարժումով և պայմանավորված: Քթի («ռնգային») խոռոչի ուղղությունը (արձագանքը), հատուկ և այսպես կոչված ոնդային հնչյուններին. իսկ բերնի խոռոչի ուղղությունը միանում է մյուս հնչյունների մեծամասնության, ինչպիսիք են ձայնեղ բաղաձայնները կազմում են դրանց կամ գլխավոր ելությունը (ձայնավոր, սոնանտ) կամ յերկրորդական (ձայնեղ բաղաձայն): Բերնի խոռոչի դիրքը փոփոխելու հետեւանքով, փոփոխվում է և դրա ուղղությունը, մասնավորապես ձայնավորների տարրերությունը կամ դիֆիկերնցիացիան առաջացնել և հենց այդպիսի փոփոխելի ուղղությունից, կախված բերնի այլ և այլ դրությունից: Բերնի խոռոչը կարող է նեղանալ և սեղմել այս ու այն շարժով գործարանների միջոցով, ինչպիսիք են՝ շրթունքները, լեզուն յուր մասեւ բով, փափուկ քիմքը և ստորին ծնողը: Արա հակառակն և ոնդային (քթի) խոռոչը, վորը կրավոր և միատեսակ դեր խառալով՝ տալիս և չփոփոխվող ուղղություն: դա հարկավ հետեւանք

և այն բանի, վոր քթի խոռոչը, իբրև ուղղությունը, չունի յուր մեջ շարժվելու գործարաններ, վորոնք կարողանային փոփոխել այդ ուղղությունը դեռ, նվազեցնելով կամ ավելացնելով ծավալը և հետեւապես ինքնուրույն հնչյուններ ու աղմուկներ առաջացնելով:

Այդ կողմից բերնի խոռոչը ամենահարուստ տարրերություններն ե տալիս: Դրա շարժվող գործարանները փոխակերպում են ամբողջ բերանային խոռոչի ձևը, (համեմատիք այս ձևը Ա, Ի, Օ, Ա, Ե, Ծ... և այլն ձայնավորների արտասանության ժամանակ): Յեզ այդպիսով, կարելի յե ասել, վոր բերանային խոռոչը հանդիսանում է ամենազգվածոր բովը («ոչախը») մեր արտասանական գործակատարությունների («արտիկուլացիանների») համար, հարկավ լեզվային արտահայտությունների նկատմամբ: Իսկ կոկորդի խոռոչը հանդիսանում է իբրև յերածշատական գործարան, յերգեցզության գլխավոր բովը:

Ամենաշարժուն որգանը լեզուն ե, վորի պատճառով, և շատ լեզուններում «լեզու-խոռոչը» նույն որգանի անունն է կրում (համեմատիք մեր «լեզու», ուռաց յազկ, լատին. lingua և այլն, բայց գերմ. Zunge=լեզու—որգան, Sprache=լեզու—խոռոչ): Լեզվի մեջ կարենը և լնդնշել՝ ա) լեզվի յետին կամ վերջին մասը յետնալեզվային գործունեյությամբ և զգացությամբ, բ) լեզվի միջին մասը յուր գործունեյությամբ և զգացությամբ, ս) լեզվի առաջին կամ սկզբնային մասը յուր գործունեյությամբ և զգացությամբ: Բացի զբանից, հարկավոր և տարբերել լեզվի պատճների և լեզվի միջին յերեսի գործունեյությունը և նշանակությունը. նմանավես պետք և տարբերել լեզվի ծայրը և այլն: Զպեաք և ծմոռանալ, սակայն, վոր արտասանության մեջ մասնակցություն և ցույց տալիս միայն լեզվի վերին լայն մասը, այն ինչ լեզվի տակը, նրա ստորին մասը կամ արմատը մնում է արտասանական շրջավայրից գուրա, թեպիտ առանց այդ ստորին մասի անհնարին և լեզվի վորեւ շարժում:

Ինչպես մեր բերանային խոռոչի բոլոր շարժուն գործարանները, նույնպես և այդ խոռոչի բոլոր անշարժ տեղերը բաշտացնայտ նկատելի յեն սովորական աչքով. մենք մեջ կարող ենք նկատել այդ, նայելով հայելու միջոցով կամ թե մի ուրիշ բերանը: Ավելի լավ են դիմում մեր այդ գործարանները շոշափմամբ, մինչեւ անդամ դրանց մկանային զգացուները կարելի յե դիմում կերպով ուժեղացնել վորպեսզի այդ գործարաններն ավելի զյուրազննելի դառնան:

ՅԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՅԵՎ ԱՂՄԿԱՅԻՆ ՀՆՉՅՈՒՆԵՐ

Հնչյունի առաջանալու ամենատարրական պրոցեսն այն է, վոր ողն անցնելով շնչափողի միջոցով գեղի կոկորդը, յերախը—բերանը, քիթը հանդիպում է այդ արտահօսման ժամանակ զանազան խոչընդոտների, վորոնց շնորհիվ և գոյանում են հնչյունները: Մենք վորոշակի պիտի տարբերենք հնչյունների յերկու տեսակներ—յերածշտական և աղմկային հնչյուններ: Աղմուկն այն հնչյունն է, վորն առաջ ե գալիս մեր վորեւ գործարանի վոչ պարբերական ճոճումներից կամ յերերումներից, իսկ յերածշտական հնչյունը, «տոնը» կազմվում է գործարանի պարբերական շարժումներից: Աղմուկներ են ստացվում և այն ժամանակ, յերբ միանում և գումարվում են այնպիսի զատկատ ալիքներ, կամ ալիքների հոսանքներ, վորոնց միմյանց հարաբերումը, «տեմբրը» ներդաշնակ չե: Այդ հնչյունատար ալիքներն ունեն յերկու տեսակ կիզակեններ՝ («Փոկումներ») գլխավոր և յերկրորդական, ուր այդ յերկրորդականը գոյանում է կամ յերկրորդական լսելի ամքներից կամ գլխավոր ալիքների կերպարանափոխումներից՝ շրնորհիվ ողափողի ողահունով հոսող ողաձեփ:

ՀՆՉՅՈՒՆԵՐԻ ԴԱԽԱՎԱՐԳՈՒՄԸ

Հնչյունների հիմնական խմբերն են—ձախավորներ և բաղաձայններ (гласный—vocalis, согласный—consonans) սակայն այժմյան լեզվաբանությունը դրանցից հանում է և յերրորդ խըմբակը—սոնանտ հնչյուններ («ձախարդներ»), վորոնք կարող են լինել թե բաղաձայն, թե ձախավոր և թե դիֆոնդի տարր:

Ձախավարների և սոնանտների արտասանության ժամանակ մեր ձախալարերն ամբողջապես գործում են. «Ձախի» դերը գերիշողն է և այդ տեսակետից ե, վոր այդ յերկու խումբ հնչյունները միացվում են իրեն սոնոր հնչյուններ: Ճիշտ է, դրանք կարելի յե արտասանել և առանց ձախալարերի ողնության, բայց դա կինք արտասանություն շնչումով (шօպօտ), յերբ փափսալով իսոսում:

Ձախավորների արտասանության յերկրորդ հիմնական պայմանն ու հատկությունն այն է, վոր բերնի խոսողն իրեւ արձագանգարան (ուղոնատոր) է ծառայում, և այդ խոսողում ողը աղատ խաղում և ուժեղանում է և արգելող պատճեշի չի հանդիպում: Ճիշտ է, բերնի խոսողը դրանց ժամանակ կերպարանա-

փոխվում է, վորով առաջ են գալիս և ձախավորների տեսակները (շնորհիվ լեզվի գիրքի, շրթումքների կլորացման և այլն),—սակայն դրանց արտաբերության հիմնական փոկումը կոկորդումն է, իսկ բերնի մեջ լեզվի այլայլ աստիճանի բարձրացումը խոչընդուռ չի կազմում ողի դուրս հոսելուն և արձագանգվելուն: Բերնի իսուոչը այնուամենայնիվ մնում է փուչ, դատարկ, այսինքն՝ առանց միջնորմների:

Հնչյունների անվանակոչությունը մենք պիտի տանք ըստ շարժվող գործարանների կամ, ինչպես բողուն դը-կուրտենեն եր ասում, ըստ մուրճերի (МОЛОТ) և վոչ թե ըստ զնդանների (հակավալինյա):

Յեթե հետեւնք պատմականության, հնչյունների բոլոր դասակարգումները պիտի տանենք յետևից (կոկորդից) լեզվի առաջ, լինեն դրանք ձախավոր, թե բաղաձայն, թե սոնանտ: Ի միջի այլոց հենց այլպես են վարվել հնդիկ քերականները, վորոնք իրենց այբուբենը (dēvanāgarī) նույնպես այդ ձեռվ են կազմել: Ապագա գիտական այբուբենը թերևս ընդգրկի այդ սկզբունքը, ինչպես մասամբ արվում է և այժմ լեզվագետների կողմից:

Զ Ա Յ Ն Ա Վ Ո Ր Ն Ե Ր *

Ինչպես արդեն ասվել է, ձախավորների արտասանության ժամանակ այն ողը, վոր արտահօսում է թոքերից, կոկորդում ձախնել ընույթ և ստանում շնորհիվ մեր ձախալարերի և հետո, իր արտահօսման շարունակության ընթացքում, վոչ մի տեղ չի հանդիպում ընդհանուր կամ մասնավոր խոչընդուռի: Իսկ բերանային խոսողը դրա համար ուղղուատորի գեր և խաղում,—մի բան, վոր կարող է կատարել և քթի խոսոչը, «ոնդայնություն» պատճառելով այդ ձախավորներին:

Բերանային ուղղուատորի ձեռ կերպարանափոխվում է շրնորհիվ լեզվի, փափուկ քիմքի և մասամբ շրթումքների փոխադարձ հարակցության: Յեթե լեզուն վերև է բարձրանում իր յետին մասով, մոտենալով փափուկ քիմքին, բայց ի հարկե չկպչելով նրան, այն ժամանակ ստացվում է ձախավորների այն շար-

* Ձախավորների այսաեղ բերվող կաստիֆիկացիան վերջնականապես ձևակերպեց անգլիական լեզվաբան Henry Sweet (Հենրի Սյուիտ), վոր և ընդունված է այժմ բոլորի կողմից:

քը, վոր անվանում են «յետնալեղվային» (այլ անվանակոչությամբ՝ «յետնաքիմքային»): Հետո, յերբ այդ լեզուն իր միջին մասովն ե բարձրանում, վորը յետին մասից քիչ առաջ ե և մոտենում է փափուկ ու կոշտ քիմքերի բաժանմուն կետին, այն ժամանակ ստացվում են «միջնալեղվային» ձայնավորներ («միջնաքիմքային ձայնավորներ»): Վերջապես, յերբ լեզուն իր ավելի առջևի, բայց վոչ սկզբնական, մասովն ե բարձրանում, չկոչելով սակայն կոշտ քիմքին, այն ժամանակ առաջանում են «առաջնալեղվային» («առաջնաքիմքային») շարքի ձայնավորներ: Նման գեր ե խաղում լեզուն իր յերեք մասերով նաև բաղաձայնների նկատմամբ, բայց այդ յերեք մասերը չեն զուգադիպում իրար, վորովհետեւ, ինչպես կտեսնենք, բաղաձայնների նկատմամբ լեզվի յերեք մասերն առջևի:

Ուրեմն, ձայնավոր հնչյունների ժամանակ լեզուն կարող է մեր բերնի խոռոչին, իրքի սեղոնատորի, յերեք ձեւափոխումներ (գրություններ) պատճառել բարձրանալով իր յետին, քիչ առջևի և ավելի առջևի մասերով: Բայց լեզուն այդ յերեք կետերում կարող է և տարբեր ստափճանների բարձրացում ունենած սկսած ամենաբարձր ստափճանից, յերբ լեզուն քիչ և մուռա վոր մոտենա քիմքին, և վերջացնելով ամենանվազ ստափճանի բարձրացումով: Այնպես վոր լեզվի ամեն մի մասի պեսպես դրությունները ևս պատճառ կարող են դայնավորների ավելի նոր տարբերացման՝ դիֆֆերենցիայի: Այդ տեսակետից մենք պիտի ընդունենք հիմնականորեն լեզվի յերեք բարձրացումներ իր յերեք մասերում—ստորին բարձրացում, միջին բարձրացում և վերին բարձրացում: Հետևապես, մենք կարող ենք տարբերել ինսը տեսակ ձայնավորներ, աչքաթող աներով լեզվի յերեք մասերի (գրությունների) անցողական միջին մոմենտները: Բայց այս վերոհիշյալ բաժանման սկզբունքից (principium divisionis), վոր կատարում ենք ձայնավորների նկատմամբ, սրան ավելացվում է և լեզվի կծկված կամ «փուփած» (հանգիստ) բարձրացման յեղանակները—այնպես վոր իննը տեսակ հիմնական ձայնավորները տեղատեղ կարող են դառնալ 18, այսինքն՝ կրկնապատկվել: Լեզվի այդ կծկված բարձրանալու ժամանակ բերնի խոռոչն ավելի յե նեղանում: այդ պատճառով ել այդ տեսակի ձայնավորները կոչվում են «նեղ» կամ «գող» («փակ»), վորի հակառակն են «լայն» կամ «բաց» ձայնավորները: «Նեղ» և «լայն» տերմինները պատշաճնում են անգլիացի հնչյունաբաններին, իսկ «գող» («փակ»)

և «բաց» տերմինները՝ ոռւս հնչյունաբաններին: Այնպես վոր, նայած լեզվի կծկվածորեն թե արձակ բարձրանալուն այդ լեզվի յերեք կետերում, և այն ել՝ յերեք աստիճանով, ստացվում են իննը «նեղ» ձայնավոր և իննը «լայն» ձայնավոր, ուր յուրաքանչյուր նեղ թե լայն տեսակը լոկ նրբություն ե կազմում և մեր լոռությամբ հաղիկ ե նշմարվում:

Այդ բոլոր (18) ձայնավորները կարելի յե արտասանել նաև մեր շրթունքների կլորացումով կամ առաջ յերկայնացնելով, վորով առաջ կգան նույնչափ (18) «շրթնային» (ըստնույթի) ձայնավորներ:

Իսկ այդ բոլոր ձայնավորները՝ լինեն գրանք սովորական թե շրթնային, կարող են ստանալ և ուսպային նրբավորություն, յերբ բերնի խոռոչից ողն անցնում ե քթիլիսուոչը:

Յետին վոչ շրթնայնացած շարքի ձայնավորները «ա» ձայնավորի այլայլ տեսակներն են, վորոնք կարող են լինել մի կողմից նեղ և լայն և մյուս կողմից՝ վերին, միջին և ստորին: Այդ «ա»-ի տեսակներն ակուստիկորեն շատ մոտ են իրար: Որինակ, ոռւսերեն թագուի մեջ գոյություն ունի յետին վոչ շրթնայնացած ստորին ձայնավորը, իսկ նույն շարքի միջին «նեղ»-ը տալիս ե անգլերեն ետ բառի միջում հնչվող ձայնավորը. անգլերեն father բառի մեջ «ա»-ն ունի միջին և «լայն» բարձրացում, գերմաներեն vater բառը հյուսիսային գերմանացիների մոտ ունի միջին և լայն դիրք, իսկ հարավային Գերմանիայում համազոր ե ոռւսաց «ա» ձայնավորին թագուի մեջ, այսինքն՝ ըստորին և լայն ե: Հայոց «ա»-ն յետնալեղվային միջին բարձրությամբ ե:

Յետին շրթնայնացած շարքի ձայնավորներն են՝ 1) վերին ձայնավոր և (հայոց ու), նեղ և լայն, 2) միջինը՝ օ նեղ և լայն, ստորինը՝ ձ: Որինակ, յետին շրթնայնացած ստորին նեղ ձայնավորն ե անգլ. all բառի ա ձայնավորը, իսկ լայնը՝ անգլ. not օ գրության հնչյունը: Միջին նեղ ձայնավորն ե գերմ. so, ֆըրմանս. seu բառերի մեջ, իսկ միջին լայնը՝ ոռւսաց ՅՈՅ, անգլ. no, գերմ. voll բառերի մեջ: Վերին նեղ ձայնավորն ե գերմ. di, ֆըրմա. sou, անգլ. ooze բառերի մեջ, իսկ վերին լայնը՝ ոռւսաց դյու, անգլ. full, գերմ. Mutter բառերի մեջ:

Միջին լեզվային վոչ շրթնայնացած շարքում՝ 1) ա՝ կամ թ՝ —ստորին նեղ ձայնավորը անգլ. bird բառի մեջ և լայնը՝ անգլ. how բառի մեջ, 2) թ—միջին նեղը՝ գերման. Gabe բառի

վերջին հնչյունը (մոտ մեր «ը» հնչյունին), 3) ել („յ“) — վերին նեղը՝ ոռւսաց ցան բառի մեջ:

Միջնալեզվային շրթնայնացած շարքում հայտնի յեն՝ 1) վերին ել, 2) միջին թ, 3) ստորին ձե կամ թա: Ֆրանսերեն homme (=մարդ) բառի առաջին վանկում ունենք միջին բարձրացման լայն շրթնայնացած ձայնավորը:

Առաջնալեզվային վոչ շրթնայնացած շարքում՝ 1) ձե կամ թա — ստորին բարձրացման նեղ ձայնավորն ունենք, որինակ, անգլ. let, ֆրանս. bête բառերի մեջ, իսկ ստորին լայնը՝ անգլ. man, ֆրանս. vin բառերի մեջ. 2) ե—միջին բարձրացման նեղը՝ ոռւսաց սելի, գերմ. see, ֆրանս. été, անգլերեն day բառերի մեջ. այդպիս և և մեր հին է ձայնավորը. իսկ միջին բարձրացման լայնը՝ ոռւսաց սելա, անգլ. men, գերմ. Männer կամ Aehre բառերի մեջ. այդպիս և և հայոց «ե» հնչյունը. 3) ի—վերին բարձրացման նեղը՝ ոռւսաց միլյ, միլ, անգլ. feel, ֆրանս. fini, գերմ. sie բառերի մեջ, իսկ վերին լայնը՝ ոռւսաց միլա, անգլերեն bit, գերմ. Tisch բառերի մեջ:

Առաջնալեզվային շրթնայնացած շարքում՝ 1) օ—միջին բարձրացման նեղը՝ գերման. schön, Töne, ֆրանս. reti բառերի մեջ, իսկ միջին լայնը՝ ֆրանսերեն peuple, գերմաներեն Völker բառերի մեջ. 2) ն—վերին բարձրացման նեղը՝ գերմ. über, Glück, ֆրանս. lune, սու, բառերի մեջ, իսկ վերին լայնը՝ գերմաներեն schützen բառի մեջ. 3) ստորին բարձրացման ձայնավորներն են՝ այ, օ:

Ահավասիկ սխեմատիկ աղյուսակը

I

ՎՈՉ ՇՐԹՆԱՅՆԱՅՎԱԾ

	Յետին շարքը	Միջին շարքը	Առաջին շարքը
Ստորին բարձրացում	a ¹	a ² , թ ³	ա ⁴ , թ ⁵
Միջին —————	a ²	թ	ե
Վերին —————	a ³	ы	ի

II

ՇՐԹՆԱՅՆԱՅՎԱԾ ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐ

	Յետին աղյուսակին	Միջնալեզվային	Առաջնալեզվային
Ստորին բարձրացում	ա [a ⁰ , օ [~]]	ա ² , թ ³	ա ⁰ , օ ⁴
Միջին —————	օ	թ ⁰	օ.
Վերին —————	ս	ы ⁰	ի.

Այս բոլոր տեսակի ձայնավորները կարող են հնչվել և քթի ուղղուանսով և ստացվել նույն քանակի «ոնդային ձայնավորներ», վորոնք լեզվագիտության մեջ նշանակվում են ձայնավոր տառին կցված մի անկյունավոր գծով (ւ), ինչպես, որինակ օ, ա, ե, և այլն: Այդպիսի հնչյուններ կան, որինակ, ֆրանսերենում, հին սլավոներենում և այլն: Սլավոներենում կային «յուսաեր (յօս боլьшой և յօս маленький), վորոնք հնչվում եյին օ և, նման ֆրանս. front (ձակատ) և vin (գինի) բառերի ոնդային ձայնավորների (frø ve). այժմ այդ «յուսաերի տեղ ոռւսերենում տառաջցել են յ (մեծ յուսի տեղ, որինակ չըն չօբ-ից) և յ (փոքր յուսի տեղ): Հայերենում ընթացականչությունն ունի այդպիսի ոնդային յերկու «ը» ձայնավորներ (= թհ):

Հարկավոր և տարբերել այդ ոնդային ձայնավորները այն հնչյունական գումարից, վորը կարող է առաջանալ ձայնավորից և ոնդային բաղաձայնից (ա + ն, ե + ն...) կամ թե՛ ոնդային ձայնավորից և ոնդային բաղաձայնից (ա + ն, ե + ն...):

Մենք արդեն մատնանշել ենք, վոր ձայնավորները շնչյունի («փսփսոցի») ժամանակ կարող են արտասանվել առանց ձայնալարերի գործակցության կամ նրանց կիսատ (թերի) մասնակցությամբ, ինչպես, որինակ, գերմ. hatte բառի վերջին ձայնավորն և սովորաբար հնչվում: Այդ ժամանակ մեր արտասանական գործարաններն ունեն միենույն գրությունները, ինչպես ձայնավորների բովանդակ արտահայտությունների ժամանակ: Շնչյունի ժամանակ ձայնավորները մնում են անշարժ և ողն անցնում ե

իր նախկին հումոր, քսվելով ձայնավորների միջին ծերպի պատերին:

Բացի ձայնավորների այս վորակից կամ ձայնավորների այս արտաբերական ֆիզիոգիայից, կա նաև ձայնավորների քանակ:

Այդպես են, այսպես կոչված, շեշտավորված կամ անշեշտ ձայնավորները: Յեվ ավելին. լեզուներ կան, ուր այդ ձայնավորը կարող է լինել թե կարճ, թե յերկար, ինչպես մի շաբաթ «հնդկվուպական» լեզուներում: Լեզվաբաններն այդ ձայնավորները գրում են այսպես, ա, օ, է և այն, այսինքն ունենք ա—յերկար, օ—յերկար, օ—յերկար և այն: Յեթե մի լեզվում լինելին քանակի յերեք մոմենտներ՝ յերկար, միջին և կարճ ձայնավոր, այն ժամանակ պիտի նշանակվելին (դիցուք ա հնչյունի վերաբերյալ) այսպես ա (ա յերկար), ա (ա—ա միջին տևողության), ա (ա կարճ տևողության): Սովորաբար յերկար բաղաձայնից (ֆրանս. consonne géminée) առաջ ընկնում ե կարճ ձայնավոր. որինակ, ուսաց ցұմա (=պարկ) (բառի մեջ «յ»-ն յերկար ե, բայց ցұմա (=գումար) բառի մեջ «յ»-ն կարճ ե: Այդպես ե հայոց «շեպապել», «փազգել» և այլն գավառաբառերի մեջ ուժեղացած «պպ», «զզ» և այլ բաղաձայններից առաջ ընկնում ե կարճ ձայնավոր (ե, ա): Այսպես վոր տարբեր «օ»-եր են կոմүնիստ և կոմունիստ (կամ հայոց «կոմունիստ» և «կոմմունիստ») արտասանությունների մեջ:

Զայնավորների այս քանակը (= տևողությունը) մեծ նշանակություն ունի լեզուներում և հատկապես վոտանավորների չափի մեջ, վորտեղ այդ ձայնավորների քանակը բնորոշվում է կամ իր այդպես լինելով (naturā — «բնությամբ») կամ իր դիրքով («դրությամբ» — positione) նայած հետեւյալ բաղաձայնների քանակին: Հայոց լեզվի այժմյան գարգացման մեջ ձայնավորների այս քանակի հարաբերումը կարող է վճռական նշանակություն ունենալ ուղղագրության համար (որինակ, գրել «կոմունիստ», թե «կոմմունիստ» և այլն):

Բ Ա. 2. Ա. Զ Ա. Ց Ն Ե Ր

Բաղաձայն հնչյունները գոյանում են շնորհիվ այլքայլ լսոչընդուների, վորտեղ հանդիպում ե թոքերից հոսող ողբ՝ մեր կոկորդում և բերնում, և հետեւապես առաջանում է այն, վոր կոչում են «աղմուկներ» (шумы): Սակայն այդ աղմկային

տպալորությունները կարող են բարդվել և ձայնալարերի շաբանություններով, և հետեւապես աղմկային բաղաձայններն ստանում են նաև «ձայնեղ» բնույթ: Այս աղմկային բաղաձայններից բացի, մենք ունենք և «սոնանտ» բաղաձայններ, վորոնք քնննվելու յեն առանձին:

Բաղաձայնների գասակարգումը կազմվում է նույն ուղղությամբ, ինչ վոր և ձայնավորներին եր: Այստեղ ես գասակարգման սկզբունքն առնվում է լեզվի մասերի պես-պես գործողություններից: Յեթե ձայնավորի գոյանալու ժամանակ լեզուն բարձրանում է իր յերեք մասերով, բայց չի կպչում քիմքին, բաղաձայնների ժամանակ տեղի յեւնենում հակառակ յերևույթը՝ բերնի մեջ լեզվի մասերը կպչում կամ քսվում են քիմքին և պատճեններ կանգնեցնում թոքերից հոսող ողի հանդեպ:

Այդ լսոչընդուների տեղի տեսակետից մենք ունենում ենք յետնալեզվային, միջնալեզվային, առաջնալեզվային և շրթնային բաղաձայններ: Սակայն, ինչպես արգեն նկատվել ե, չպիտի շփոթել լեզվի այդ յերեք մասերի արտիկուլացիան ձայնավորների գոյացման նման յերեք մասերի հետ, վորոնք ալելի մոտ են, քանի բաղաձայնների արտաբերության ժամանակն ե: Շրթոնքների մասնակցությունը կարող է լինել կամ յերկու շրթունքների ողնությամբ (бигабиальные согласные) կամ ստորին շրթունքի և վերին շաբքի ատամների ողնությամբ, վորով ստացվում են «շրթնա-ատամնային» բաղաձայններ (համեմատիր մեր «Փ» հնչյունները):

Բաղաձայնի արտաբերումն այս չորս գլխավոր կետերում (յետնալեզվային, միջնալեզվային, առաջնալեզվային և շրթնային կամ շրթնա-ատամնային) կարող է լինել յերկու կերպ կամ յերկու յեղանակով. կամ որգաններն ուժեղ կերպով հալվում են և պայթում (այդ հալումը կոչվում է implosio, իսկ պայթումը՝ ex-plosio), կամ այդ որգաններն ունենում են փոքրիկ ծերպ—անցք (щель), և ողը հոսում է այդ միջանցքով գուրս, վորով ստացվում են տեսական բաղաձայններ: Այդպիսի յերկու արտասանության հետևանքով ստանում ենք պայթուցիկ կամ պայթական բաղաձայններ (взрывные согласные) և շփական կամ «սպիրանտ» կամ «փրիկատիվ» բաղաձայններ (щелинные, придувные согласные): Ակուստիկական տեսակետից պայթականները կարելի յեն անվանել վայրկենային, իսկ շփականները՝ տեսական:

Իսկ յեթե այս յերկու տեսակ բաղաձայնների արտաբերու-

Քյանը միացնենք նաև ձայնալարերի աշխատանքը՝ գործունելու-թյունը, այն ժամանակ կստացվեն և «ձայնեղ» պայթականներ և «ձայնեղ» սպիրանտներ (շփականներ):

Պետք է նկատել վոր այդ ձայնեղությունը թուլացնում և բաղաձայնի հիմնական արտիկուլացիան (=հպումը). որինակ, Յ (=մեր բ) թույլ և քան թ (=մեր պ), Վ (վ) թույլ և քան Ւ (Փ) և այլն:

Պայթական բաղաձայնները կարող են «հնչայնության» (աս-պիրացիա) յենթարկվել, որինակ թ (=հայոց պ) բաղաձայնը դառ-նալով թի կամ ինչպես վոմանք զբում են թ (=հայոց փ), կամ Յ բաղաձայնը դառնում ե թի (Ե) և այն: Այս դեպքում ասպի-րացիան թուլացնում ե պարզ պայթականնին. և որինակ, յեթե «Ե»ն թույլ և քան «Ր»ն (տես վերը), բայց «Ե»ն, թույլ և քան «Ը»ն: Գրադացիան ըստ ուժեղության և թուլության այս-պես Ե՝ Թ—Ե—Ե, այսինքն՝ ձայնեղությունը թուլացնում ե պարզ պայթականնին, իսկ հնչայնացնումը (ասպիրացիան) ավելի յե թու-լացնում: Կան լիզուներ, վորմանք կարծես չեն յենթարկվում այս «նորմային», ինչպես Ելզաս-Լոթարինգիայի գերմաններներ: Առ-պիրատը* հայերեն կարելի յե թարգմանել հնչեղ կամ ավելի լավ հնչական:

Այժմ տանք բաղաձայնների բոլոր տեսակները, հետևելով մեր բերած բաժանման սկզբունքին, այն Ե՝ ըստ բաղաձայնի ար-տարերման տեղի, կերպի (յեզնակի) և ձայնեղության կամ խուլության, իսկ պայթականները՝ շնչայնության տեսակետից ևս:

Բնական ե, վոր բաղաձայնների բոլոր տեսակները այսուղ չեն տրվելու, վորովհետև դրանց շատ նըրությունները մեր սովո-րական ականջով չեն ըմբռնվում կամ թե հայերենի արտա-սահմանական ունակությունից հեռու յեն, անմատչելի յեն: Լեզվա-բաններն ընդունում են, վոր ամեն մի ցեղային կամ ազգային արտասահմություն իր կազմավորման պրոցեսում ձեռք ե բերում այսպես կոչված «արտասահմական կամ հնչաբանական բաղա», հե-տեւապես և ունակություն:

Բաղաձայնների վերլուծման ընթացքը շատերը տալիս են ա-

* Ասպիրատ բառը լատիներեն ե, կազմված ad-spiratus—«ընդ-շնչայնա-ցած» (spiritus=շնչան, փողի), ինչպես աֆֆրիկատը կազմված ե ad-fricatus, այ-սինքն՝ ֆրիկատիվով (շփականով) բարդացած: Թե ասպիրատները և թե աֆֆ-րիկատները համարվում են բարդ հնչյուններ:

ուայից (շրթունքից) դեպի յետ, հակառակ պատմական զարգաց-ման իրականության: Թեպես այդ յեղանակը վորոյ դյուրություն և ներկայացնում մանկավարժական տեսակետից, վորովհետև ա-ռաջնալեզվային և շրթնային բաղաձայններն ավելի հեշտ են դի-տելի, բայց մենք այստեղ կվերցնենք դրանց վերլուծումը պատ-մական ընթացքի տեսակետից, այն, ինչ արեցինք և ձայնավոր-ների նկատմամբ:

ՅԵՑՆԱԼԵԶՎԱՅԻՆ ԲԱՐԱՋԱՅԱՅՆԵՐ

Յերբ լեզվի յերեսի յետին մասն իր այլայլ տեղերով կըպ-չում կամ քավում ե փափուկ քիմքին, առաջանում են և հնչյունի այլայլ տարրերակները: Ամենասովորական արտարերական «Կ»ն կլինի կա, կո, կս, կօ.... կոմպլեքսների մեջ, ինչպես և դրա «ց» ձայնեղ տեսակինը (ga, go, gu, gə...): Այդ «նորմալ» արտասահ-նությունից քիչ յետ արտարերվելուց առաջանում են խուլ կ կամ ձայնեղ ց բաղաձայնները, իսկ ավելի յետ՝ խուլ կ կամ ձայնեղ ց բաղաձայնները: Առաջին խուլ կ, կ և բաղաձայններն ունին, որինակ, վրացիք (գոնե կ և կ): Դրանց սպիրանտ տեսակներն են Խ (xa, xo, xu, xə...) կոմպլեքսներում) կամ Ղ* (հայոց Ղ) բաղաձայնները, վորոնք նմանապես կարող են յետ ու առաջ լի-նել լեզվի այդ յետին մասում: Կա և կոկորդային հ, հ' խուլ ըս-պիրանաը (որինակ արաբերենում) և դրանց ձայնեղ տեսակը, վորը կա, որինակ, հայոց բարբառներում (որինակ, ‘ամեն, ‘Aruthyun, ‘ari և այլ բառերի սկզբում): Իսկ մի շարք ցեղեր (ո-րինակ արաբները) ունեն կոկորդային պայթական բաղաձայն, վորն արտահայտվում ե կոկորդի ուժեղ սղմամբ և պայթումով:

Սովորական կ և ց յետնալեզվային բաղաձայնները մենք կարող ենք արտասահմել նաև ասպիրացիայով, այսինքն՝ դրանց շնչեղությամբ (և հնչյունի միացմամբ), վորով ստացվում են կհ (հայոց Ք-ը) կամ Ղի (պարբառային ց, որինակ ց'օմ, ց'ա-լիս եմ...):

* Այդ Կ տառը վերցված ե հունարեն այբուբենից («գամմա»=մեր գիմ-անունով տառն ե, այսինքն՝ գ հնչյունը): Այժմ գա գործ են ածում դ հնչյունի համար:

ՄԻՋՆԱԼԵԶՎՈՅԻՆ ԲԱՂԱՁԱՅՆԵՐ

Այստեղ ստացվում են նույն կ—ց (կամ սպիրանտ չ—շ) շարքի բաղաձայները այլևայլ նրբություններով յերբ լեզվի միջին մասն է կպչում կամ քսվում փափուկ և կոշտ քիմքերի մեջտեղին, այսինքն այն տեղին, փորակագ այդ քիմքերը դատվում են: Այդ կողմից՝ գրանը կոչվում են նաև «պալատար» բաղաձայներ: Միջնալեզվային այդ բաղաձայները հատկապես բնութագրվում են, յերբ դրանց (կ—ց, չ—շ) հաջորդում են օ, ի (յ) ձայնավորները: Յեվ այդ հանգամանքն է, զոր շատ լեզուներում այդ կ'ե, կ' կամ ց' օ, ց' օ կոմպլեքսը հեշտությամբ վեր և ածում—չե, չո (ճե ճի) կամ յօ, յի (ջե, ջի) նոր փորակների: Որինակ մեր մի շարք բարբառներում և մինչև իսկ զյուղերի թաղամասերում հաշում են «գինի»-ն, իբրև «ճյուղ» (գժինի > ջինի) և այն. նմանապես և ասպիրատ միջնալեզվային կ'հ, ց' հ պայթականաները օ և ի ձայնավորներից տուաջ հեշտությամբ տեղի յեն տուայս չե, չի կոմպլեքսին (որինակ, քերի > չերի):

Յետնալեզվային բաղաձայների այդ միջնալեզվայնացումը (օսքերածություն) կամ պալատալիզացիան մեծ դեր է խոսդում հատկապես ոռուերենում և քիչ զեր, որինակ, վրացերենում: Մեր մի շարք բարբառները, նմանապես ուժեղորդեն յենթարկվում են այդ հնչաւարտարերական յերևույթին: Գրաբարի «Ճեռանումն, ջեր-մն» բառերը միայն այդ ձեռվ են ջեռանումն, ջեր-մն ստացվել ց' հեր-չին արժատից: Նույն յերևույթն է խոսում և ոռուաց բեցու—բեցիած, պեկու—պեշեմ, լիք—լիզօ (личныи) և նման հնչափոխակերպումների մեջ: Միջնալեզվայնացումը նշվում է փլշկով (‘), դրված տառի վերին աջ անկյունում:

ԱՌԱՋՆԱԼԵԶՎՈՅԻՆ ԲԱՂԱՁԱՅՆԵՐ

Առաջնալեզվային բաղաձայների արտաքիրման տեղը ավելի ընդարձակ է, քան թերես մյուսներինը: Այստեղ լեզուն կարող է կպչել կամ քսվել ատամների յետերի մասից կամ դրանց արժամաներից («ալվուներից») սկսած մինչև կոշտ քիմքի վերջը. և հետեւապես կստեղծվեն «ատամնաքիմքային» (չշատություն), այսինքն՝ ատամնառաջնալեզվային, հետո՝ զուտ առաջնալեզվային (լեզվի ծայրի մասի բաղաձայներ) և քիչ յետը արտասանվող բաղաձայներ: Այս բոլոր տարբերակները կարող են լինել նաև խուլ և ձայնեղ, իսկ պայթականաները (խուլ թե ձայնեղ) նաև կա-

րող են յենթարկվել ասպիրացիայի: Հետևապես ստանում ենք առաջնալեզվային պայթական բաղաձայններ—խուլ է (=հայոց տ) և ձայնեղ մ (=հայոց դ), վորոնք կարող են արտասանվել այլին ձևափոխումներով, «նայած թե լեզվի առաջին մասի յերեսը կամ ծայրը կպչում է կամ կոշտ քիմքին, կամ ալվեոներին (վերին շարքի ատամների և քիմքի մեջտեղը), կամ վերին շարքի ատամների յետերի մասին (պատին) և կամ վերին ու ներքին շարք ատամների յետերի մասին միասնաբար: Յեթե լեզուն կըպչում է քիմքին վոչ թե ծայրով, այլ այդ առաջի մասի յերեսով և ատամներից հեռու (դեպի յետ), այն ժամանակ այդ է և բաղաձայնները դառնում են, ինչպես անստուգ առում եյին, «ցերերբալ» (սխալ թարգմանությունն է հին հնդկերենից). և գրում ենք է կամ է և գ կամ մ (մոտ են մեր «Ճ», «Ճ» բաղաձայններին, սակայն պարզ են և վոչ ափֆրիկատ՝ բարդ):

Իսկ առաջնալեզվային շվական կամ սպիրանտ—(«քսվող»= ֆրիկատիվ) կոչվող բաղաձայնները կինեն խուլ Տ (=հայոց Ա) և ձայնեղ Չ (=հայոց Ջ), վորոնք կոչվում են նաև «սուլիչ» (СВИСТАЩИЕ), հակադրելով դրանց «Հային» (ШИПЯЩИЕ)—Տ (=մեր Ճ) և Չ (=մեր Ջ) տարբերակներին: Վերջիններին (Տ, Չ) արտասանության ժամանակ լեզվի առաջին մասն ավելի յետ և զրգալած կորություն է կազմում, քան Տ և Չ սուլիչների նկատմամբ:

Յեթե է և գ (կամ է և գ) բաղաձայններն ասպիրացիայի յենթարկենք, կ'ստանանք թ (մեր Թ) և Ժ (մեր Ր) տարբեռներում կա, թեպետ այդտեղ ասպիրացիան ձայնեղ է): Իսկ դրանց շվական (Փրիկատիվ) ձևերը կինեն Օ և Շ հնչյունները (գրվում են հունարեն տառերով), վորոնք մոտ են անգլիերին թ բաղաձայնի յերկու հնչյուններին:

ՃՐԹՆԱՅԻՆ ԲԱՂԱՁԱՅՆԵՐ

Այստեղ կան իսկապես յերկու տեսակ բաղաձայններ.—Նախ, յերբ բաղաձայնը գոյանում է յերկու շրթունքների միացման (նպիկերու) կամ քսվելու ժամանակ (bilabiales, «բիլաբիալներ» = յերկշրթնային), և յերկորդը, յերբ բաղաձայնը գոյանում վերին ատամնաշարքի ու ստորին շրթունքի միջոցով և կոչվում է ատամնաշրթնային—(labio-dentalis): Այստեղ ստացվում են պայթական խուլ Պ (=մեր Ա), ձայնեղ Ծ (=մեր Բ), դրանց շվական տեսակները՝ խուլ Ւ (=մեր Փ) և ձայնեղ Վ (=մեր Վ),

վրբունցից թե յերկշրթնային են, իսկ և թարթնատամնային: Իսկ յեթե այդ յերկշրթնային թե բաղաձայններն ասպիրացիայի յենթարկենք, կ'ստանանք, ph (=մեր փ) և bh (համեմատիր սանսկրիտ բհ և հայոց բարբառների բհ, վորը ձայնեղ շնչումով ե):

Ա. Ֆ Ֆ Բ Ի Կ Ս Ն Ե Բ

Բնդհանրապես վերցրած, աֆֆրիկատները կազմվում են պայթականներից՝ (պարզ և ասպիրատ) և շփականներից, ըստ իրենց կազմության տեղի և ձայնեղության կամ խուլության: Որինակ, p+f > pf (գերմ. Pferd, Kampfh և նման բառերի մեջ), k+x > kh, վոր կար, որինակ, հին վրացերենում և այլն:

Հատկապես այդ բարդ* բաղաձայնները որգանապես ձուլվում են, յերբ կազմված են լինում առաջնալեզվային t ~ d կամ th ~ dh բաղաձայնների և s և š կամ z և ž շփականների միացմամբ: Այդ միացումը ակուստիկական տեսակետից մի ամբողջություն ե. իսկ արտաքրական (արտիկուլացիայի) տեսակետից շարունակվող (տեսկան) մոմենտը կազմում են հենց այդ սպիրանտները՝ շփականները s // š, z // ž: Յեկ այսպես ստանում ենք ts, վորը հավասար և մեր «ժ» աֆֆրիկատին, ts, վորը հավասար և մեր «ճ» աֆֆրիկատին. իսկ dz (ds անհնարին ե) բարդությունը տեսնում ենք մեր «ժ» բաղաձայնի մեջ, dz (dš անհնարին ե) բարդությունը՝ մեր «ջ» հնչյունի մեջ: Յեթե վերցնենք th և dh ասպիրատներն ու բարդենք s // š, z // ž շփականների հետ, կ'ստանանք ths (t̪s)=մեր «շ» (սուսաց ս), dhz (d̪z)=մեր բարբառային «ժ» (ձ'են, ձ'ու...), dhz (d̪ž)=մեր բարբառային «ջ» (ջ'ուր, ջ'արդել): Բայց այդմ, տեղի արտաքրման տեսակետից, նայած թե բարդությունը s-z շփականների հետ և, թե š-z, ստանում ենք առաջնալեզվային c (ծ), ç (ց), j (ձ), j̄ (ձ՛), իսկ մյուս կողմից միջնալեզվային (մոտավորապես) č (ճ), č (չ), ſ (լ), ſ̄ (լ՛): Բայց իլության կամ ձայնեղության c (ծ), ç (ց), ſ (լ), ſ̄ (լ՛) ենու են, իսկ j (ձ), j̄ (ձ՛) յ (լ), յ̄ (լ՛) ձայնեղ են:

* Բարդ են համարվում նաև ասպիրացիայի յենթարկված ph (=մեր փ), th (=մեր թ), kh (=մեր ք'), kh (=մեր ք'), ինչպես և bh, dh, gh, gh հնչուները:

Ահավասիկ բաղաձայնների տախտակը
Պ. Ա. Յ Թ Ա Կ Ս Ն Ե Բ
(Պարզ և ասպիրատ)

Շրթնային . . .	Խուլեր	Խուլ ասպիրատներ	Զայնեղ ասպիրատներ
	p*	ph (p ^c)	b
Առաջնալեզվային	t	th (t ^c)	d
Միջնալեզվային (պալատալ)	k'	k'h (k ^c)	g'
Ցետնալեզվային (վելար)	k	kh (k ^c)	g
			gh (g ^c)

ԾԱՆՈԹ. — Գերմանացի լեզվագետները միջնալեզվային բաղաձայնները նշանակում են՝ նշանով, ինչպես կ, կհ, ց, ցհ...:

ՇՓԱԿԱՆՆԵՐ
(«Ֆրիկատիվներ»)

Շրթնային	Խուլ շփականներ	Զայնեղ շփականներ
	f (Փ)	v (Վ)
Առաջնալեզվային	θ, չ (Ա), շ (Ձ)	ծ, զ (Ղ), շ (Ժ)
Միջնալեզվային	x' (Խ')	շ' (Շ')
Ցետնալեզվային	x (=Խ)	շ (=Շ)

ԱՖՖՐԻԿԱՆՆԵՐ

	Խուլեր	Խուլ ասպիրատներ	Զայնեղ ասպիրատներ
Առաջնալեզվային	c(ծ)	c(ց)	j(ձ)
Միջնալեզվային	č(ճ)	č(չ)	յ(լ)

ԾԱՆՈԹ. 1. Միջնալեզվային x' շփականը մոտ ե գերմանացոց «ch» հնչյունին ich «յես» բառի մեջ և մասմբ սուսաց և հնչյունին «МОՒ» (լմ) բառի մեջ: Այդպես ել յ' մոտ ե յոտային (յ-ըլն-չյունին):

ԾԱՆՈԹ. 2. Զայնեղ յի և յի աֆֆրիկատները կան մի շարք հայկական բարբառներում, ուր սակայն այդ ասպիրացիան նույնպես ձայնեղ ե («ճ» հնչյունի ձայնեղ տեսակն ե):

Ընդհանուր տարբերությունն այդ սոնանտների կամ, ինչպես այլ կերպ են սոսում, «սոնոր բաղաձայների» և խոկական բաղաձայնների մեջ այն ե, վոր առաջինների գոյացման ժամանակ մեր ձայնալարերը գերիշխող գեր են խաղում, և այդ պատճառով ձայնը (և վոչ աղմուկը) ստանում ե ավելի մեծ նշանակություն, քան ունենք ձայնեղ բաղաձայնների մեջ: Զայնալարերի աշխատության՝ սոնորության (sonorité) տեսակետից այս սոնանտներին մրցակից են միայն ձայնավորները, վորի հետևանքով, այսինքն այդ յերկու դաս հնչյունների (սոնանտ և ձայնավոր) ձայններության տեսակետից, հնչյունաբանությունը դրանց միացնում է իրեն «սոնոր հնչյուններ» (сонорные звуки):

Քանակի, այսինքն տևողականության տեսակետից, սոնանտներն ընդհանու չեն, նման պայթականներին կամ աֆֆրիկատներին, այլ մոտ են սպիրանտներին (շփականներին):

Սոնանտներն այսպես են բաժանվում. 1) «նայ» սոնանտներ, վորոնք լատիներեն կոչվում են liquidae, իսկ ոռւսերեն՝ «плавные». Դրանք են 1, և հնչյունների այլևայլ տեսակները, 2) «ոնդային» սոնանտներ, վորոնք են ո (=մեր ն), ո (մեր մ) իւրենց այլևայլ տեսակներով. 3) յ (մեր «յ»), վորի ձայնավոր տեսակն ե «ի» (մեր ի), 4) վ (մեր «ւ»), վորի ձայնավոր տեսակն ե ւ (մեր «ւ»):

Ի սոնանտը կարող ե ունենալ հետեւյալ տեսակներն ըստ տարբեր գործարանների մասնակցության. 1) ատամնալեզվային («ատամնաքիմքային»), վարն իր հերթին բաժանվում ե՝ առաջնալեզվային («առաջնաքիմքային»), ալվեոլար, ատամնային (post-dentalis) և միջնատամնային. 2) յետնալեզվային («յետնաքիմքային») և. 3) սակավ գործածական շրթնային և, վորը կա, որինակ «տպուռ» կոմպեքսի մեջ, վորով ձիերին են կանգնեցնում: Հայոց լեզուն ունի այս բոլոր տեսակները, թե առաջնալեզվային և (=մեր «ր», հայրիկ, մայրիկ նման բառերում), թե միջնալեզվային ուժեղ թրթուռն և (=մեր «ռ»):

Յերբ Ի սոնանտն արտասանվում ե լեզվի ծայրի և կոշտքիմքի ու վերին ատամների միջանցքի (արմատների) միջնորդությամբ, այսինքն՝ յերբ ստացվում են ալվեոլար և յետնատամնային (postdentalis) Ի սոնանտի տարբերակները, այդ ժամանակ

մենք չենք գտնում այդ «Ռ»-ը կազմող գործարանների միջև վոչ մի ծերպ, վորը հասուկ և շփական (Փրիկատիվ, սպիրանտ) բաղաձայններին: Հետո, այդ ալվեոլար և յետնատամնային Ի սոնանտի արտասանության ժամանակ թոքերից հոսող ողի ներգործման շնորհիվ լեզվի ծայրը թրթուռ ե. և դրա հիման վրա յե, վոր Ի սոնանտը կոչվում ե նաև «թրթուռն»* (drojاشոյ):

Այդ «Ռ» սոնանտի տարբերակների մեջ ավելի շատ ձայնեղություն (sonorité) պարունակում ե «ցերեբրալ» Ի-ի տարբերակը, վոր շատ մոտ ե մեր «ղ» բաղաձայնին, ինչպես այժմ ֆրանսիացիք կամ գերմանացիք են արտասանում այդ «յետնալեզվային» (ցերեբրալ) Ի սոնանտը, — համեմատիր ֆրանսիացոց Paris, très, parler... կամ գերմանացոց vater, Mutter, aber բառերի «Ռ»-երը (=մոտ ե մեր «ղ»-ին): Այս յետնալեզվային Ի սոնանտի արտասանության ժամանակ, այսինքն՝ յերբ լեզվի յետին մասը մոտենում է փափուկ քիմքի յետին մասին, մեր լեզվակը (uvula), իրեր այդ փափուկ քիմքի մի վերջույթ, շարժվում է յետ ու առաջ, շնորհիվ թոքերից հոսող ողի. այսպես վոր այստեղ ել ծերպ չի գոյանում:

Ի սոնանտի շրթնային հազվագյուտ տարբերակը կազմվում է այն ժամանակ, յերբ մեր շրթուռները յերկարածգվում են քիչ դեպի առաջ և հազվի քսվում իրար: Այդ շրթնային Ի սոնանտը, ինչպես ասվել ե, մենք տեսնում ենք այսպիսի բացականչական արտահայտության մեջ, ինչպիսին ե, որինակ, ոռւսաց ուրու ($\widehat{\text{ափու}}$):

Յերկորպ՝ 1 նայ սոնանտը (=մեր լ) ունի ընդհանրապես առաջնալեզվային արտիկուլացիա, նման ե է կամ օ բազայններին իրենց արտասանական տարբերակներով: Այս «Ռ»-ն գոյանում է հետեւյալ տեղերում՝ ա) լեզվի ծայրի և կոշտքիմքի միջնորդությամբ, բ) լեզվի ծայրի և ալվեոլների (վերին ատամների արմատների) միջնորդությամբ, շ) լեզվի ծայրի և վերին ատամնաշարքի ներսի մասի («պատի») միջնորդությամբ, դ) լեզվի ծայրի և վերին ու ներքին ատամնաշարքերի միջնեղի միջնորդությամբ:

Այդ բոլոր դեպքերում լեզվի ծայրը պինդ կպած և լինում քիմքին կամ ատամներին, բայց լեզվի կողքերը, աջ ու ձախ կող-

* Հին հայ լեզվաբանները «թրթուռն» տերմինի տակ զործ ելին ածում «ձայնեղ բաղաձայններ»: Այդ ի հարկե գիտական չե:

մերից, չեն կպչում քիմքին, այլ իջած են ցած, և հետեապես ողը հոսում է բերնից այդ յերկու միջանցքների միջով գեպի դուրս: Ոդի այդ կերպ հոսեն ե, վոր և սոնանտին ուրույն աղմուկ և հազորդում: Շատ ժամանակ պատահում ե, վոր լեզվի յերկու կողմերից միայն մեկն է իջած և չկպած քիմքին: Բայց ավելի հաճախ և սոնանտի արտասանության ժամանակ բարձրանում ե նաև լեզվի յետին մասը և այդ տեսակ «Հ» հնչվում է ավելի, այսպես ասած «կոշտ», ինչպես ոռու. լօճ—լօճ բառերի մեջ (բայց լօճ—լօճ ունին այլ): Հենց այդ «կոշտ» և սոնանտն է յեղել հին հայերենի «Պ» բաղաձայնը, վորը հետագայում, կորցնելով իր առաջնալեզվային արտիկուլացիոն հիմնական մոմենտը, դառնում է յետնալեզվային շփական, այսինքն՝ նրա յետնալեզվային մասնակի բարդությունն ուժեղանում ե, գերբշխում, վանելով առաջնալեզվային սկզբնական հիմնական տարրերությունը:

Գիտական այբուբենում («տրանսկրիպցիա»-յում) այդ յետնալեզվային (վելար) և սոնանտը գրում են Ե, այսինքն՝ լուսակին մի կետ (ինչպես Մառն և զրում) կամ ավելի շուտ լեհերենի և չեխերենի գրության ձևով, այն և լուսակից մի գծիկ (ለ):

Ոնդային սոնանտներն են Ո (=մեր ն), Ո (=մեր մ) զանազան տարրերակներով: Դրանց արտասանության ժամանակ փափուկ քիմքն իր ծածկոցով (velum palati) իջած ե, և ողը հոսում է քթի խոռոչի միջով, իբրև ուեզրատորի: Հստ այն տարրերության, վոր առաջ և գալիս շնորհիվ այլևայլ խոչընդոտների (բերնում) թոքերից հոսող ողի համար, մենք ոնդային Ո սոնանտը բաժանում ենք այսպես—յետնալեզվային (Ո'), միջնալեզվային (Ո), առաջնալեզվային կամ ատամնաքիմքային (Ո), վորը կարող է մենել զանազան տեսակի: Ծրթնային, ոնդային սոնանտն է ու:

Ինչ վերաբերում ե Յ (=մեր յ) և Ո (մեր ւ) սոնանտներին, ապա զբանցից առաջինը (Յ) միջնալեզվային բնույթ և կը բում, նման լեզվի միջնալեզվային Վ սպիրանտի. իսկ Ո սոնանտը ստացվում է շրթունքների գործունեյությամբ, զբանց աշխատանքի միջնորդությամբ, տարրերվելով սակայն շրթնատամնային Վ (=մեր վ) սպիրանտից: Այդ Ո սոնանտի արտասանության ժամանակ շրթունքները քիչ յերկայնացած են լինում, քան և (=մեր ու) ձայնավորի ժամանակ, վորը շատ մոտ է այդ Ո-ին: Այժմ այդ Ո-ն կա, որինակ, անզլերենում, արաբերենում, քրդերենում և այլն: Մի ժամանակ մեր «Հ» հնչյունը յեղել ե նույն սոնանտը և մոտավորապես համապատասխանել ե

հունարեն ո ձայնավոր սոնանտին: Հաճախ այդ Ո-ի արտասանության ժամանակ լեզվի յետին մասն ևս բարձրանում ե, իսկ հետագայում այդ յետին մասն ուժեղանալով առաջ է բերում ցարարցնել ծագման և սկզբնական մոմենտը և դառնալով գ: Նեան շրջում տեսնում ենք և Ն շփականի մեջ (համեմատիք մեր «գինի», «գեր»... բառերը «Վին», «Վեր» սկզբնականից), իսկ վրացիք, որինակ, մեր Վահրամ (պարսկերեն բառ ե) կամ վիրապ բառերը փոխ առնելով՝ պահել են միջին փոփոխման ցարարցնելու: Ո՞ւ Վ փոփոխությունը կլել են և պարսկերելու:

Հ Ն Զ Ց Ո Ւ Խ Ի Ք Ա Ն Ա Կ Բ

Մինչև հիմա մենք վերլուծում ենք հնչյունները, այսպես ասած, վորակի տեսակնետից, այն և՝ հնչյունների Փիղիոլոգիան: Բայց զբանով հնչյունների ներքին բովանդակությունը չի ստանակակիցում. ատարբերում են նաև հնչյունի քանակը:

Բոլոր հնչյուններն իրենց արտասանության համար կարող են պահանջել տարրեր յերկարությամբ ժամանակամիջոց, այսինքն՝ կարող են ունենալ հնչյունի արտասանական տեղության տարրեր աստիճաններ: Դա բացարձակ նկատելի յե «տևական» հնչյունների համար, ինչպես են ձայնավորները, շփական, (սպիրանտ) և սոնոր բաղաձայնները: «Վայրկենային»—պայմանները, ի արիտուր այդ տեղության, ունենում են ավելի ուժգնություն իրենց համան մեջ, իսկ մասնավորապես պայմաններին ձայնակները մինչև իրենց պայմանը (explosio) ունենում են նախազես և ձայնալարերի աշխատության համար վորոշ ժամանակամիջոց, վորով ստացվում է խուլ ձայն (Blässlaut*), ինչպես ուռեւրենում և այլն:

Միջանկյալ պետք ե տաել, վոր հայոց ձայնեղ պայմանները չեն ունենում այդ ձայնեղության աշխատանքը մինչը պայմանը, այլ՝ միաժամանակ:

Հնչյունի քանակը տևական բաղաձայնների նկատմամբ (շրթնականների և սոնանտների) շատ լավ ըմբռնելի յե մեր ականջով, ակուստիկորեն, որինակ մասսա (բայց՝ «սա մաս ա»—«ԵՏՕ ԵСТЬ ԿԱՇԵ» ժողովրդական լեզվով), ուռեւրեն ՕՏТОГО, վորը հնչվում է «ատատավո» (բայց ա ՏՈՂՈ «իսկ նրան», վոր հնչվում է «ա տա-

* Բառացի «աժդակույն ձայն»

գո»), Ռուպա (=խումբ), բայց տրուպа (=դիակի, սեռական հուրով տրուպ բառի), Անն և օնա, ողձը (տակիցը տալ) և ողձը (մատուցանել) և այլն: Զգալի յեւ տարբերությունը շումա (=պարկ) և շումա (=գումար), կոմմունիստ և կոմունիստ, կունկուրիվ և կունկուրի և այլն և այլն:

Հայոց բարբառներն ունեն նաև վայրկենային խուլ պայմանների ուժեղացում, ինչպես մատու («լավ», «գլավիչ» — արաբեն բառ ե), բայց «մատ ա» (=պալեց), ինչպես շեպակը, շպացնել և այլն, իսկ տեսական բաղաձայների նկատմամբ համեմատիր — վազգել, ամմենքը, տասսը, իննը...:

Այդ տեսական կամ ուժեղ բաղաձայնը ֆրանսերեն կոչվում է consonne géminée, վորը թեպետ յեվրոպական (և մեր) այլուրենում գրվում և յերկու (լրինակի) միենույն բաղաձայն տառով (շումա, կոմմուն, մատ, Ֆիլիպ...) բայց փաստորեն դա մի յերկար կամ ուժեղ բաղաձայն ե, վորը լեզվաբանության մեջ պիտի գրվի շումա, կոմունտ, մատ..., նման արաբերեն գրության, ուր այդպիսի բաղաձայները գրվում են մի տառով, բայց վերև «փասոլ» (-) կոչված գիտակիւսիկ նշանով:

Արաբերենում այդ յերկար կամ ուժեղացած բաղաձայնն ունի նաև ձևաբանական նշանակություն (բացի արտասանական տարբերություններից), այսինքն՝ առաջ և ըերում միենույն արմատի տարբեր նշանակություններ կամ կիրառումներ:

Հնչյունի քանակը (տեսողությունը) կարող է լինել տարբեր աստիճանների — ամենակարծ (կամ իրացիոնալ), կարճ, կիսայերկար, յերկար, շատ յերկար: Զայնավորների վերաբերմամբ գործ են ածում զանազան նշանացույցեր (որինակ «գիտակրիտիկ նշաններ») այդպիսի տեսղության համար, սկսած ամենակարճից (Արրացուածանալինական մինչև ամենայերկարը — ա, ա, ա, ա, ա:

Իհարկե, հնչյունների տեսղության աստիճանները բավականին հարաբերական իմաստ ունեն, դրանք բնորոշվում են ամեն մի լեզվի համար առանձին: Տեսղության աստիճանները մի գորևել լեզվում չեն համապատասխանում իրենց արտովյուտ նշանակությամբ նույն աստիճաններին մի ուրիշ լեզվում:

Յերկար բաղաձայնների արտասանությունը բառի մեջ ունի և այն նշանակությունը, վոր դրանց արտիկուլացիայի առաջին մոմենտը (հպումը կամ քավելը), միանալով նախորդ ձայնավորին և թուլանալով՝ կազմում ե վանկի անջրպետը, այնինչ դրա յերկրորդ մոմենտը (պայմանը, վերջը) կապվում է հաջորդ վան-

կի ձայնավորի հետ: Որինակ մտակամ մայսա հայակոմպլեքսների մեջ (mat—ta, may—ya...) բաղաձայն և և յ հնչյուններն իրենց հպումը (t) կամ քավելը քիմքին (y) թուլացնում են ակուստիկուրեն, նորից վերսկենով տակամ յա վանկերի հետ իրենց ավարտման մոմենտը: Թերեւ այդ հանգամանքի հետ և կապված և այն, վոր այդ տեսական բաղաձայններից առաջ ձայնավորն ավելի թույլ ե (կարծ), քան նույն տիպի սովորական (վոչ տեսական) բաղաձայնից առաջ, այսինքն՝ matti և mati բառերի մեջ առաջին ան ավելի կարծ ե, քան յերկրորդ բառինը:

Այնպիսի գեպքում, ինչպես «ապա—սաս», «և история» (և—իստորիա), «և օնա» (=ա—անա) և այլն մենք չենք ստանում կատարյալ յերկար ա, ի, ա (ā, ī, ā), քանի վոր վանկերի գոյությունըն ականջով ըմբոնվում ե, այսինքն ձայնական գեղգաղացիայի վորոշ թուլացում առաջին և յերկրորդ ա-ի մեջ. իսկ գերմանացիք, որինակ, կոկորդի հպում —պայմանով միանգամայն բաժանում են այդպիսի յերկու ձայնավորների հանգիպումը (diese alte Eiche կամ թե die innere und äussere Einrichtung արտասանում են կտրվածորեն, յուրաքանչյուր բառակղբի ձայնավորից առաջ ունենալով կոկորդային պայմանուն*): Ֆրանսիացիք թեթև ասպիրացիա յեն գնում (Baal հնչում են իբրև Baal ալ):

ՀՆՉՅՈՒՆԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՆԻ ՅԵՎ ԱՐՏԱՇՆՉՈՒԹՅՈՒՆՆ ՏԵՍԱԿԵՑԻՑ

Ինչպես գիտենք, բոլոր ձայնավորները, սոնանոները և ձայնեղ բաղաձայնները (թե պայմանական և թե շփական) կազմվում են մեր ձայնալարերի մասնակցությամբ և հետևապես ունեն այն, ինչ կոչվում է «ձայն» (ГОЛОС): Բայց այդ ձայնը, ինչպես և ամեն մի յերաժշտական տոն, ունի այլևայլ բարձրություն, նայած թե մեր ձայնալարերը վորքան շարժումներ (տատանումներ) են կատարում մի վայրկյանում:

Յեթև ձայնալարերը կարճ լինեն, նման յերաժշտական գործիքի լարերին, այն ժամանակ տատանումները մի վայրկյանում ավելի շատ կլինեն և հետևապես կ'ստացվի բարձր ձայն, ինչպես վոր տալիս են կանանց ձայնալարերը: Նման հատկությամբ են

* Այդ պայմանունը նշանակում են շնչանով. որինակ «dī շնչելու շնչանով» (արտասանակրիպցիայով):

բացատրվում իհարկե և տղամարդկանց սոպրանո, բարիտոն, բառախները:

Հնչյունները, վորոնք կադմիում են ձայնալարերի մասնակցությամբ, ունեն «ձայնեղություն»։ Վրանք պիտի ունենան, հետեւապես և ձայնի բարձրություն։

Ամենավորոշ և ըմբռնելի տարբերությունը տոնսի տեսակետից ստանում ենք ձայնավորների և սոնանտների մեջ, այսինքն՝ սոնոր հնչյունների մեջ։ Վոչ կարճ սոնոր այդ հնչյունների մեջ տոնը կարող է լինել կամ հավասար (միալար), կամ վոչ հավասար։ Վերջին գեպքում տոնը կարող է լինել կամ հետզհետեւ բարձրացող, կամ հետզհետեւ իջնող (ցածացող)։ Վոչ կարճ այդ ձայնավորները և սոնանտները տոնսի տեսակետից կարող են տալ նաև հավասար ու վոչ հավասար տոնների միացում, կամ թե՛ վոչ հավասար ու հավասար տոնների միացում, կամ թե՛ վոչ հավասար և նույնպես վոչ հավասար տոնների միացում։ Որինակ, տոնը կարող է լինել հավասար—բարձրացող, հավասար—իջնող, բարձրացող—իջնող, իջնող բարձրացող։ Իսկ կարճ սոնոր հնչյուններն իրենց տոնսի բարձրությունը տարածում են և հաջորդ փակ սոնանտի վրա (ար, առ...):

Բայց ձայն ունեցող հնչյունը տարբերվում է մի այլ կողմով։ այդ հնչյունի ուժգնությունն է, վորը տարածվում է բոլոր հընչյունների վրա։ Հնչյունի ուժգնությունը կախում ունի մեր թոքերից հոսող ողի ուժգնությունից, թափից, իսկ ձայներն այդ ուժը (դինամիկ մոմենտը) ստանում են նաև ձայնալարերի ամուր հպվելու հետևանքով, վորոնց շարժելու համար (այսինքն՝ միջլարային ծերպը) պահանջվում է ավելի մեծ հներդիա։ Հետևապես սոնանտների գոյացման համար յեկող ողի ուժը անդրադառնություն է անմիջապես այդ սոնանտների «ձայն»-ի վրա, այսինքն՝ ձայնալարերը կարող են շարժվել տարբեր լարվածությամբ։

Վ Ա Ն Կ

Վանկն ավելի խոշոր հնչյունաբանական միավոր է, քան հնչյունը, և մենք առանց գժվարության կարողանում ենք վորոշել վանկերի քանակը բառի կամ նախադասության մեջ։ Հենց այդ հեշտության տեսակետից եր, վոր նախնական գրությունը յեղել է սիլլարիկ (վանկային)։ և հետագայում միայն մարդկությունը դարտուղի ճանապարհով հասել է սովորական հնչյունական գրության։ Վանկերի բաժանման այդ հեշտությունը բացատրվում է

վորոշ ակուստիկական և ֆիզիոլոգիական սուբյեկտիվ պայմաններով։

Ակուստիկորեն (լոռությամբ) վանկի բաժանման կետն են հանդիսանում հնչյունական շարքի մեջ յեղած թուլացման մոմենտները և կամ լիդ գագար՝ պառզան, վորն ավելի տեսական է։ Կարելի յե՛ վանկի մեջ յերկարացնել որինակ, յերկար ա, և և այլն։ Բայց յեթե մեջը ուժը մեջ ուժեղացվի և թուլացվի դրանց արտադրող ուղանանքը, կամ, որինակ, շուտ-շուտ ձեռքի ափով խփվի շրթունքներին հնչարտազրության ժամանակ, այդ ժամանակ ամեն մի նոր ուժեղացում, որինակ ա, ըմբռնվում է իրեն առանձին վանկ։

Այնպես վոր, լոռության համար առանձին վանկ և հանդիսանում հնչյունական շարքի այնպիսի մի փոքր մասը, վորն իրու ավելի ուժեղը, ընդորրվում է (պարփակվում) հնչյունի թուլացման կամ ընդհատման մոմենտների մեջ (այս Տոմսոն, Օնիշե յայկօվեդենի, եջ 220—221):

Յեթե վերցնենք այս հնչյունաշարքը, մենք կարող ենք այդտեղ յերեք վանկ կազմել արտասանելով և հնչյունը վորոշ ուժեղությամբ և տեղությամբ, իսկ յուրաքանչյուր յերեք հնչյունը, իրենց արտասանության վերջամոմենտում՝ թուլացնել։ Բայց կարելի յե՛ այդ շարքն արտասանել և ա—ա կամ ա—ա կամ ա—ա (=ay—ya), նայած թե հնչյունի թուլացումը կատարում ենք ի-ից առաջ (ա—յա), ի-ից հետո (ա—ա), կամ ի-ի մեջ (ai—ia), վորով ի-ի յերկու վանկերի մեջ և բաժանվում։

Յեթե վանկն արտարերվում է արտաշնչման ուժով կամ ընդհանրապես հնչյունի ուժեղությամբ, իսկ հնչյունի թուլացումներն ընդհանրապես վանկարաժանիչներ են հանդիսանում, այն ժամանակ, այդպիսի վանկը, իրու հիմնված հնչյունի ուժեղացման վրա, կոչվում է արտաշնչական վանկ (էկспираторный слог, динамический слог)։ Բայց յեթե այս, аза, аса, аտ և այլ շարքերն արտասանենք և առանց վորմեն հնչական թուլացման, այսինքն՝ մի հավասար անընդհատ արտաշնչումով, ելի կավեն յերկու վանկեր։ Դա նրանից ե, վոր ի, չ, ս և այլն պակաս լիանունչ (полнозвучный) են, այսինքն, նրանց հնչյունն ինքնին թույլ ե, քան և ձայնավորինը. այնպես վոր հնչյունի թուլացումը, վորը կապված է ի, չ, ը հնչյունների ընության հետ, մեր ականջի համար հանդիսանում է վանկարաժանիչ։ Այդպիսի վանկարաժանիչներ են և հպվող (затворные) է, թ, ր, կ բաղաձայնները, վորովհետեւ դրանց

հպման ժամանակ նախորդ հնչյունն ակուստիկորեն ամենակին դաշտարում է: Այդպիսի վանկերը հիմնված են հնչյունների լիանչության տարբերության վրա: Լեզուներում հաճախ յերկու մոմենտներն ել միանում են, այսինքն, վանկը լինում է թե եքսպիրատոր (արտաշնչման ուժով) և թե հնչյունի լիանչման վրա յե հիմնված: Պոլիվանովը այս վերջին մոմենտը կոչում է «հնչողություն» (ձայնություն), բնորոշելով վանկն այսպես: «Վանկը կարելի յե բնորոշել իբրև խոռքի մի ժամանակական հատված, վորը պարունակում է հնչեղության ուժեղացում յերկու պակաս հնչեղ մոմենտների միջև: Յեվ ամեն մի վանկում, ենտեսապես, պիտի լինի մի հնչյուն, վորն ավելի յե հնչեղ (ձայնություն), քան նախորդ և հաջորդ մոմենտները: Այդ հնչյունը կոչվում է վանկարար (слогообразующий)*:

Տես Պоливанов, Лекции по введению в языкознание и общей фонетике. Берлин, 1923 г. № 32): Յեթե վանկարար հնչյունն ամենից շատ է գրավորվում իր հնչեղությամբ, ապա մյուսները հարակցվում են գրան և կոչվում են «վոչ վանկարար» (неслоговые звуки): Վանկարար հնչյունը լինի լիանչեղ ըստ բնության, թե ըստ արտաշնչման ուժի, գրվում է տառի տակ փոքրիկ կլոր նշանով (o), ինչպես չ, ն, լ... (թեպետ այժմ ձայնավոր սոնանատների տակ չեն գրվում). Իսկ սոնանատների վոչ վանկարար լինելը նշանակվում է՝ նշանով (չ, ն, լ, ր, ո, թ, թեև վերջինները՝ լ, ր, ո, թ... այժմ նմանապես այդ գեպքում գրվում են պարզ լ, ր, ո, թ):

Լիանչության (հնչեղության, звучность, Schallfülle) տեսակետից առաջին տեղը գրավում են ձայնավորները, վորոնցից ամենաուժեղն ե ա, հետո է և օ, հետո ի, ո (=սուսաց յ), ի (=սուս-

* Հետեապես, վանկի նախկին բնորոշումը —«վորքան եքսպիրացիաներ» (արտաշնչությամբ) —այնքան վանկերը, մեզ համար մասամբ միայն ընդունելի պիտի լինի: Համեմատիր նաև Meillet-ի բնութագրումը, վորը նմանապես պիտի գիտական ե, քան այդ նախորդը. «Будет ли согласный элемент простой или сложный, в данном ряде звуков слог есть отрезок, заключенный между двумя крайними границами движений открытия и закрытия» (Տես A. Мейе, Введение в сравнит. грам. индоевропейских языков, Юрьев 1911, № 103–104, թարգմանություն պրոֆ. Դ. Կուլգյավսկով): [8]. Վանկարար հնչյունի համեմատական ուժեղությունն ե իր նախորդների և հաջորդների հանդեպ, վոր նրան գարձնում է «վանկարար» (слогообразующий) և այդպիսով մի գերմաններն Haus (տուն) մի վանկանի յե, իսկ մի սուսաց այլ (=կովկասյան լեռնցիների գյուղ) կամ «ա նեփո» հնչյունական հաջորդների մեջ աս (=առ) կոմպլեքսը յերկու վանկ և կազմում, գրովհետեւ գրանք քանակի և համեմատական ուժեղության տեսակետից համազոր են:

սաց յ): Զայնավորներից հետո հնչեղությամբ առաջին են գրավում սոնանատները (լ, ր, ո, թ), հետո շփական ձայնեղները (չ, շ, վ, ՛, չ, ն, ՛, ն), հետո շփական խոռները (ս, ս, ֆ, խ...), հետո ձայնեղ պայտականները (բ, դ, գ) և վերջը՝ խոռլ պայտականները (թ, տ, կ): Այդ պատճառով ել այ, եւ, իա, իե և այլ կապակցությունների մեջ վանկարար հնչյունն ե սովորաբար «ա»-ն և «օ»-ն, այսինքն աւ, օւ, ի ա, չ ե...:

Լեզուներ կան, ինչպես սերբերներ, չեխերենը և այլն, ուր վանկարար սոնանատներն ավելի լիանչեղ են քան ամենակարճ վերացիոնալը՝ ձայնավորները, ինչպես օրբ (=серб), օրցե (=сердце) կամ չեխերեն vlk (=волк), krk (=шеря) և այլն: Այստեղ ո, ի, հնչյունները վանկարար են և պիտի գրվեն չ, լ, այսինքն՝ սրբ, օրչե, կրկ, վլկ...:

Վանկը կոչվում է բաց, յեթե վերջանում է վանկարար հրնաչյունով (=ձայնավորով) և փակ, յեթե դրան հաջորդում է մեկ կամ մի քանի վոչ վանկարար հնչյուններ (որինակ, բաղաձայններ): Ուստաց да, քան են, բայց որոշ այն փակ են: Վանկը նմանապես կարող է լինել յերկար և կարճ, նայած գրավանկար հնչյունի քանակին: Նմանապես վանկը կոչվում է շեշտավոր և անշեշտ, նայած թե գրա վանկարար հնչյունը շեշտունի թե՝ վոչ:

Շ Ե Շ Ց

Յուրաքանչյուր բառի մեջ վանկերն ունեն ուրույն բնույթ, ուրույն առանձնահատկություններ: Յերբ մի վանկ ավելի յե առանձնանում բառի մեջ իր վանկարար հնչյունի ուժգնությամբ (արտաշնչությամբ) կամ գրա տոնի բարձրությամբ, ապա դա կը լինի այն, ինչ վոր կոչում ենք «շեշտ»: Յեվ ստանում ենք արտաշնչական շեշտ (эксцираторное ударение) կամ յերաժշտական տոնիկ շեշտ*, նայած թե վանկարար հնչյունն ինչ արտասանական մոմենտով ե բնութագրվում: Լինում ե իհարկե և այդ յերկուսի միացումը, խառնումը, նայած լեզվին: Ուստաց լեզվում, ինչպես և հայերենում, շեշտն ընդհանրապես արտաշնչական ե, այսինչ, որինակ, հին հնդկերենում կամ հին հունարենում նա յեղել ե յերաժշտական, այդպես և նաև ճապոներենում և չինարենում: Վորոշ լիզուներում, ինչպես, որինակ, լիտվական և սերբ լեզունե-

* Ուստաբերեն՝ музыкальное կամ тоническое ударение:

րում, շեշտը կբում ե՞ իր հատուկ յերկու կողմերն ևս «արտաշնչուկան—մերաժշտական» կամ «յերաժշտական—արտաշնչական», լիւնելով հետևապես խառն շեշտ:

Զայնի բարձրացումը մենք հիմա ոգտագործում ենք նաև վերաբերմունք (զգացմունք) արտահայտելու համար, ինչպես «այ՞» և «այ՞», ուր առաջին գեղքում բարձրացող (յելնող) է, իսկ վերջին գեղքում՝ իջնող:

Վորոշ լեզուներում, ինչպես, որինակ, ճապոներենում և չինարենում, շեշտի այս նրավորումներն (օտենկի—puance), հաւատում են նաև տարբեր իմաստավորումներ, ունեն նշանակողական տարբերացման գործոնականություն, ինչպես, որինակ, չինարենի Պեկին (այժմյան Բեյլին) քաղաքի բարբառում տունիկ շեշտի զանազան այդպիսի նրավորությունների հետևանքով՝ ունենք — ուր (մա) «մայր», ուր (կանեփ) (КОНОПЛЯ), ուր (ձի), ուր (հայոցել): Այնպես վոր այդտեղ ունենք չորս ա գունմաներ, վորոնք չինացու համար, շեշտի շնորհիվ, ինքնորոշյալ են և լեզվական մտածողության մեջ՝ ուրույն, ակտիվ և ստեղծագործող*:

Կարելի յել վերցնել և խոսքի (նախագասության) շեշտը, վորը կոչում են նաև «տրամաբանական», ինչպես — յես գնացի տուն (և վոչ թե «դու»), յես գնացի տուն (և վոչ թե «մնացի» և այլն), յես գնացի տուն (և վոչ թե «այլ տեղ»): Այնպես և մի ամբողջ պարբերութիւնից մեջ, ուր լինում են շեշտավոր խոսք:

Արտաշնչական շեշտը մեծ դեր ե խաղում իր ապեցությամբ մյուս վանկների ձայնավորների վրա, թեև պետք ե շեշտել վոր և շտավոր վանկի բաղաձայններն են լավ են հնչվում: Բողոքեն դը-կուրտենեն շեշտի այդ ազդեցական և համաձուլիչ դերն ի նկատի ունենալով — խոսքը վերաբերում ե ի հարկե արտաշնչական շեշտին — կոչում ե այն «Փոնետիկական ցեմենտ» (ֆոնետիկ լեմենտ): Յեկ այդ կողմից ուռւաց ձայնավորներն, ըստ արտասանության ուժեղության կամ թուլության, նա բաժանում է յերեք կարգի կամ աստիճանի — 1) ձայնավորի կատարելու

* Համեմատիք զբա հակադիրն անոսների (Հյուսիսյին ձաղոնիայում) լեզվով, ուր ձայնեղ և խուլ բաղաձայններն այդ փոնեմատիկ ինքնուրույնությունը չնւնեն (մի կոտան բառը կարելի յել արտասանել և կօճանակած ասրբելության). Նման խեթերենին կամ հաբագյին Ամերիկայի բանիկների ծեծ կամ ուղարկութային արտիկուլացիան (ձ/ն), վոր միւնույն բառերն են:

թյան վերին աստիճանը հոմանիշ և հավասար ե շեշտաված վանկի ձայնավորին, ինչպես — վօդա, չեղանակ, լողացներ... 2) Միջին աստիճանի կատարելության ձայնավորներն են նրանք, վորոնք շեշտաված վանկից մի վանկ առաջ են ընկնում, ինչպես վօդա, գօծօնական գոտի, սամուկացին անշեշտ բաց ձայնավորները — գօծա, բերեցի...; 3) ամենացած կատարելությամբ են արտասանվում այլ գիրքերի ձայնավորներն ու վերջին փակ վանկերը, ինչպես — վայ' օրոտ, ողլոգա, կօլոկօլ, բարձրացնում են գիտում և, վոր շեշտավոր վանկը, իբրև իշխող արտասանական տեղ (գիրք), իր վրա յել կենարոնացնում արտասանողական ուշագրությունը, վորով այլ վանկերի ստուգապես արտասանվելը խանգարվում է և թուլանում: Յեկ քանի շեշտաված վանկից ավելի հեռուն ենք գնում, այնքան այդ արտասանական անկատարելիությունը (անստուգությունը) ավելի յել մեծանում:

Մենք գիտենք նմանապես, թե ինչ մեծ դեր է խաղացել և խաղում և շեշտը նաև հայոց լեզվախմբում՝ գրաբարում և արդի բարբառներում, ուր արտաշնչական մեր շեշտի գիրքի փոխիքաման հետևանքով նախկին շեշտավոր՝

<i>ի > * ը</i>	<i>որինակ միտ > մըտավնը</i>
<i>ու > ը</i>	<i>» ձնեկըն > ձըկնն</i>
<i>է > ի</i>	<i>» պարտէ՛զ > պարտիզպան</i>
<i>ոյ > ու</i>	<i>» լնյս > լուսավնը</i>
<i>եա > ի</i>	<i>» ատեհն > ատեհնակալ</i>
<i>եայ > է (բառավերջում)</i>	<i>» պաշտօնեայ > պաշտօնէութիւն:</i>

Մեր լեզվի հին քերականները շեշտի այս դերն անտես ենին առել և այս բառափոխությունները բացարում ենին բառի «աճեցմամբ» միայն:

Յերկար բառերում լինում են գլխավոր և յերկրորդական շեշտեր, համեմատիք մեր միջին հայերենի «գաջըրըկըններ» (= վաճառականներ), — մի յերեւյթ, վոր կա շատ լեզուներում:

Վերջապես շեշտը վորոշ լեզուներում ընդունում ե բառի վորոշ գրությունը, այսինքն՝ գրվում է վերջին վանկի վրա (Փրանսիաներեն, հայերեն), նախավերջին վանկի վրա (համեմատիք մեր Դարաբաղի կամ Թբիլիսիի բարբառները), նախավերջին կամ վեր-

* Այս > նշանը ցույց է տալիս «լապուալը, վերածվելը», իսկ < նշանը «ստացվելը, առաջանալը»:

Հեց յերբորդ վանկի վրա (վրացերեն, լատիներեն), արմատի առաջին վանկի վրա (գերմաներեն) և այլն և այլն: Այս բոլորը մշտական շեշտեր են, բայց կա և փոփոխական շեշտ (համեմատիր սուսաց հօրա—հօրի, տեղա—տեղն...):

Կարող ե լինել վոր միենույն լիզվում գործ ածվեն յերկու տեսակի շեշտեր—արտաշնչական և յերաժշտական, որինակ, ոռուսաց «զաւրդ?» հարցականի մեջ առաջին զաւ վանկն ունի, ըստ եր բառադիրքի, արտաշնչական շեշտ, իսկ վերջում—տրա ունենք յերաժշտական շեշտ, հարցման և տատանման վերաբերմունքը ցույց տալու համար:

Մենք գիտենք, նմանապես, վոր միենույն հնչա-կոմպլեքսի շեշտի փոփոխումը ազդում և իմաստի կամ ֆունկցիայի փոփոխության վրա, ինչպես—մուկա (=ալյուր) և մո'կա (=տանջանք), տեղուածությունը (=պատեր), բայց տեղնականի շեշտական հոլով) և այլն: Համեմատիր այս տեսակետից յերաժշտական ձայշնի դիրքը նաև նախադասության վերջում, յերբ նա յերկորպաւական ե և հետեապես չի վերջացած և դրա հակառակը, յերբ նաև խաղասությունը վերջացած ե: Որինակ, «յերբ գնացի՝ դու յեկար», վորտեղի ի ձայնավորը «գնացի» բառի մեջ այլ շեշտում ունի, քան ա ձայնավորը «յեկար» բառի մեջ և քան ի ձայնավորը «յերբ գնացի» հարցական նախադասության մեջ:

ՅԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐ (ԴԻՖՏՈՒԳՆԵՐ)

Յերբ յերկու ձայնավոր միանում են մի վանկի մեջ, դա կոչում ենք «յերկբարբառ», «յերկձայնավոր» (=յերկձայն) կամ հունարեն բառով «դիֆտոնդ» (di-s—«յերկից»), phthong-os—«հնչյուն»), բայց կարող են լինել մի վանկում և յերեք այլպիսի ձայնավորներ, ինչպես հաճախ տալիս ե չինարենը (liao իրեւ մի վանկ), վորը կոչում ենք «արիֆտոնդ» (=յերբարբառ), յեռաձայն): Այդ յերկբարբառների կամ յեռբարբառների մեջ մի ձայնավոր պիտի լինի «վանկարար» (СЛОГОВОЙ), իսկ մյուսները՝ վոչ վանկարար (տես վերը—վանկի մասին):

Յերկբարբառը լինում ե բարձրացող (восходящий), յերբ հնչյունի ուժը դրա (յերկբարբառի) արտադրության ժամանակ ուժեղանում ե, այնպես վոր յերկորդ ձայնավորը լինում է վանկարար, այն ե՝ ավելի լիահնչեղ (որինակ—ⁱa, ⁱe, ^ua, ^uo..., ինչպես փրանսերենում զւօi=kua): Յերկբարբառը լինում է նաև

իջնող (հնչյունավորն է վանկարարը (ինչպես կрай, լեյ, սինի, տոյ, բոյնայի մեջ): Հին քերականների որինակով այժմ ել մեծ մասամբ «յերկբարբառ» (диФТОНГ) տակով՝ հասկանում են այդ իջնող տեսակը, իսկ բարձրացող տեսակի մեջ տեսնում են վոչ վանկարար ձայնավորի (ⁱ, ^u) գուգակցումը հաջորդ ձայնավորի հետ:

Յերկբարբառները լինում են իրենց վանկարար ձայնավորով նաև կարճ (օⁱ, աⁱ...) կամ յերկար (օ^u, ա^u...):

Յերկբարբառը յերկորդ տարր կարող են լինել նաև 1, 1, մ, ո սոնանտները, վորոնք ավելի հնչեղ են քան «իբրացիոնալ» (Փորտունատովի հորջորջումն ե) ձայնավորը (նման մեր կարճ «ը»-ին): Յեկ վորովհետև սոնանտները պակաս հնչեղ են, քան ձայնավորները, բնական ե, վոր վանկարարը պիտի լինի ձայնավորը, ինչպես ար, ալ, ան, ար, ել..., օր, օլ... և այլն:

Յերկբարբառը յերկորդ վոչ վանկարար տարրը ավելի թույլ ե իր ուժեղությամբ և քանակով քան վանկարար ձայնավորը, և շատ լեզուներում միտում ունի անհետանալու (Փրանսերենում «իջնող» յերկբարբառը չկա). համեմատիր մեր բարբառների յերկբարբառները գրաբարի հանդեպ: (Մայր > մար, մէր. քոյր > քուր, քիր. ալիւր > ալուր, ալիր...), այժմ միտում կա, հատկապես «հնդեվրոպական» կոչված լեզուների վերաբերյալ գիֆտոնդներ անվանել այն հնչակոմպլեքսը, վորը կազմվում ե ա, օ, ե, թ (=մեր «ը» յերկար) ձայնավորներից և յ, ա, ր, լ, մ, ո սոնանտներից, վորոնք (սոնանտները) կցվում են այդ վանկարար ձայնավորներին թե սկզբից («բարձրացող» յերկբարբառ) և թե վերջից («իջնող» յերկբարբառ): Բայց սոնանտի առջևից (յերբ «բարձրացող» յերկբարբառ ե) կամ հետեւից (յերբ «իջնող» ե) պիտի կցվի նաև բաղաձայն, վորը կարող ե լինել կամ լոկ պայթական և շփական բաղաձայն («աղմկային» բաղաձայն) կամ սոնանտ այլ բաղաձայն: Յեկ յեթե այդ բաղաձայնն անվանենք պայմանական կերպով C (consonans «բաղաձայն» լատիներեն բառի առաջին տասով), այն ժամանակ կ'ստանանք հետեւյլ յերկբարբառները—ayC (aⁱC), awC (a^uC), arC, alC, amC, anC և կամ բարձրացող տեսակը՝ Cya (Cⁱa), Cwa (C^ua), Cra, Cla, Cma, Cna: Այդպես կարելի յեկ կազմել նաև ե, օ, թ ձայնավորների հետ (eyC, ewC, erC..., Cyε, Cwe, Crε... և այլն): Այնպես վոր հին հայոց մայր, մաւր, ալտ, ամոր, հանդ բառերի մեջ ունենք այդ «իջնող» տեսակի յերկբարբառ-

ներ, վորոնց հաջորդում ե մի վորեմ բաղաձայն (C). իսկ «բարձրացող» տեսակի կլինեն, որինակ, միմյանց, թթուաշ, Մռավյան և այն, թեպետ այս տեսակն այնքան ել ակներեւ և բնորոշ չե հայերենի համար, բացառությամբ թերեւ Cya, Cyε... տեսակից (պատմության, Պապիկյան, արդյոք, գավառական «ըյեր», և այլն:)

Յերկբարբառների այս դիրքավորվելը կամ բնորոշվելը ու աղածայնի (C) կցորդությամբ հնչափոխական տենդենցների տեսակետից ունի կարևոր նշանակություն. համեմատիր, որինակ, հայոց բարբառների հին «իջնող» յերկբարբառների անհետանալը ($m\text{այր} > m\text{էր}$, $m\text{աւր} > m\text{օր}$, $l\text{ուս} > l\text{ուս}$ կամ լիս, $ա\text{լիւր} > ա\text{լուր}$ կամ ալիր, ինչպես և «բարձրացող» տեսակից՝ Պապիկյանց $>$ Պապիկյանց կամ Պապիկյանց և այլն (բայց հին-այա-, -ոյա-, -աւա-, -իւա-, և նման կեմպլեքսները մնում են):

ՄԱՍ II

ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մինչև հիմա մենք քննել ենք ընդհանուր հնչյունաբանության (ֆոնետիկայի) այն մասը, վորը վերաբերում և հնչյունների բնախոսական արտաքերմանն ու զասդամանը («հնչյունների ֆիզիոլոգիա») և հնչյունների քանակին:

Հնչյունների այդպիսի քննարկումը հարկավ կատարվում է տեսականորեն, քանի վոր հնչյունները առանձին գոյություն չունեն, այլ մտնում են արտասանելի խոսքի ընդհանուր շարքի մեջ, կապակցության կամ ասսոցիացիայի մեջ են մտնում հարևան հնչյունների հետ և այլն: Կենդանի արտասանության (խոսելու) ժամանակ մեծ փոփոխության և յենթարկվում միևնույն հնչյունի վորակը, նայած այդ հնչյունի դիրքին բարի կամ արտասանելիք մեջ: Այս պայմաններում և լեզվի հենց մի տվյալ մոմենտում (վոչ միայն պատմական զարգացման մեջ) տվյալ հնչյունի վորակը փոնկցիոնալ կապակցության և հետևապես փոփոխության մեջ ե, յեթե այդ հնչյունը, որինակ, բառասկզբումն ե, թե բառավերջում, յեթե նա ասսոցիացիայի մեջ ե մտնում հարևան հնչյունի հետ, յեթե նա ազգվում ե շեշտի հանգամանքից և այլն:

Սրանից արդեն պարզ յերևում ե, վոր հոգումն գլուխութեայիցից սահմանվող «հնչյունների ստատիկա» և «հնչյունների դիմամիկա» հորջորջումը մենք շատ պայմանական պիտի համարենք, քանի վոր տվյալ լեզվի տվյալ մոմենտի արտասանության մեջ բացահայտ նկատելի յեն հնչաշարժիչ ուժերը: Այդ կոնկրետ արտասանության մեջ հնչական դրությունը նույնպես փոփոխական վիճակ ե կրում, ինչպես տեսնում ենք այդ լեզվի քիչ թե շատ յերկար զարգացման ընթացքում. այստեղ միայն կարող ե լինել փոփոխությունների քանակի խնդիր, վորովհետեւ վորոշ հնչյունական փոփոխություններ («ընդհանուր պատմական հնչյունափոխություն») նկատելի յե դառնում այդ կոնկրետ լեզվի զարգացման քիչ թե շատ յերկար ժամանակամիջոցում:

Վորոշ լեզուներում կամ մի լեզվի վորոշ պատմաշրջանում հնչյունական (և ձևաբանական ու իմաստաբանական) փոփոխությունը ունենում է տարբեր տեմպ, քան այլ լեզուներում կամ նույն լեզվի այլ ժամանակաշրջանում: Որինակ, լիտովյաների լեզուն, վոր քիչ և ազդվել այլ լեզուներից, այժմյան հնչյունական վիճակով շատ քիչ և փոխված համեմատած ազդակից այլ լեզուների նույն հնչյունական դրության հետ: Մի հայերենի, ֆրանսերենի կամ անգլերենի այժմյան հնչյունական վիճակը շատ ու շատ և հեռացել մի հազար տարի առաջ յեղած վիճակից, քան հենց նույն լիտովյաների մոտ, վորտեղ բառեր կան, վոր պահել են, ինչպես ասում են, «Հնդկաբուպական» հիմն վիճակը: Ընդունվում է մասնավորապես, վոր ուժեղ ազդեցություն և գործում այդ հնչյական և այլ փոփոխությունների վրա լեզուների խառնվելը՝ ցեղերի միջրացիայի և նորմալ հասարակա-տնտեսական ներթափանցման շնորհիվ, վորի հետևանքով առաջանում են խառն, բայց միամնական նոր լեզուներ (համեմատիր հայերենը, անգլերենը, բոլգարերենը և այլն): Բայց անշուշտ միայն այդ պատմական հետո դիտելի «խառն» լեզուները չեն, վոր տալիս են հնչյական փոփոխության արմատական բեկումներ և թափեր (տեմպեր), թեպետ մաքուր անխառն («անապելվելի») լեզուներ գոյություն չունեն: Վորեւ լեզվի «ընականոն» զարգացման ընթացքում նմանապես նշմարվում են այդպիսի արմատական փոփոխումներ, հատկապես իմաստաբանության մեջ, վորը (փոփոխումը) կախում ունի վերջին հաշվով ժողովրդների տնտեսական-արտադրական կյանքի փոփոխումից: Լեզվական բոլոր իրակությունների (հնչյական, ձևաբանական, իմաստաբանական, լեզվիկայի) զարգացումը չի կարող ունենալ, վորպես այդ, զարգացման սուբստրատ՝ լեզվի «ինքնաբավությունը», վորը ֆիկցիա յե՛ ծիշտ ե, մենք պիտի ընդունենք լեզվի սպեցիֆիկը, նրա իմմանենաը, լեզվի ժառանգականության փակտորն ես, յերբ տվյալ լեզվի տվյալ սիստեմը յուր հնչյուններով և ձևաբանությամբ յուր հերթին դառնում ե ձևավորման ու զարգացման կամ ազդեցման գործոն հետեւյալ ետապի համար, բայց այդ բոլոր մենք ընդհանրապես փոփոխության ենք յենթարկում մեր զարգացման պատմական պրոցեսում: մանավանդ այդ նկատելի և ակնրախ և լեզվի իմաստաբանության և լեզվիկայի մեջ, վորոնք հասարակայնության և նրա մատայնության կարքը ան միջակ ե ու են կրում:

Լեզվական իրակությունների («փաստերի») փունկցիոնալ

կապը արտադրական ուժերի և հասարակական փոխհարաբերությունների հետ անմիջական և յեղել լեզվի գոյության (ծագման) առաջի մոմենտներում: Լեզվի զարգացման հաջորդ մոմենտներում (ետապներում) հանդես են գալիս այդ արտադրական գործունելյության վրա խարսխված նորանոր միջնորդավորող ֆակտորներ ևս, ինչպես արտադրական կոլեկտիվի կամ յեղի միասնության վակտորը, յեղերի տնտեսական-ցեղական (եթնիկական) խաչավորման ֆակտորը, լեզվական սիստեմի ժառանգական ստացվածության վակտորը («լեզվի ինքնապարզացումը»), պետականության (քաղաքականության) վակտորը, գրի (գրականության) վակտորը, տվյալ սոցիալ-կուլտուրական ընդհանուր կացությունը յուր կենցաղով, հոգեբանությամբ և այն, դասակարգերը և թերեւս սերունդների փոխանակությունը: Աչքաթող անելով աշխարհագրական վակտորը, վորը հին ժամանակ անշուշտ դեր խաղացել ե*, յերբ սարերն ու ձորերը խանգարել են հաղորդակցության, մատնանշենք հենց մեր ժամանակվա այն ազդեցությունը, վորը տալիս ե գրի և գրականության («գրային լեզվի») վակտորը լեզվի միաձուլության և կոնսերվացիայի վրա (համտ. անգլերենը Անգլիայում և Ամերիկայում) կամ ընդհակառակը՝ մի ցեղի (ազգի) բաժանված լինելը յերկու պետությունների մեջ, իբրև անջատող և տարագարգացման ազդակ:

Հնչափոխական ֆակտոր և նաև «արտիկուլացիոն բազան», վորի մասին վերել (եջ 81) ասվել ե: Իբրև վորեւ լեզվի նրա տվյալ պատմական շրջանի արտասահնական ունակությունների ամբողջություն, այդ արտիկուլացիոն բազան հատկապես գեր և խաղում ուտար բառերի հնչական ձևափոխությունների մեջ: Որինակ, յես թե վրացիք չունին փ, կրկնակի բաղաձայն և այլն, նրանք վորի վրացիք չունին գործ մեջ կամ կիոխարինեն նման հնչյունները ինառությունների մեջ կամ կիոխարինեն հնչյունով («Փ»-ն «Փի»-ով) կամ կվերենց մոտ յեղած մոտավոր հնչյունով («կրկնակի» բաղաձայնը վերաբառածեն այլ որինաչափության («կրկնակի» բաղաձայնը վերաբառածեն գրել սոսկական պարզով) և նման շատ յերեսույթներ: Արաբներն որեւ սոսկական պարզով) և նման շատ յերեսույթներ: Արաբներն որինակ, չեն սկսում բառեր յերկու բաղաձայնով, իբրև իրենց լեզվի տվյալ մոմենտի որինաչափություն, և, յեթե վերցնում են լեզվի տվյալ մոմենտի որինաչափություն, և յեթե վարտուղի միջոցների, ինչպիս «Պլատոն» հունարեն անունը վերաբարդում են «Աֆլատոն» (իֆլատոն) կամ «Փիլատոն» և նման ձևերով, վոր հատուկ պիտի լինեն արաբերենին, նման յերեսույթ մենք տեսնում ենք թյուրքերենում, ուր ստարիկ, ըուչկա և նմանները գտնում են «աստարիկ», «իսպիչկա» և այլն: Թյուրքերը այդ յերեսույթի շնորհիվ (չկարողանալով յերկու սկզբնական բաղաձայն արտասահնել) մեր հին տեղանուն «Վժան»-ը, վորը գտնվում է Արագածոտնում, գարձրել են «Ուջան» (թյուրքերը չունին նաև «Ժ» բաղաձայնը), վորն արգեն հետազում անցնում և յուր արտասահնությամբ շրջակա հայերին, համեմատիք նաև Զօր հին գյուղը նախկին թյուրքառուսական սահմանագլխում հայոց Զորից, կամ «Զանգեղպուր» թյուրքական արտասահնությունը հին «Զագեծուր»-ից, Արագած > Ալագյաղ (և ժողովրդական ստուգաբարանությամբ՝ նաև «Ալագյող») և այլն և այլն: Հայերը պարսկական ծ (ձայնեղ սպիրանտ ե) բաղաձայնը վերաբարդել են «ր» սոնանտով, ինչպես արձանագրությունը (պարան (ք)), Տրանտադատա=Ալագյաղ (ալագյաղ), հին պարսկական այժմյան պարան (ք) և այլն: Յետագայում այդ հայկական «ր» («Բ»-ից) կոմպլեքսը, ուր 0 առաջնակեղային խուլ սպիրանտ ե, վերաբարդել են «Բ»-ը «Ծ» հնչպիս հին պարսկերեն Տոնից = ընորհ («*շնորհ» ձեից), հին պարսկական այժմյան պարան (շահիր) և այլն: Յետագայում այդ հայկական «Ծ» («Ծ»-ից) կոմպլեքսը դառնում և սոսկ «Հ»: Մենք գիտենք նաև, վոր սուսաները հունարեն 0 սպիրանտը վերաբարդել են (իրենց լեզվի «բաղային» հարմարեցնելով) Փ բաղաձայնով, վորն այս դեպքում

առաջ գրվում եր Թ (=փիտա), ինչպես Թեօդօր, անթեմա. իսկ այժմ՝ մյան թատր, թեմա և նմանները փոխ են առել յեվրոպական լեզուների միջոցով (հայերը այդ հունական թ բաղաձայնը վերաբռնադրել են «թ»-յով):

7.

Բառեր կան լեզուներում, վորոնք իրենց չափազանց («արտակարգ») գործածության պատճառով և մանավանդ իրրել կոչական բառեր, յենթարկվում են նաև արտասովոր կրծատման (վոչ ըստ նորմալ հնչական որինաչափությունների), մանավանդ վոր բավական և միայն բառի սկիզբը կամ կարելոր հնչական մոմենտները արտասանել, վոր դիմացինը հասկանա: Որինակ, այդպես և ֆրանսերենոցու (=պարոն) արտասանությունը monsieur ձեից, կամ ոռւսաց զճարտե արտասանությունը զճարտվույթ ձերտե ձերտե ձեից, կամ գերմանական ժողովրդական տօն (=բարի առավոտ) guten Morgen ձեից, կամ մեր «ցը» իրրել հասկանալի կրծատում «ցտեսություն» ձեից և այլն և այլն: Նման սոցիալ-հոգեկան դրդապատճառ ունեն և հայոց բարբառների «յեսիմ», «չըմգե», «չըստե», կրծատումները, վորոնք առաջացել են «յես ինչ իմանամ», «չեմ գիտեր», «չես գիտեր» ձեերից: Մինչեւ իսկ մի գերմաներեն (հին վերին գերմ.) hiutu «այսոր» բառը չեն համարում որդանական հնչափոխություն hiut (=այս) և tagu (որ) բառերից. համեմատիր մեր ժողովրդական «ստի», (=«եստեղ» ձեից), «բան» (=«ելտեղ»), «ընդե» (=«ենտեղ»), կամ «ստարի», «սոր», «զդար»), կրծատումները «ես տարի», «ես որ», «ես (կ)դար» (=եսչափ) բառերից: Այստեղ ևս կրծատումները արտասովոր կարելի յե համարել քանի վոր այլ դեպքերում պահպում և «էս», որինակ՝ էս գիշեր, էս տունը...:

Եյս արտասովոր կրծատման են յենթարկվում և հատուկ առունեները, ունենալով նման (շուտ հասկանալու) դրդապատճառ, մանավանդ վոր որցեկտը, իրրել կոչական բառ, անմիջապես գլուխովում և դիմողի առաջին և ձեռքի շարժումով ել ուշադրության և կանչվում: Համեմատիր ուռւսաց Սաշա (=Ալեքսանդր), Կոլյա (=Նիկոլայ), Օլյա (=Օլյա), Նадյա (=Նադյոյա)… կամ մեր հայոց բարբառների, մանավանդ զարարացիների Ա՛ Հապ (=Այ Հապետ), Ա՛ Սաք (=Այ Սաքիս), Ա՛ Թյուն, (=Այ Հարություն) և նման սոսկալի կրծատումները, ուր սկզբի «Ա՛» բացականչական հավելացումը այլ բարբառներում փոխարինվում և ո վերջափորությամբ (Կարո, Գրքո, Համո...), նման քրդերենի նման վերջավո-

րության արական սեռի հատուկ անուններում (Խղգո, Ալո, Ավղո, Համո...)*: Ինչպես տեսնում ենք նման արտակարգ կրծատումների մեջ ևս լեզուն ձգտում և ստեղծել վորոշ որինաչափություններ:

8

Հնչափիխական կարենոր յերեւույթ և և այսպես կոչված «գրափխությունը», կամ հունարեն բառով ասած՝ մետաթեզիսը Մրա եյությունը կայանում և նրանում, վոր բառի մեջ վորոշ հնչյուններ (բաղաձայններ) կամ վանկեր կարող են իրենց դիրքը փոխել և ընկնել յետ կամ առաջ: Ամենատարածվածն և այն դեպքը, յերբ բառի հաջորդ կամ վերջին մասի բաղաձայնը (կամ վանկը), իրրել հնչական մտապատկեր ավելի շուտ և գարմնում (առաջնում) արտասանողի բառահնչման մտադրության մեջ քանի իրեն հատկացվելիք մոմենտում, նախքան իրեն տեղին տրվելու: Որինակ, մի հին «կամուրջ» կամ «կապերտ» բառերի «ը» փոնեման, իրրել արտասանական մտապատկեր և մտադրություն ավելի շուտ գոյանալով («առաջ ընթանալով»), տալիս և ժողովրդական «կարմուջ» (վորից՝ կարմունջ) և «կարպերտ»: Այդպես և գդալ՝ զգալ, ձգել՝ գձել (գրվում և «դցել»), լվացք>վլացք...

Համեմատիր նաև հունարեն ուրօն «գառն» առաջացած որոշն ձեից, ոռւսաց լածոն հին ձլան-ից, կամ մեր ժողովրդական գրափխությունները—բալանի <բանալի ձեից (արմատն և հին բանալ «բացել»), ալանի <անալի (=անաղի) ձեից, զոնքաչ <զոնքանչ, անկաջ <ականջ ձեից և այլն**: Վորոշ մետաթեզիսներ հայերենում պատմական որինաչափությունների անհրաժեշտություն են ստացել, ինչպես հնագույն «բաղաձայն+ր» (կամ 1) գառնում և «ր(կամ 1)+բաղաձայն», ինչպես «արտասուր արմատը, վորն առաջացել և *trasu- հախահայկական ձեից tr>rt

*) Գրաբարում այդ գեկովում, այն ե՛ կոչական բառի ոկզերում ավելացնելու եր ով բացականչական մասնիկը (ով մարդ, ով ծովակ...), վորը վրացերենում հին ժամանակ գրվել և բառի վերջում—կացի ով, բիճի ով..., վորոնք դարձել են կացո, բիճու և այն (ըստ Մառի): Հարաբացցոց մեջ Ա՛ Սաք, Ա՛ Թյուն, Ա՛ Հապ և այլն դաշտում են և սովորական փաղաքական բառեր (Սաքը յեկալ), առաջացած Սաքիս, Հարություն, Հայրապետ և նման բառերից:

**) Յեղբորս փոքր տղան յերեք տարեկան հասակում, տ ը ն դ հ տ արտասանում եր մրոկի փոխանակ մօքրի (թաց), կազակ փոխանակ ու առաջի (ցուցյա տուր), գորու (ցարաւա) փոխանակ գորու և այն:

զրափոխությամբ (համեմատիքը հունարեն ծշ'ռօ), լատին. lacruma < *dacrūma ձեից և այլն), մերձ (=մոտ) հին *մեծը ձեից (համեմատիք հուն. υεγροι, γερղայր (|| աղբայր) հին *լիսայ ձեից (ա || և նախագիր կամ պրոթեսիկ ձայնավորներով), վորը յուր հերթին առաջացել է *rbayr (=rbayrātēr) հնագույն ձեից: Մինչև իսկ փոխառություններն անդամ յենթարկվել են այս որինաչափության, ինչպես ե զրաբարի հաղբ-ք (=ծուղակ, թակարդ)= ասորական խալա, արաբերեն իաбл նույն բառերին: Ժողովրդի մեջ գեռ մինչև հիմա ել շարունակվում ե այդ մետաթեղիսը, ինչպես արաբատյան բարբառում սարվել < *սավրել (<սովրել <սովորել) ձեից, կամ այլ բարբառներում՝ մրկաստ <մկրաստ, առկա <ակռա և այլն, և այլն: Արդյոք պատմական նպաստավոր հող չը յեղել այդ արասանական հնչափոխութեան համար, յերբ նույնը տեսնում ենք նաև նախահայկական, այն ե՝ խալբական, նման փոփոխության մեջ, ինչպես ե խալբական (ուրարտական) Harsitani= ասորեստանցոց Աշурдан թագավորի հատուկ անվան:

Յերեմին հետագա հնչյունի մտապատկերը տուաջ ընկնելով՝ արտասանվում ե նաև իրեն սովորական տեղում, ինչպես լատիներեն thesaurum (=զանձ) բառից ունենք ֆրանսերեն trésor նույն բառը: Այս յերեսույթը կոչվում ե «անտիցիպացիա»:

Բայց կա սրան հակագիր այն գեղքը, յերբ հնչյունի (բազաձայնի) արտասանական մտադրությունը շարունակվում է, յերբ իրեն հատկացված տեղում արդին արտասանվել ե: Այդպես գերմաներեն genug (=բավկական) բառը ժողովրդի մեջ արտասանվում ե նաև genung, այսինքն նախորդ «Ո» բաղաձայնի արտասանական մտադրությունը գեռ շարունակվում ե հարատեղել և կրկնվել ց բազաձայնից առաջ: Թերեւ այս յերեսույթին պիտի վերաբերել և մեր ժողովրդական (և գրական) «մենք» բառի «Ն» բաղաձայնի առաջ գալը, իրեն նախորդ ոնդային «Ճ» հնչյունի շարունակությունը, վորովհետեւ հին ժամանակ կար միայն «մեք» ձեը (մեք > *մեմք > մենք?): Համեմատիք նաև—կամաց > կամանց, կանաչ > կանանչ, կամուրջ > կարմուջ > կարմունջ, ձանաչել > ձանանչել ամաչել > ամանչել և այլն: Կարելի յե ընդունել նաև, վոր ոնդային և կամ և բազաձայնը իր արտիկուլացիոն անմիջականության ընթացքում ոնդայնացնում ե նաև իր հետ որդանապես շաղկապված հաջորդ ձայնավորը. և, որինակ, մեք նաև գանում է ուշէ՝ (ուր է ոնդային ձայնավոր ե) և ապա վերածվում տենէ՝ (մենք) ձեին, մանավանդ վոր հայերը ոնդային ձայնավոր չեն

ունեցել [այժմ ինձ հայտնի յե ոնդային «Ը» ձայնավորը միւյն լիր (=ահա) բառի մեջ]:

9.

Բառերը կարող են փոխել իրենց հնչյունական արտաքինը և այլ բառերի աղդեցության կամ նմանողության հետևանքով («անալոգիայով»), վորի մի հատուկ տեսակն ե կազմում այսպիսի կոչված «ժողովրդական ստուգաբանություն»-ը (народная этимология, Volksetymologie), վորն ավելի ճիշտ կլիներ կոչել ըստ Բոգուեն զր Կուրտենեյի՝ «ժողովրդական իմաստավորում» (народное осмысление): Այս այն գեպքն ե, յերբ հին բառեր, կամ ոտար տեխնիկական տերմիններ և տեղական հին անուններ (toponymica), չհասկացվելով իրենց կազմությամբ՝ յենթարկվում են այնպիսի փոփոխության, վոր այժմյան լիդվին մոտ իմաստացվի, զուգակցվելով այս կամ այն բառի հետ: Որինակ, ոռուը չեր հասկանում շետը (վկա) հին բառի կազմը, վորի հիմքում հին ուղավոնական ամառանական ամառ (պիտինալ) բայարմատն ե. և վորովհետեւ այդ բառի պաշտոնը հեշտությամբ զուգակցվում ե «տեսնել» (զիտել) զործողության հետ, ուստի ժողովուրդը իմաստավորում ե հենց այդպիս, զարձնելով շետը բառը շետը, ոգտագործելով առաջին հերթին նման կենդանի բայաձեր, (вед—«կմանալ» և այլ—«տեսնել») բայարմատները: Այդպիս, որինակ, և արարը Aleksander հատուկ անունը արարական լիդվին ձեւրին յենթարկելով՝ սկսեց գիտակցել նրա սկզբնական Al—մասը իրեկ արարական ազգային ալ—մասնիկը (հողը), իրեկ կոնկրետ ասարկայի ցուցանիշ, նման ալ—koran, «զորան», as—surat «նկար» (ալ—surat) և այն կազմություններին, և զատելով ըստ իրեն լիզվական լիզվին հատուկ ձևաբանական պայմաններում), արարը Aleksander-ը գարձրեց Eskander. այդպիս և laškar պարակերեն բառը (զորք) զարձավ askar: Հայերենից նաև կարելի յե բերել բազմաթիվ նման որինակներ: Հաճախ հին առևտրականները (որինակ Աշտարակում) գերազանում եին «բարձր լեզվով», այն ե՝ ոռուական վոճերով և բառերով համեմել իրենց կիսագրական հայերենը, զործածելով «հաշիվկա ընկնել» (=օշիբկա ընկնել), այսինքն սիալիկը կապակցելով (և ձեափոխելով) ոռուական օշիբկան օշիբկա բառը հայոց հաշիվ բառի հետ, մանավանդ, վոր նրանց զործը անընդհատ հենց հաշիվներ տեսնելու մեջ եր, ուր

հեշտությամբ կարելի յեր «աշխրկա ընկնել»: Խուսափելով «ցած» հայերենից՝ այդ վաճառականները գերադասում ելին ասել և «քեսվեստ», այսինքն անխիղճ, ուր ոռուսկան այդ բես-սուստնայի (ան-խիղճ) բառը հայ կուլակը մասսամբ հայացնում եր կապակցելով սկզբի «բե» — մասնիկը այն ժխտական «բե» մասնիկի հետ, վոր մտելեցուզական բարբառները պարսկերենից (բեմուրադ, բեշինս, բեջուռա, բենամուս, բեֆասոն..). այդպես և «բե—սվեստ»: Յերևանի հասարակությունը հաճախ գործ ուներ վերջերս «հաշմանդամ» տերմինի հետ, կապված մանավանդ հաշմանդամների խանութի հետ: Յեվ վորովհետև «հաշմ» բառամասը զրաբարից և և ժողովրդին անհասկանալի (այդ հաշմ—արմատը նշանակում է «կոտրել, խեղել»), իսկ այդ հաշմանդամ խանութավարները պահաս «հաշիվներ» չելին տեսնում, քան վերոհիշյալ վաճառականները, ուստի բնական ժողովրդական ասսոցիացիա պիտի կազմվեր «հաշվանդամ» հասկանալի բառաձայնի հետ, վորը և գործածական ե վոչ կրթված քաղաքացիների մեջ: Այդպես և հօզայն գառնում է «խաղելիին» (Եջմիածնում) նման տեղերակին, քաղվրակին, քեռակին բառերի հասկանալի կազմության: Ուռասերենից վերցրած յեվրոպական վազելինը հեշտությամբ գառնում է «մաղելին» (կապակցվելով մազ—մազ, մագել բառերի հետ, վորոնք կենդանի գործածական են): Համեմատիր նմանապես — Արագած > Արագյազ > Արագյող թյուրքական լեզվի լուսուգարանությամբ, հին Պուրատ (ասսուրական անունն է Յեփրատ գետի) անունը գարձել ե Մուրատ-Զայ, Ազզը > Հայս և այլն, և այլն: Շատ ելին սիրում «ստուգարանել» մեր հին հայոց պատմագիրները, բացատրելով Մասիսը—Ամասիայից, Արմավիրը—Հարմայից, Արարատը—Արայից, Հարքը—հարք (=հայրեր) գրաբարյան բառից, Գեղաքունին գարձնելով Գեղարքունի, կապակցելով յերեկի գեղ (=գեղեցիկ?) և արքունի բառերի հետ, և այսպես անհամար և անգիրչ:

Հայտնի յեն ոռուսաց բարբառներում ցարիկմի որով հետեւյալ ստուգարանությունները—պրյամ «ուեժիմ» բառից (իբրև

* Շատերը, մանավանդ հին հայկաբաններից, սինչե հիմա ել կարծում են, վոր Volksetymologie յերեսւյթը գոյություն ունի միայն հին չհասկացվող տեղանունների կամ հատուկ անունների նկատմամբ: Այդ սխալ ե ինարկե: Ժողովուրդը հիմա հասարակ բառերի մեջ այդ ժողովրդական իմաստավորումը յերբեմն չափազանցության ե հասցնում, ինչպես «դեղ տուր» իմաստավորումը «զոխառուր» (=դոկտօր) բառից և այլն:

հնշում, прижимать ոռուսերեն արմատից) կամ սեկուտօ «կը-գելուտոր» (секать, сечь шредаштиց):

10.

Շատ հայտնի յեն հնչյունափոխության մեջ այսպիս կոչված ասսիմիլացիա («առնմանություն») կամ դիսիմիլացիա («տարնմանություն») յերեսւյթները, վորոնք լինում են յետընթաց («ուեգրեսիվ»), յերբ հետագա հնչյունը ազդում ե նախորդի վրա և իրեն նմանեցնում կամ հեռացնում: և լինում են առաջընթաց («պրոգրեսիվ»), յերբ բառի սկզբնական (նախորդ) հնչյունն և այդ կերպ ազդում հետեւյալ հնչյունի վրա: Ասսիմիլացիան կարող ե լինել նաև լրիվ կամ մասնակի:

Այս յերկու հնչյունափոխական յերեսւյթներն ել կարող են սահմանափակվել միմնույն բառի մեջ, նրա սահմանում, և կարող են ի հայտ գալ յերկու հարեւն բառերի ներգործությամբ:

Բերենք որինակներ, նախ՝ ասսիմիլացիայից:

Մեր լեզվի նախագրաբարյան շրջանում յեղել և *ծանաչեմ (=հանաչում են) չպահված ձևը*, վորից ունենք անցյալ կատարյալ «ծան-հայ», պատճառական ծանուցանեմ, ինչպես և ծանօթ բառերը (ծան-արմատը նույնն ե ոռուսաց ՅՀ-ատե արմատի հետ, վորոնք հնդեվրոպական ցըն-արմատից են). — աչ վերջածանցը, իբրև գործողություն սկսող բայերի (verba incohativa) ածանց (նման մեղանեմ, երկնչիմ, փախչիմ..) ավելանալով ծան-արմատի վրա յուր «չ» հնչյունով ազդում ե սկզբնական «ծ» հնչյունի վրա և գարձնում նրան «Ճ», այսինքն՝ շշային, վորը մոտ ե «չ» շշայինին, քան սկզբնական «Ճ» սուլիչ (սուլական) բաղաձանը: Թիւետ գրաբարում վեռ զգացվում եր այդ յերեսւյթի արդիականությունը, յերբ անցյալ կատարյալը շաբունակում եր «ծան» արմատը պահել (ծանեայ, ծանիր, ծանուցեալ.., ծանօթ), բայց ժողովրդական լեզվում այդ ել մեռնում ե և «ճանանչել»ը դառնում ե հիմնական և սկզբնական, վորից ճանանչեցի, ճանանչել եմ, իմ ճանանչը, (=ծանօթը) և այլն: *Ծանաչեմ > ճանաչեմ ասսիմիլացիան (*ծանաչեմ) յետընթաց ե: Ընդհանրապես պետք ե ասել, վոր թեքական տիպի լեզվուներում գերիշխում ե այդ յե-

* Յերբ վորեկ բառ, ձև կամ հնչյուն վերականգնվում ե իբրև առաջ յեղած, բայց պատճականորեն վրակոր կերպով չպահված, ապա դրանցից առաջ դրվում ե * (ասազ) նշանը:

տընթաց ասսիմիլացիան, այսինքն՝ յերբ յետին հնչյունն և աղուում և իրեն նմանեցնում իր անմիջական կամ հեռավոր հնչյունին:
Այլ որինակներ:

Հին *զքողեմ, *զփոփեմ, *զթափիմ դարձել են սքօղեմ, սփոփեմ, (համեմ, ամ-փոփեմ), սթափիմ: Կամ թե *դականջեմ > շականջեմ, *անձան-ը > անձամբ, ան-բիծ > ամ-բիծ և այլն:
Այդպես և ոռւաց սделать, второий, встреча և նման գրությունները արտասանվում են ուղրեսիվ ասսիմիլացիայի շնորհիվ սделать, второий, встреча և այլն: Գրաբարյան սկիզբն ածանցավոր ձեզ ստացվել և *սկիս—(սկս—անիմ) շեշտունակ արմատից, բայց «» հնչյունը փոխվել է «» հետեւյալ «» ձայնեղի աղղեցությամբ (թերևս skis-տեղուր skis-եղուր skiz-եղուր): Համեմատիք լրիվ ասսիմիլացիայի հետեւյալ դեպքերը — արաբերեն ալ-մասնիկը as-surat, ad-din, ar-rahmat և նման բարդվածքում, կամ լստիներեն as-similatio, ag-gregatus, af-fectum և այլն սկզբնացով:

Առաջնթաց ասսիմիլացիան շատ ուժեղ և թյուրքական, ֆիննական և մոնղոլական լեզուներում, ուր այդ յերկույթը հատկապես ձայնավորների նկատմամբ կոչվում է «ձայնավորների հարմոնիզացիա» (ներգաշնակավորում): Որինակ՝ յեթե արմատի (առաջին բառն և) վանկարար ձայնավորը յետնալեզվային և միջնալեզվային և, ապա կցվող մասնիկների ձայնավորն և այդպիսին պիտի լինի, այսինքն ա, ա, օ, ս, աջ, թ և նմանները, իսկ յեթե արմատի ձայնավորը առաջնալեզվային ձայնավոր և (այ, օ, թ, ի, օ, ն..), ապա և կցույթներինը նույնպես: Որինակ, taş (քար) — taşlar («քարեր»), բայց և (տուն) — evler (տներ). Կարելի յեւ և ավելի բարդացնել (ev-ler-imiz «մեր տները», ev-ler-imiz-dâ «մեր տներում» նույն ասսիմիլացիայով և այլն):

Մեր բարբառների սովորել, խորովել, կորորիկ, մոլորվել և այլն բառերի օ ձայնավորների ուժեղ կորացմամբ հնչելը պայմանավորված ե, ըստ իս, այդ յերկու օ-երի փոխադարձ ասսիմիլացիայով. Գրա հետեւանքով «»-ն չի դառնում «» (ինչպես խոռոշություն և այլն): Առաջնթաց ասսիմիլացիաներ են մեր բարբառների «շոշ»ը աօսե բառից, «ջաղաչ»ը՝ հին «ջրաղաց»-ից, հորոխպեր՝ հին «հօրաղբայր» ձեխց և այլն:

Յեթե ասսիմիլացիան մասնակի յեւ, ապա այդտեղ նմանվելը կատարվում է հնչյունի մի հատկության նկատմամբ, այն և կամ բառ տեղի (ան-բիծ > ամ-բիծ, ն > մ շրմանանում, բայց պա-

հում և ոնդայնությունը)*, կամ ըստ արտասանության յեղանակի (աչք-աշկ, քո-քու...): և կամ ըստ ձայնալարերի աշխատանքի (խուլ կամ ձայնեղ), ինչպես *զքօղել > սքօղել ԵТОՐՈЙ> ՓՈ-ՐՈՅ և այլն:

Ասսիմիլացիայի և գիսսիմիլացիայի գրաւորումը միշտ մինում է կոնկրետ պայմաններում, այն եւ պատմական վորոշ լեզվառւնակությունների հետ կապված: Յեթե այսինչ տեղում և գորոշ ժամանակ Սիբատ, ամբար, բամբակ... (մը հնչակումպլեքտով) միանգամայն նողատականարմար և այդ լեզվի սսսիմիլատիվ ձբգտումներին, ապա հարևան բարբառում կամ հենց այդ առաջին բարբառի մայլ ժամանակաշրջանում գերազավում և հնչել դիսիմիլատիվ կերպով, այն և Սնբատ, անբար, բանբակ... (նը հարման հնչյուններով):

Հնչյունափխական այս առնմանության կամ տարնմանության որինաչափությունների հողն ևս պատմական է: Որինակ հայերը մի ժամանակ ունեցին յերկու և, մեկը «փափուկ» (=ոռւաց սաց լի), այդ «լ» տառի հնչյունն է, իսկ մյուսը՝ «կոշտ» (ոռւաց լի), այդ «դ» տառի հնչյունն է: Ասում եյին Պաւլոս (այսինքն ոռւաց գրությամբ Պավլեօս), աղ («ալն») և այլն, և խաղինդ, խեղդել խաղող և նման բառերում «խ» և «դ» հնչյունները շատ հեռու եյին (=ոռւաց «Х» և «Л») իրարից, իսկ յերբ մեր լեզվի փփափամական դարբացման հետեւնքով դ=լի սկզբնական հնչյունը դարձավ «դ» (այժմյան յետնալեզվային ձայնեղ շփականը), այն ժամանակ խաղը խեղդ, խեղդել և այն բառերի մեջ առաջ և գաւլիս նոր տեհնդենց՝ դիսսիմիլատիվ պայքար այդ յերկու նման բառդայնների (խ, դ) մեջ, և վերջին «դ»-ն աղդելով սկզբնական «խ»-ի վրա, վանելով նրա նմանությունը իրենից, դարձնում է հ. և բարբառների սլայմաններին նայած, ստանում ենք հաղալ, հազ, հեղջ, հեխտել և այլն: Խաղող բառի մեջ կրկնակի «պայքար» և տեղի ու ունեցել յերբ նա դարձել և այժմյան հավող, այն և, սկզբից «խ»-ն դարձել է հ (=հաղող) վերջին և թերևս միջին «դ» բառաձայնի ստանամանիչ աղղեցությամբ, իսկ հետո միջին «դ»-ն վերջին «դ»-յի նույն աղղեցությամբ զանում և «կ» (=հավաղ), չին «դ»-յի նույն աղղեցությամբ զանում և «կ» (=հավաղ),

* Այդպես և ոռւաց և այլց պալատալեզվային, յերբ առաջնալեզվային կամ յետնալեզվային բաղաձայնները կամ և ձայնավորից առաջ դառնում են (միջնալեզվային և կամ ց-ի վրայով) և, յու, և ինչպես ուշաւություն, տեսաւություն, ծերացություն, աղղեցությամբ զանում և «կ» (=հավաղ), չին «դ»-յի նույն աղղեցությամբ զանում և «կ» (=հավաղ),

«ցած» բառը «բարձր» հականիշ բառի ազդեցությամբ սկսել են նմանվել այդ վերջինին, դառնալով «ցածր» (համեմատիք նաև «յեղը—մեղը»=յեղ ու մեղը): Այսպիսի ասսիմիլացիան կոչվում է «ձևաբանական ասսիմիլացիա», վորը մտնում է «անարդիա» կոչվող լեզվական յերկութիւնից (այս մասին տես «Զեաբանություն» գլուխը):

Ձևաբանական այս ասսիմիլացիայի մասին մասնավորապես պիտի շեշտել այն, վոր այդ յերկութիւն յերկու հարեան բառերի մեջ կարող են տեղի ունենալ այն դեպքում, յերբ դրանց մեջ վորոց հնչյունների հաջորդական ընդհանրություն, վորոց հնչյունական համանմանություն, համահնչչունություն (ասսոննանս) կա, ապա թե վոչ տեղի չի ունենալ այդ ասսիմիլացիան: Որինակ, «ցած» բառը կարող եր ավելի նմանվել հականիշ «բարձր» ձևին, քանի վոր ած և ա (r) ձերկու բառերի հնչյունակոմպլեքսը համանունչ է, այդպես և ոռուաց հենքարտ և տալիս ավելի նմանվել (նմանապես «յեղը—մեղը» ունեն ընդհանրությունը, ինչպես ասացինք, պարտադիր մինիմումն է զարգացող նոր առնմանության, նոր ասսիմիլացիայի, և յեթե, որինակ, «ծանր ու թեթև» «չորս—հինգ...» նման հայոց զուգակցությունների մեջ չենք տեսնում ասսիմիլացիայի զարգացում, բայց հակառակ, այն եւ նպաստավոր պայմաններում, այդպիսի դեպք պիտի տեղի ունենար, ինչպես տեսնում ենք միջին իտալերեն ցընուն «ծանր» (լատիներեն «gravis» բառից) հականիշ levis «թեթև» (լատիներեն նույն բառն եւ) ազդեցության տակ փոխել են յուր միջին ձայնավորը ($a > e$), ունենալով ընդհանրություն vis || l-vis: Նույնպես լատիներեն quinque «հինգ», վոր հին ժամանակ պիտի լիներ *rinque (= քառական, քառական, քառական, քառական, քառական), դարձել է quinque ձևաբանական ասսիմիլացիայով նախորդ զատուօր «չորս» բառի ազդեցությամբ, նրա զս մասնիկը յուրացնելով: Բայց իս, հայոց «յերկինք—գետինք» վոճի մեջ ևս ունենք այլ ազդեցությունը, այն եւ (գետ)՝ինք վերջամասը չպիտի ունենար «ք», այլ յուրացրել և նմանվելով նախորդին (յերկինք բառի վերջամասին), ունենալով ընդհանրությունին համահնչչունությունը: Մենք մեր «յերկիր» բառն ես այդ ճանապարհով բացատրելով (գրաբար «երկին—երկիր») դաշնում ենք, վոր սկզբում պիտի լիներ ե—kirk (ե-լիր) և ընդհանրություն պիտի լիներ չայաստանի տերիտորիայի

և հարեան յերկրամասերի նման կուլտուրական այդ տերմինին (համեմատիք ուրարտական կիւրա և հետագա կիրա «հող», ուռմերական կուրական կուրական պատմության): Վորոց իդեոլոգիայի (կունականատիյերաբանական, «կոսմոգոնիական») ազդեցության տակ նախական եկիր (ekir) բառը*, միշտ հաջորդելով erkin հին հնչաձել պահած բառին (Մառը դրա հետ համեմատում է վրաց բայրականիթյունը բառը), դառնում է ասսիմիլացիայի որենքով երկր (ստանում եր «ը» նոր բաղաձայնը), ունենալով նախական «e—ki—» ընդհանրությունը հնչյունակոմպլեքսը:

Յերկու բառերի մեջ տեղի ունեցող այդ ասսիմիլացիայի յերկութիւնը թե հնչյունաբանական և լինեածարանական, և ի գորչ չեր թողունքն զբարեսկան այդ կոչում „морфологическая ассимиляция“ կամ „морфологическое уединенообразование“: Դա մասամբ տեղ պիտի գրավի «Ձևաբանության» գլուխում և «ձևաբանական դիսսիմիլացիայի» հետ, վորը, սակայն, լեզվաբանությունը ցայծմ չի տեսել կամ տնտղել: Այդ յերկու որինաչափությունները մի դիալեկտիկական միասնություն են կազմում և ձևաբանական մեծ նշանակություն ունեն (տես «Զեաբանություն»):

11.

Հնչյունափոխության մեջ նկատվում է նաև բարդացման և պարզեցման կամ միացման և բաժանման յերկութիւնը, վորը լինում է այլայլ գրապատճառներից՝ ասսիմիլատիվ—դիսսիմիլատիվ կամ հնչյունափոխության: Որինակ, յեթե հին հայոց սեպուհ + ական» միավորը շեշտի հետևանքով գառնում է սեպահական, ապա «ը» (չգրվող) ձայնավորի անկման շնորհիվ ևս (շուտ արտասանության և գիրքի պատճառով)** «ապի» հնչյունահամապությունը տեղի յեւ տալիս հնչյուն ամիացման, իբրև ասպիրատ նոր բարդ «փ» հնչյուն: Այդ նույնը մենք տեսանք վրաց չամետ «տաներեք» բառի մեջ, վորը («ցամենիք») կազմված կամ մասնակից, և ուր t+ s (թ+ս) համապությունը նմանապես վեր և ածվում աֆֆրիկատ նոր հնչյունի չ (հայոց ց):

* Ekit (=յերկիր, հող) նախահայկական բառը յուր բարբառին հատուկ որենքի համաձայն (կամ թերեւ երկն բառի շեյի ազդեցությամբ ?) ընդունել և սկզբնական «ե»: Ալարողիկական բարբառը սիրում եր նախադիր («պարբերեկի») ա :

** Այդպես և ասեղն—ասպան, այժմյան՝ բերան—բերնի և այն:

Բայց կարող ե լինել և ընդհակառակը, այսինքն՝ բարդը տեղի յեւ տալիս պարզեցման, ինչպես վաթսուն բառի մեջ, ուր «թ» բարդացնը հարեան «ո» հնչյունի գիսսիմիլատիվ ազգեցությամբ յուր բարդ «ց» (վաց- < վեց) վիճակից վեր և ածլել ավելի պարզիք: Նմանապես աղաշ- արմատից ունենք «աղաւթ» (> աշոթ), ամաշ- արմատից՝ ամաւթ (> ամօթ), *ձանաչ- արմատից՝ ձանաւթ (> ձանօթ), արած- արմատից՝ արաւտ (> արօտ), դժած-իմ (<«վրան գցել») արմատից՝ գաւտի (> գօտի)*..., այստեղ ամենուրեք տեղի յեւ ունեցել աֆֆրիկատների (չ, ծ) վերածումը կամ պարզեցումը (<«գեղասահբելացիա», սիրիանտի կորուսում>) նոր պարզ բազադրիչ մասի (թ, տ): Համեմատիք բարդացման—պարզեցման տեսակետից նաև՝ տատանել (< տանտանել «գես ու գեն» տանել)**, վոր բարդանում ե, աֆֆրիկատիզացիայի (այն ե՝ ասսիբիլացիայի) յենթարկվելով՝ գառնում ե ծածանել և պարզեցման յենթարկվելով՝ սասանել. այդպես և թորել > սորել > սորել թեքել > ծեքել, զաղիր > ձանձիր և այլն և այլն, վորպիսի յերկույթը ձևաբանական ե, այն ե՝ նոր բառեր սուելելու հնագույն միջոցն ե: Համեմատիք ոռւսաց ՎԻՃ—ՎԻՃ—ՎԻՃ-, լիներեն թե՛ք > թե՛ք > ժե՛ք (այժմյան հնչումն ե), գերմանական թի բարդությունը սոսկ „ը“ բազաձայնից (camp «գալա» > կամփ, pfliug < „պլուց“ և այլն...): Մինք արդեն յուր տեղում ասել ենք ուժեղ բազաձայնի (consonne géminée) վերածվելը՝ յերկուսի, ինչպես համարել > համմարել > համբարել վրաց XX > ց և այլն: Այդպես և և հրեական մանաբառի վերածվելը մեր մանանա ձևի (տեսական մի «նու» բազաձայնը յերկվանում ե):

Միացման (պարզեցման) լավ որինակներ ունենք ոռւսաց նամеноսեց > նամеноսեց ձևի վերածման մեջ, ուր յերկու հոնովանկերը միաձուլվում են: Այդպես և միներալոգիա > միներալոգիա, բլիզոզօր ։ > *բլիզօրոկ, վորը ժողովրդական իմաստավորմամբ դառնում ե բլիզօրոկ (կապակցելով րուկա «ձեռք»

*) Այս բացառություններն առաջին անգամ „W“ սոնանափ միջամտության կնդրով (իրու «հնեաբանություն») տվել ենք մենք մեր «Մի բանի հնեաբանական մնացուդներ հայերենում» հոդվածում, տաղված Գիտ. և Արվեստ. տեղեկ. № 4

**) Մաքուր ուր հատն ե տան (tan-), վոր հին ե և կա վրացերենում, ուրարտերենում և խուրի (միտաննի) լեզում (տես իմ „Общие элементы урартского и хеттского языков“ (Երևան, 1936, եջ 27 և 57¹):

բառի հետ, յերբ կարճատեսները գիրքը և այլ իրերը ձեռքով մոտեցնում են աշքերին): Հայերենից որինակներ, աշխարհա-հայացք > աշխարհայացք, հասարակակարգ > հասարակարգ (գեռ սա պարտադրի կերպով չի ձևավորվել), Յուլակակերտ > Յուլակերտ, տավարարած > տավարած: Սերբերենում՝ ճրեմеноша > ճրեմеноша:

12.

Մինչև հիմա բերած հնչյունափոխական որինաչփությունները իրենց այդ փոփոխման դրդապատճառները ունենում են կամ միենույն բառի մեջ (շեշտ, դիրք, ասսիմիլացիա...) կամ դրանից գուրս՝ հարեան կամ այլկերպ զուգորդված բառի ազգեցությամբ (<«անալոգիա» և «ժողովրդական իմաստավորում»): Ենք այդ բոլորը հեշտությամբ բացատրվում ե կամ ֆիզիոլոգիական—հնչյունաբանական տվյալներով, կամ հոգեբանական և կամ յերկուսի ել միջնորդությամբ, իսկ բառերի այլկերպ փոփոխվելը (բացի շեշտի և ասսիմիլացիա-դիսսիմիլացիայի ներգործությունից) ընդհանրապես սահմանափակ ե:

Բայց կա և մի այլ տեսակը հնչյունափոխության, վորը շատ ընդարձակ տարածում ունի, փոփոխման դրսեվորման համար պահանջում ե ավելի յերկար ժամանակ. և յեթե այլ արգելք չի ծառանում, ապա այդ յերկույթը պիտի ընդգրկի բոլոր բառերը, այսպես ասած «պարտադրի եքսպանսիա» ունի բոլոր գելքերի նկատմամբ, յեթե ինարկե գրանց պայմանները չեն փոփոխված: Վերջապես այդ որինաչփությունը միշտ չեր ել կարող գործել („andere Lautgesetze“):

Այս որինաչփությունը ձիշտ կինսի կոչելով Բուդուեն գը-կուրտանեյին, ընդհանուր պատմական հնչյունափոխություն: Հնչյունը, հետևապես, փոխվում ե բառի ամեն գիրքում և իրեն մեջ, յուր արտիկուլացիայի փոփոխման ներքին պատճառով, ինքնորեն, վորոց չափով «սպրնտան» կերպով: Սակայն յուր պատմական տարածման մեջ բացարձակ չե և յուր ընդհանուր պարտադրի և հանրընկալ տեսնենցի մեջ այդ որինաչփությունը կախվածության մեջ ե լինում: Բացատրենք որինակներով:

Հայերը իրենց գրավոր լեզվի առաջին դարաշրջաններում, ինչպես և գրանից առաջ, իրենց «ո» տառը հնչել են «օ» (ինչպես այժմյան ուղղագրության մեջ), ինչպես որդի, ոտն, հոգի,

խոտ, այս և այլն*, բայց հետագայում, թերեւ VIII—IX դարից սկըսած, այդ «ո» հնչյունի արտարերման մեջ սկսում և աստիճանաշկան և մի ուղղությամբ փոփոխություն, այն ե՛ դրան սկսում ե նախորդել յերկրթնային (և ապա շրմնատամնային) սոնանտա, վոր մոտ եր մեր «ու» ձայնավորին, բայց շրմունքների ավելի նեղ բացվածքով, իսկ իրեն «ո»-յի արտիկուլացիան յետնաւեղվային միջին բարձրությունից դառնում ե յետնալեզվային ստորին բարձրության, ունենալով թույլ շրմնայնացում: Այդպես որդի >ուրդի, ոտն > ուտն, հոգի > հուտնի և այլն, իսկ ավելի հետագայում բառասկզբի ուն > վո՞, այսինքն՝ վո՞րդի, վո՞տն..., իսկ հուտնի > հուտնի > հֆո՞րդի (պրոգրեսսիվ ասախմիւլացիա՝ խուլ «հ»-ն ձայնեղ «վ»-ին դարձնում է խուլ Փ), վորը մնացել և այժմյան բարբառներում Ինօկ'ի, Ինօրէ՛, Ինօշ...), չի անցել գրական լեզվի արտասանության: այս մասնավոր կետում գրականը վերցրեց գրաբարյան արտասանությունը (հոգի, խոտ...), այնինչ ժողովուրդը ամեն գեպքում, թե բառասկզբում, թե բառամիջում և թե վերջում այդ հին «ո»-ն դարձրել ե «ու» (բառամիջում և վերջ) և վո՞ (բառասկզբում), ինչպես վո՞րթի (վուռթի), խուտն, այուն (վանեցոց մոտ) և այլն և այլն:

Բայց արդյո՞ք այս ընդհանուր պատմական հնչյունափոխությունը բացարձակ և անվերջ: Դիմենք մեր բարբառներին, վորոնք որգանապես դեռ շարունակում են իրենց իրմանենու այս զարգացումը (առանց գրային լեզվի ուժեղ ազդեցության): Մենք այդտեղ կտեսնենք, վոր դեռ ասում են ոսկի (օսկի), ոտվի—ոտվներ, ոքմին, որթունք (թերեւս գրաբարից փոխառյալ), ոչով, որըշի (=«ի զուր» Աշտարակում) և այլն, իսկ արարատյան բարբառում (Աշտ., Օշտկ...) այդ հին «ո» (=օ) հնչյունը նաև բառամիջ «վ»-ից առաջ չի դարձել դեռ ուն, այլ հնչում են օ. որինակ, ծով, ով, հով (վորն յեթե ուռ ստանար, կդառնար Փ վ), կով, բռով, լացով...: Նման խոչընդոտս հանդիսացել ե, ըստ իս, յերկու հարեան վանկերի «ո» հնչյուների փոխադարձ ասսիմիլատիվ և պահպանողական ազդեցությունը, վոր թույլ չի տվել այդ սկզբի «ո»-յին դառնալ «վ»», ինչպես ոլորել (=օլորել), ողորմի, ոչով (=վոչ վոք), բայց առանձին հին «ոչ»-ը դարձել ե վոչ կամ վոնչ: Այդ նույնը

* Այդպես են տառապարձել և ոտար բառերը, ինչպես որթողոքս (=հուն, օրո՛ծօչօչօ), ոլիմպիադ = հուն. Օլորուա՛ս (=օ՛ծօչօ), ստիկան = պահլավերեն օտիկան, ոռ = հուն. Պօրօչ, որբ = լատ. orbis և այլն:

կարելի յե ասել և հին «Ե» տառի մասին (մեր այբուբենի հինգերորդ տառը՝ ե, «յեչ»), վորը հնչվել ե ինչպես այժմյան մեր նոր ուղղագրության մեջ և ընդունված (=ոռւսաց թ): Այդ հնչումը յեզել ե թե բառասկզբում (երթար ես, երկու, երկար...) և թե բառամիջում (բերել, գետ, տեսնել, բերան...), բայց հետագայում, թերեւս ելի նույն VIII—IX դարերից սկսած, այդ հին Ե (Յնչյունը ստանում ե սկզբից բաղաձայն «յ» սոնանտը («կիսաձայնը»), այսինքն, միջազգային տերմինով ասած, յենթարկվում ե յոտիզայիայի (Յոտիրովա-յի). և ստանում ենք բարբառներում՝ յես, յերկար, յերգ և այլն, բայց և բյերըմ եմ, կյեր և այլն, թեպետ այդ պրոցեսը գեռ չի ավարտել և շատ աել գեռ ասում ենք եկը գալիս ա, եկըմ եմ, երկու, եթալ ելն, մանավանդ երեվար, երես (փոխադարձ ասսիմիլացիայով, նման ոլորել ողորմի): Վոր այս յերկու որինաչափությունների մեջ վոչինչ սպեցիֆիկ հայկական չկա, այդ յերեւում ե և ուրիշ լեզուներից, վորտեղ նույնպես տեսնում ենք ո > վո, ե > յե (ի գեպ և այս վերջինից միայն բառասկզբի «յե»-ով գեպքերն ե ընդգրկել մեր գրական լեզուն): Հմմտ. իսպանացոց Piedro (Պետրոս), քւերտաւա (լատ. porta nova «նոր դռւու») և այլն:

Այսպես, որինակ, նաև վրացիք առաջ ասում ելին օրի «յերկու», օրէxi («ոթխի») «չորս», իսկ հիմա ասում են ուորի (վորի) և ուոթխի (վոթխի), ինչպես ոռուսաց գյուղերում գեռ ասում են ՅՈՏՐՅԱՅ (սուուր) գրական օստրի բառի գիմաց (ՅՕՏՐՅԱՅ և ՕՅՄՅԱՅ հին ձեկց): Ուկրայներենում ՅՈԼ (յեկ) վորպես բարբառացին ձեվ հնչում են ՅՈՒՅՈՒ: Իսկ յոտիզայիայի լավագույն որինակը տալիս ե հենց նույն ոռուերենը, ուր հին եда, եխատ, եստ և այլն այժմ հնչվում են յետա, յեխատ, յեստ և այլն (սկզբի «Յ»=հավասար ե մեր «յ»-ին և ձայնեղ ե)**:

Հայերենում կմատնանշեյինք նաև ձայնեղ բաղաձայնների (բ, դ, գ, չ, ձ) պատմական փոփոխությունը, վորն ընդգրկում է բառի ամեն գիրքը, տարբերվելով ըստ աստիճանի և ժամանակի: Նկատվում է գրանց վերածվելը ասպիրատների (բ՛, դ՛, գ՛, չ՛, ձ՛, կամ խուլ՝ փ, թ, ք, չ, ց, ց) նայած որինաչափության զարգացման:

* Այդ չպիտի շփոթել մեր այբուբենի յոթերորդ տառի հետ (Ե), վորն առաջնալեզվային միջին բարձրության ե, ինչպես ԵԵ, բայց ավելի նեղ և փակ, թերեւս լեզվի կծկվածությամբ հանդերձ:

** Ուուսերենում չկա ձայնեղ «յ» գրության նշան և ակամայից «Յ» տառն ենք գործածում:

Այն բարբառներում, ուր ձայնավորով սկսվող բառասկզբում առաջ ե գալիս մի նոր հավելյալ «ձայնեղ ի» (ձայնեղ հագագ), նման՝ ‘արի’, ‘ուս’, ‘ամեն և այն’, այդ բարբառներում բառասկզբի բ, դ, չ, ձ բաղաձայները վեր են ածվել ձայնեղ ասպիրատ թ՛, դ՛, գ՛, չ՛, ձ՛, ձ՛ հնչյունների, ուր վերջիններիս յերկրորդ բաղազրիչ մասն ե ձայնեղ սպիրանտ ի կամ՝ ‘նշանով’ գրած. իսկ բառամիշում այդ նախկին թ, դ, գ, չ, ձ ձայնեղները վեր են ածվել խոռվածքիրանների (փ, թ, ք, չ, ց), ինչպես մարդ>մարթ, վարդ>վարթ, խարել>խափել, գուր>գ ‘ուփ, թագաւոր>թաքավոր, արջ>‘առչ, օձ>ոց և այլն: Այստեղ, բառամիշում, մի արգելառիթ հանգամանք ե միայն այդ յերկույթի տարածման առաջը բանում, այդ այն ժամանակն ե, յերբ այդ թ, դ, գ, չ, ձ գալիս են «ն» սոնանակից հետո, ինչպես «հինգ» մնում ե անփոփոխ (այդպես և դանձ, բանջար...), թեպետ արարատյան բարբառում հին «ցնդել» հնչվում ե «ցնթել» («թ»-ով, ըստ որենքի):

Հայերն ընդհանրապես նախահայկական («հնդեվրոպական») *bh, *dh, *gh վեր են ածել b, d, g, (թ, դ, գ), նախահայկական *b, *d, *g վեր են ածել p, t, k (պ, տ, կ), իսկ նախահայկական *p, *t, *k խոռվերը վեր են ածել *ph>h, th, kh (=հայոց հ, թ, ք) ասպիրացիայի միջոցով: Լեզվաբանները հակված են այս յերկույթը բացատրել նրանով, փոր հնդեվրոպական նախահայերը պայթականները որդանների թույլ հպումով եյին արտասանում (implosio-n թույլ եր), և այդ հնշուռթյամբ տեղի եր տալիս փոփոխման (ասպիրացիայի և այլն): Սակայն սա ավելի քան պրոբլեմատիկ ե, իսկ որինաչափությունը հազարավոր տարիներ չեր կառող հարատեել:

Պարսկերենից (և այլուստ) վերցրած հին բառերի b, d, g բաշղաձայններն ևս յենթարկվում են այդ որենքին: Որինակ, բազուկ >թ’ազուկ, բաժին >թ’աժին (բաժանել >թ’աժանել), բամբակ >թ’ամբակ, բանդ >թ’անդ, գունդ >թ’ունդ, գրաւ >թ’ըրավ, գանձ >թ’անձ, գաշտ >թ’աշտ և այլն և այն, բայց հետագա փոխասությունները պահում են իրենց թ, դ, գ ձայնեղ հնչումները (և վոչ թե թ՛, դ՛, գ՛ կամ փ, թ, ք), ինչպես—ջան, դուքսն, ջեջիմ, ջընճնամ և այլն*:

* Կա և առանձին հանգամանք, յերբ հին թ, դ, գ, չ, ձ կարսկ են այդպես, ել հնչել ինչպես գափառական բոթել (բայց թ’ոթել, եթ հնչյունով), բատրել, բնդել և այլն:

Մեր բարբառներում հին ալ յերկայնը (բաղաձայնից առաջ հանդամանքով) հետագայում դառնում ե վորոշ տեղ է (ե), իսկ վորոշ տեղերում՝ ա (մայր>մէր կամ մար, այս>էս կամ աս են): Այս ինարկե ընդհանուր պատմական որինաչափություն ե, վորը բացատրվում ե թե ընդհանրապես հին յերկայնավորների (դիֆառոնդների) անհետացմամբ բարբառներում և թե այդ այ հնչման ներքին փոփոխության մեջ: Այնտեղ, ուր ավելի կրնսերվացիայի յե յենթարկված յեղել «յ»-ն, իբրև հոգեփիպոլոգիական ուժեղ մոմենտ, այդ բարբառներում «այ» դառնում ե «եյ» և հետո՝ է (ե), ուր հաղթում ե «յ»-ն (յոտայի աղղեցությունը և հետո՝ ինքն ել ձուլում). այդտեղ «ա»-ն հարմարվում ե, ասսիմիլացիայի յե յենթարկվում ըստ տեղի (լեզվի յետին մասից փոխադրվելով առաջին մասը), այն ե, այդ «ա»-ն դառնում «ե», մոտենալով «յ»-ին և հետո միասնանալով մի հնչյունի մեջ (այ>եյ>ե): Իսկ այնտեղ, ուր իշխել ե այդ այ զիփառնդի առաջին մոմենտը («ա» տարրը), այդտեղ յերկրորդ «յ» տարրը, վոր շատ թույլ ել ե հնչվել (և հատկապես այդ տիպի բարբառներում), սկսել ե անհետանալ և զիփառնդը վեր ե ածվել պարզ «ա»-յի, ինչպես արկմտահայկական շատ բարբառներում (աս, ասիկա, մար, ձան, հար...):

Գրական լեզվի տարածման և աղղեցության հետևանքով այժմյան վերոհիշյալ բարբառային bherel, dhanak... կամ խօտ^t խօցի... կամ հեր, ունի... (hat, mar..) և այլն և այլն ձևերը վե սարի ին վոչ թե փոխակերպվում) նոր գրական արտասանությամբ: Մինչեւ իսկ բառամիշ հաճախ կարելի յե լսել «նուրբը» («ք» հնչմամբ և վոչ «փ»), «ընդհանուր» (հնչվում ե ընդանուր և վոչ ընթանուր, ինչպես սովորականն ե) և նման այլ գեղքեր:

Ինչպես տեսանք, ընդհանուր հնչյունափոխության այս ուրինաչափությունը* պայմանավորվում ե հնչյունի սեփական արտիկուլացիայի փոփոխման մեջ առաջ յեկած ինչշինչ պատճառներով (անմիջապես՝ ֆիզիկո-ֆիզիոլոգիական թե հոգեկան), ունի ընդհանուր տեսնդենց իրականացման համար և անխորտակելի

* Որուսերենում մատնանշենք այդպիսի փոփոխության հետեւալ դեպքեր. հին «մեծ յուս» և «փոքր յուս» տառերը (վորոնց հնչյունն եր օ և ը, անդային օ և ը) հետագայում դառնում են յ (յօ) և յա (յա), ինչպես զյու, դյու, չիտայութիւ, սահմանական մեջ: Համեմատիր թերես իբրև այդպիսի պատմական որինաչափություն հին և ձայնավորի վեր ածվելը օ (օ)-յի շեշտի տակ—զեմլյա բայց շերնօզեմ, անդրա-վեճրա. ուր դեր եր խաղում հետեւալ վանկի «փափուկ» կամ «կոշտ» ձայնավորի զիբքը:

ձգտում, յեթե իհարկե խոչընդուռի չի հանդիպում այդ բարբառի կամ լեզվի արտաքին «լեզվական հարաբերությունների» կողմից, իսկ բուն լեզվում (բարբառում), այլ և այլ փոնետիկական յերևոյթների միջամբուխ լինելուց (անալոգիայի ազդեցություն, փոխառություն և այլն):

* * *

Հնչյունական փոփոխությունների իրականացման տեմպի մեջ զգացվում է կամ անմիջականություն կամ տևական աննկատելի պրոցես: Յեթե իրականացման ժամանակի տեսակետից վորոշ հնչյունափոխական յերևոյթների մեջ (շեշտի ազդեցություն, ասսիմիլացիա-դիֆանիմիլացիա...) այդ փոփոխությունների «հասարակագիտական», ինչպես մասամբ և Փիզիոլոգիական վլրական մեջ յերբեմն պարզ չի լինում, —խոսքս հատկապես վերաբերում ե «ընդհանուր պատմական հնչյունափոխության, —ապա այդ պիտի բացատրել նրանով, վոր տվյալ լեզվում, յուր պատմահասարակական զարգացման սպեցիֆիկայի պայմաններում, հընչյունի անընդհատ և ականջով անընդհանության հարատես փոփոխվածությունը, նրա քանակական (վոչ Փիզիոլոգիական առումով) առի հետեւանքը կամ չի տվել այդ հնչյունի Փիզիոլոգիական-հոգեկան և հասարակական-լեզվական նոր վորակ, կամ յեթե Փիզիոլոգիական-հոգեկան տեսակետից տվել ե, ապա լեզվահասարակայնորեն, իբրև պատմականորեն անհրաժեշտ յուրացված կատեգորիա, այդ վորակը դեռ չկա: Խոսենք որինակներով: Հայոց հին «ո»-ն (= յեփրոպական օ հնչյումը) աստիճանական փոփոխումներով սկզբից ստանում ե շրթունքների ավելի մոտ հպում, դառնալով հետաքյայում «ՈՒԾ», բայց սա դեռ բավական չեր լեզվի պարտագիր նոր գործոնը համարվելու: Կարող եր պատահել վոր միևնույն լեզվում կամ նրա բարբառում յերկու մոտավոր հնչյուններն ել գործածվելին (խոտ և խուռա, որդի և ուռդի...), ինչպես տեսնում ենք խեթերենում, ուր ձայնել և խուլ պայմանական լեզվի միենալոյն շրջանում համահավասար գործածություն ունելին (karp- || garb- «գերփել», tagn(a)- || dagn(a)—«յատակ» և այլն և այլն). բայց ինչպես տեսնում ենք, յեթե բևեռագիր դրա գրությունը մեզ չի խարում, այդ փոխանցումը անցման շրջանումն ե գտնվելիս յեղեւ չի ստացել հասարակայնորեն գիտակցված վլրակ. կար հնչյունների այդ Փիզիոլոգիական տարրորոշ (t և d, k և g, p և g) ձևերը, բայց չկար լեզվի պատմահա-

սարակայնորեն գիտակցության և յուրացման մեջ մի պարտագիր ըմբռնում, ձևավորված մի տիպ, մի փիզիոլոգիական-հոգեկան, բայց և հասարակական-լեզվական ժողովական ժողովապետական նույն շփոթությունն եր տիրում գրաբարում, յերբ հին «ը» հնչյունը «ն» բաղաձայնից առաջ դառնում եր «ո» (*dhuր-ո > դուռն, բայց գըրան, գըրունք..., *ար—«անել» > առնեն, բայց արարի...)*, և յերբ հարեան «ն» բաղաձայնից առաջ (նրա ազդեցությամբ) Փիզիոլոգիական փոխված նոր «ո» բաղաձայնը համագոյակից եր նաևկին «ը»-ին: Սակայն հետագայում ուղղականի «ո»-ն վանում և թեք հոլովերի նաևկին «ը»-ն, և այժմ ասում ենք՝ ամառ դուր լեռ... իբրև միակ հնարավոր հնչյունը և պարտադիրը բոլոր հոլովերի համար ել (գուան, ամառվա...)*:

Առաջին անգամ, վորքան մեզ հայտնի յե, հնչյունի քանակական աճման հետ նրա նոր փիզիոլոգիական վորակ մատնանշողը յեղեւ և պրոֆ. Բողուեն դը-կուրուենեն, սակայն այս միայն հնչյունի «ներքին» (արտիկուլացիոն, Փիզիոլոգիական-արտաբերական) կողմն ե, ինչպես ցույց տվինք: Ավելի կարևոր ե հնչյունի «արտաքին» կողմը, նրա հասարակական արժեքավորումը. վորովհետեւ յեթե данի, դու... և դենի, դ'նյա և նմանների «Ճ» բաղաձայնը Փիզիոլոգիական տարրերություն ունի (յերկրորդները— դենի, դնյա... պալատալիզացիայի յենթարկված), սակայն ընդհանուր լեզվական կամ լեզվի ընդհանուր ըմբռնման տեսակետից այլուել գեռ նոր վորակ չի ստացվել (բայց յեներենում, որինակ, այդ ստացվել ե, յերբ պարտադիր և «ՃԶԵՆԻ» և նմանները նոր «ՃՅ»-ով):

Յերբեմն պատահում ե, վոր հնչյունի Փիզիոլոգիական մոմենտների փոխանցումներն եւ աննկատելի յեն, և կարծես թե հանկարծակի կամ անմիջապես և կատարվում այդ փոխանցման թուիչքը, ինչպես ասենք $p > k$, $g > b$ և նմանները (համեմատիք մեր բարբառների պատոր > կտտոր, պորինչան > կորինչան..., կամ վոզնի > կոզնի, վոստո > կոստո...): Բայց այս յերեսույթի կամ ներքին Փիզիոլոգիական մոմենտները մեզ անընթանելի յեն կամ դրա հանկարծակի փոխանցման ներքին (իմմանենտ) հոգեկան կողմը տեսական պատրաստության հող պետք ե ունեցած

* Այդպես ե և մեր այժմյան «Ճ» բաղաձայնի պատմական իրականացման խնդիրը «կարելի յե», սա յելք, «եյտական» և նման գրությունների մեջ: Այդպես յատայի փիզիոլոգիական գոյացությունը շատ ու շատ թույլ ե (30 տոկոս թերեւ) և հասարակայնորեն վոչ պարտադիր և յուրացված (կարելի յե այդ գեղագերում և «Ճ» չհնչել): Մեր սխալ ուղղագրությունը նպաստում ե դրա եացմանը:

Աներ: Այս «անմիջական» կամ հակադիր որդանների հնչյունների (առաջնալեղվային \geq յետնալեղվային) փոխանցումը շատ ուժու լեզվաբաններ կոչում են «перебой», վորը, սակայն, այժմ չի ընդունվում, վորպես մի «առանձին» հնչյունափոխական յերևույթ, և կարիք ել չկա առանձնացնելու:

Նմանապես անընդունելի հնչյունափոխական տերմիններ են «անկում» (падение)—«բարձրացում» (подъем), վոր դործ են տծում վորմանք (որինակ Մառը): Հնչյունի ֆիզիոլոգիայի մեջ կան վորակական փոխանցումներ ($\omega > \delta > u$, $\eta > \delta > q \dots$), բայց վոչ անկումներ—բարձրացումներ և այլն:

Վորոշ առումով ընդունելի յե «ալտերնացիա» (чредование) տերմինը, յերբ հին կամ ավելի ճիշտ սկզբնական հնչյունը տեղի յե տալիս նորանոր փոխակերպումների, իբրև համագոյակից, լեզվի արսենալի մեջ միասնապես հանդես յեկող հնչյունների, ինչպես ուռաց $\kappa > \chi$ կամ χ (ЛИЦ—ЛИЦ-О, ЛИЧ-НЯЙ), $\Gamma > \text{Ж}$, Յ, (друг—друзья, другъба) և այլն, և յերբ նախնական և հետագա փոխակերպումների հաջորդականությունը դժվար է հաստատվում, որինակ, ուռաց բեր—(бери) || бор—(сбор) || бр—(брать) || бир—(собирать) և նմանները: Հնդեվրոպական լեզուներում սիրելի յեր է || օ || —(zero) յերբեակ ալտերնացիան:

Հնդհանրապես ընդունված է գործածել հնչյունի փոփոխություն, հնչյունական փոփոխություն կամ հնչյունափոխություն տերմինը, թեպետ գերմանացի գիտնականները ունեյին «հնչյունի փոփոխություն» (Lautwandel) և «հնչյունի փոխարիւնում» (Lautwechsel) տարրեր տերմինները*:

Ի վերջո, ընդհանրապես պիտի ասել վոր լեզվի հնչյունական փոփոխությունները միշտ պարզ ու մեկին չեն լինում, վոր մեծ մասամբ յուրաքանչյուր բառապատճերի հնչյունական փո-

* Այդ կարծիքին եւ և Ա. Տոմսոնը, վորն ասում է (տես նրա Общее языковедение, էջ 245—246). «Нужно строго различать между изменением звука (Lautwandel) и заменой звука (Lautwechsel)... Однако те и другие называются звуковыми изменениями языка или изменениями языка в звуковом отношении. Но замену звука не следует называть изменением звука, как нередко делают. Изменение звука происходит исключительно фонетическим путем, между тем как замена звука может произойти и при содействии значений, напр. вследствие „новообразования по аналогии“, „народной этимологии“ и пр[13].

փոխումն անգամ բարդ է, հաճախ լիչ դված բազմապիսի և բազմաքանակ յերեւություններով: Ել չենք խոսում «Ընդհանուր հնչյունափոխության» մեջ ի հայտ յեկող հնչյունի արտիկուլացիոն ներքին ունակությունների փոփոխման դրդապատճառների մասին, վոր այնքան կարծիքներ և հարուցել:

Հնչյունական փոփոխությունների ուսումնասիրության խընդուում միշտ պիտի լինել կոնկրետ, վերցնելով տվյալ լեզվի բառուր կրողների ճիշտ պատմականության մեջ, ըստ կոնկրետ պայմանների և դարձարձանների՝ իրենց հասարակական լեզվահարաբերությունների ճշգրիտ ըմբռնումով: Որինակ, վերցնենք մեր ժողովրդական «ախսպեր» բառաձեր յուր հնչյունական այժմյան այդ դրությամբ: Վոչ մի կատած, վոր այդ բառը պիտի կապակցել՝ համեմատելով ելի հայկական և բարբառային «եղբայր» հին բառի հետ, վորը հնչվել ե Եթայր (լ կոշտ և հնչյուն ե): Այստեղ ակամայից աչքի յե զարնվում սկզբի «ե» և «ա» ձայնափորների հակադրությունը, վորն անշուշտ տարրեր բարբառախմբերի ներդրումն ե (համեմատիր—Արաքս || Երասի, արագ || երագ, աղտիւր || եղտիւր, աղինջ || եղիճ, արաստոյ || երաստոյ, արագազ || երագազ և այլն): Իսկ այդ «ա» կամ «ե» ձայնափորների նախադիր («պրոթետիկ») լինելու տարրերացումը անշուշտ կախված է յեղել նաև այդ բարբառների պատմական կազմավորության տարրեր եթնացեղային ֆերմենտների կամ սուբստրատների հետ, վորն այժմ և դժվար է ճիշտ պարզել*: Այդ «ա» կամ «ե» հավելումը պարտադիր կերպով ծառացել ե հայերի համար, քանի վոր նրանք այդ ժամանակ (և հիմա) յուրացրած ունեյին այն ազգային յուրորդնակությունը, վոր այլևս չեյին կարողանում բառասկիզբը յերկու բաղաձայնով հնչել յերբ մասնավանդ գա սկավում եր ը (ո) կամ դ (=կոշտ լ) բաղաձայնով: Մնում ե մինչ այդ ստացած «զբայր» բառամասը, վորն ավելի հին ժամանակ յեղել և պարզ «լբայր», ուր «լբ» մասը հայերին հատուկ «բաղաձայն + ը (կամ լ)» $>$ «ը (լ)+ բաղաձ.» յետևառաջության (մետաթեղիսի) պատճառով ստացվել ե «բլ» սկզբնականից, նման (ա)-զբեւր $<$ բբեւր = հուն. փրե(ւ)ար, քրէար (նույն իմաստով): Հաստատ կարելի յե ասել, վոր նախնականեր առանձին:

* Հավանորեն բառի «ա» նախազրությամբ (հավելմամբ) պիտի կազմեյին Հայաստանի հյուսիս-արեւելյան մարդերը: Այս մասին մենք կունենանք խոսել առանձին:

կան *բլայր բառը դիսախմիլացիայի արդյունք ե ավելի համելին *բրայր (*brayr) ձեի, վորը յուր «բ» (<bh>) և «այ» (<atr>) մասերով պատմական փոփոխությունն ե հնագույն բհրատ(e)r բառի: Դիսախմիլացիան կարող եր լինել և մետաթերզից յետո, այսինքն՝ brayr > rbayr > lbayr, վորի ճշգրտման համար տվյալ դեռ չկա. Բայց դա կարեոր չե մեր այս պատմական վերլուծման համար, քանի վոր յերկրորդական նշանակություն ունի: Կարեորն ե մետաթերզի և դիսախմիլացիայի ֆակտորությունը, վորոնք ի հայտ են յեկել այս բառի մեջ: Իսկ ինչ ե կատարվել «աղբայր» բառաձեկի հետ հետագայում: Նախ «բ»-ն բառամիջում դարձել ե «փ» (ինչպես՝ խարել > խափել, գուրե > գուփի և այլն), և ստացվել ե «աղփայր». Խուլ «փ»-ն աղդելով ձայնեղ «դ»-ի վրա դարձրել ե նըան խուլ «խ», և ստացվում ե «ախփայր», ուր սակայն «փ» ասպիրատի «հ» մոմենտը լինելով «խ»-ի մեջ, կանվում ե վերջինիս կողմից և «փ»-ն դառնում ե պարզ «պ»: Այս պրոցեսի հետ զուգահեռ տեղի յե ունեցել ընդհանուր պատմական փոփոխություն այշէ (ե), վորի մասին մենք ասել ենք: Հետևապես հընագույն բհրատէր բառի վերածվելը երաց (>rbayr) > blayr > lbayr միջողակով «աղբայր» (|| ե-ղբայր) հինգերորդ դարի արտասանության մեջ տալիս ե մի շարք «որինաչափություններ»—աղդային արտիկուլացիոն «բազա», դիսախմիլացիա, մետաթերզի, պատմական հնչյունափոխություն, ասսիմիլացիադիսախմիլացիա...*:

Այս որինակի վրա մենք տեսնում ենք, թե համախ վորքան բարդ և ներխմճողված ելինում մի բառի պատմական զարգացումը յուր հնչյունական արտաքինի մեջ անգամ: Այսպես են, իհարկե, և իեղի մյուս «իրակությունները» (ֆակտուրան): Յեթե «աղբայր» կամ նման բառերի պատմական զարգացման այս ետապները և

* Այս բոլորից յետո, վորքան տարրինակ և հակագիտական ե յերեսմայն լեզվաբանների վերաբերմունքը, յերբ այժմյան հնչյունատեսքով բառերը, կարելի յե ասել ֆետիշացման և քարացման են յենթարկում, կարծես թե տասնյակ հազարավոր տարիներում հնչյունները վհչ փոխվել են, վհչ ավելացել կամ դուրս բնկել, վհչ իրենց գիրքերն են փոխել և այլն և այլն բոլորի, դրիմի, դիցի, Պոտափի և այլոց մեծությունը հենց նրանումն ե, վոր նրանք, ինչպես և Ենգելն ե մատնանշում «Անտիդուրինգինում», կանգնեցին լեզվի զարգացման պատմական հողի վրա: Ն. Մառը յուր ելեմենտներով, վիվիսեցիա կատարելով իրեն կողմից ֆետիշացրած այժմյան բառային հնչյունակոմպլեքսի մեջ, յետ ե զնում բուրժուական լեզվաբանության պրոդրեսսիվ ետապից անդամ:

հնչյունափոխական յերեսույթները մենք հեշտությամբ կարողացանք տալ յելնելով հնդեվրոպական կոչված բհրատ հին ձեից (մեր մյուս patronomica—աղփակցական տերմիններն են գերիշխող մասով հնդեվրոպական են*), ապա համեմատական այս մեթոդով այլ գեալքերում շատ հեռուն չենք կարող գնալ, չունենալով թե այլ տվյալներ համար և թե լեզվի հասարակական զարգացման կոնկրետ պատմական ըմբռնությունը, ուր չոր ու ցամաք կոմպարատիվիզմը հանգում ե փորմալիզմին:

Այս տեսակետից ավելորդ չենք համարում նորից անդրադառնալ «հնչյունափոխական որենքներին» (фонетический закон), յերբ գոյություն ունի այդ որենքների հարաբերական անընդհատության և գրսեվորման (գործոնականության) առկայությունը: Հիմնական յերեսույթը սկսվում ե հնչյունի իրեն մեջ փոփոխվելով, նրա արտիկուլացիայի այլ ձևակերպումով: Յեկ ֆոննետիկական որենք կամ որինաչափություն կկոչենք, յեթե հավաստենք և ձևակերպենք, վոր այսինչ հնչյունը յուր լեզվի վորոշ դարաշրջանում և պայմաններում ստացել ե տվյալ փոփոխվիճակը**: Ինչպես արգեն ասվել ե այդ «որենքները» (=որինաչափությունները) մշտնջենական չեն, և յեթե պայմաննավորված չեն տվյալ բառի արտաքին տեսքով, այլ ամեն բառի ել վերաբերվում են, այնուամենայնիվ երենց անհրաժեշտության մեջ գեմ կարող են առնել շատ ու շատ հակընթաց «պատահականությունների», ինչպիսիք են, մասնավորապես անալոգիայի (ձևաբանական ասսիմիլացիայի) աղդեցությունը, բառային հնչյուրության նոր պայմանները, փոխառությունը այլ լեզվից (կամ բարբառից) և այլն:

Աղգակից լեզուների համեմատական ուսումնասիրության մեջ ևս գոյություն ունի «հնչյունական որենք», վորը վոչ այլ ինչ ե, քան յեթե այդ լեզուների մեջ յեղած հնչյունական համապատասխանությունների (звуковые корреспонденции) վո-

* Բացի զրքանչ բառեց, վորը կովկասյան ե: Հնդեվրոպական են—բոյր, մայր, եղբայր, հայր, սկեսուր, գուստը (վորից՝ ուստը), տալ, տայգը, աներ...

** Ա. Մեյյեն հետեւյալ կերպով ե ասում, «Այն կանոնները, վորոնցով պահպառման հին արտիկուլացիաները և մուծվում նորերը կոչվում են ֆոնետիկական որենքներ» (տես նրա „Վведение в сравнительную грамм. индоевр. языков“, Юреев 1911, եջ 26):

ըոշ ձեւակերպումը՝ փորմուլիրովկան։ Այդպիսի «որենք» ե, որինակ, ֆրանսերեն և ձայնավորի համապատասխան լինելով լատինական շեշտավոր այլն, ինչպես լատ. pater («հայր»)՝ փր. թէր, լատ. amātum («սիրած»)՝ փր. aimé և այլն, կամ, որինակ, հուն. φίλος սանակը, եղ, գերմ. և հայկ. Ե և այլն (փը՛ր, սանս, բհարամ, գոթերեն baira, հայոց երեմ...):

Հնչյունափոխական այս լրտիանուր «որենքը», լինելով թե մի լեզվի տարբեր շրջանների նկատմամբ և կամ մի քանի լեզուների մեջ, ձեւակերպված և հանդես գալիս միայն հետագայում, իբրև եմպիրիկ մի դիտում մեր կողմից։ հետեւապես այդ «որենքը» նախապես չի կարող մեղ ասել թե ինչ կարող և լինել հետագայում այս ինչ պայմաններում։ «Որենք» տերմինը զուտ պայմանական ե, և վոչ ել հարմար, պահպում և լեզվաբանության պատմազարգացման տրադիցիայով և բնավ այն չե, ինչպես, որինակ, մի ֆիզիկայում կամ քիմիայում։ Հնդեվլուպական լեզուների համեմատական ֆոնետիկայի մի շարք հայտնաբերումներից հետո, յերբ Բոպպի, Գրիմմի և Պոտտի խիստ կարևոր աշխատությունների հետևանքով գեռ շատ բացեր ու անհետեղություններ եյին մնում, միայն 1875 թվին Վիլհելմ Շերերը, իսկ մանավանդ 1876 թվին Ավգուստ Լեսլիինը (ավելի վորոշ) ճիշտ ձեւակերպեցին «հնչյունական որենքը», վոր դրանք լսափնյան բացառություններ չեն հանդուրժում, ցորչափ այդ որենքների գործունեյությունը չի խախտվում այլ որենքների գործողությամբ։ Այդ «այլ որենքների» տակ, ինչպես տեսել ենք, հասկացվում եր հոգեկան ասսոցիացիան (անալոգիան), փոխառությունը և այլն։ Գործնականում յերեքն և դժվար և լինում ճշտիվ ձեւակերպել այդ «որենքը», քանի վոր դրա հանդեպ լինում են անբացատրելի այլ հանգամանքներ կամ յերեռութներ, մանավանդ վոր գոյություն չի ունենում ավյալ լեզվի պատմական գրափոր գործումնենտացիայի անընդհատությունը և այն պայմանների ըմբռնումը, վորոնք ազգել են այդ լեզվի հնչյունական կողմի փոփոխության վրա։

Ընդհանուր հնչյունափոխությունը, ինչպես գիտենք, կապված է հնչյունի արտիկուլացիան հանգամանքների փոփոխման հետ, պայմանավոր ված և անմիջապես իբրև ներքին ֆիզիոլոգիական փոփոխմամբ, և յեթե խոչընդունակ չի հանդիպում, ապա պատմական վորոշությունը տարածվում է բոլոր բառերի վրա, քանի վոր նա կոնկրետ բառական հանգամանքից չի

կախված, այլ իրենով ե պայմանավորված, իմմանենտ ե։ Բայց այստեղ ընդհանրապես հարց պիտի ծագի, թե ինչո՞ւ յե այդ հնչյունափոխությունը կատարվում, վորոնք են դրա հիմնական դրվագատճառները։

Կար տեսակետ, վոր ուսայի մեջ են կանխավ դրված այն տրամադրությունները, վորոնք նախորոք գծում են հնչյունափոխությունների լութացքը։ Այս տեսակետը իհարկեկան փոփոխությունների լութացքը։ Այս տեսակետը իհարկեկան քննադատության չի դիմանում և մերժվում ե բուրժուական լեզվաբանների կողմից անգամ (Wundt, de-Saussure և այլն):

Մեջ եյին բերում նաև բարեհնչունության կամ հեշտության սկզբունքը, վարով իբր թե ընդհանրապես կարող են պայմանավորված լինել հնչյունական փոփոխությունները։ Նախ «բարեհնչունությունը» շատ սուբյեկտիվ ըմբռնազություն և այն ել պայմանական, վորովհետև այն ինչ մի լեզվում գեղեցիկ և հեշտ ե (իբր թե), մի այլ լեզվի (կամ նույն լեզվի այլ շրջան) համար հակառակն ել լինում. մեր ծ, ճ.. կամ վրաց է, արաբական «այն» և այլն, շատ նորմալ են իրենց համար։ Հաճախ մեր սովորական «ա», «ե», «ո» և նմանները մեծ դժվարություն են հարուցում կուլառուրապես հետամնաց ցեղերի համար իրենց ներծծվող հնչյուններով անգամ։ Այն, ինչ վոր հայի համար (իսպաղություն, ճիճու...) հեշտ և գեղեցիկ ե, ուստի ժողովրդի համար անտառնելի յե (նրա համար «խաղաղությունը» — հնչական պատերազմ ե): Վերջապես բարեհնչունության հիպոտեզը նրանում և մեղանչում, վոր մարդ յուր ամենորյա կյանքում, յուր նորմալ պայմաններում գիտակցական վերաբերմունք չի ցույց տալիս հնչյունաբարտադրման և փոփոխման խնդրում։ Իսկ յե-

* Այդ ռեակցիոն տեսակետը պաշտպանողներն են յեղել ըստ Ա. Շորի հետեւալ լեզվաբանները—Lotze (Mikrokosmos, 1858), Merkel (Physiologie der menschlichen Stimme, 1867), Scherer (Zur Geschichte der deut. Sprache, 1868), Bentey (1876) յերիապարտ քերականներից—Osthoff (Das physiologische und das psychologische Moment der sprachlichen Formenbildung, 1879); Բոլորն ել ի նկատի յեն առել խոսելու մեր որդանի անտառմիական կառուցվածքի առանձնահատկությունները։ Խոսասանում այժմ նման տեսակետ անի Ս. Ռոզին (Օ զայկ. նշանությունների այլ արտահայտություն ե, յերբ հնչափոխությունները պայմանավորում են կենարունական ներփային սիստեմի հատկություններով, ինչպես տեսնում ենք Rousselot-ի մոտ («Etude sur le patois»)։ Առ Շորի այս ծանոթությունը մենք վերցրել ենք՝ Փ. դե-Սոսսյո, Կурс օճակ. լինգվիստիկ, ՕԳИЗ, 1933, եջ 243։

թե հեշտությունն են մատնանշում, ապա մարդ յուր սովորական խոսակցության ժամանակ գդվարություն չի կրում, իսկ պատմությունն ել մեզ վկայում են նաև հակառակը, այն եւ՝ պարզ և առաջնաբնակային հնչյունների հաճախակի բարդացումը կամ փոխարինումը յետնալիքվայիններով, վորոնց (բարդերի և յետնալիքվայինների) արտաքերումը ավելի եներգիս յեւ պահանջում։ Պակաս չեւ մեղանչում մարդքիզմի դեմ և ն. Մասի տեսակետը, թե բարդ (գիֆֆուլգոյիդ) հնչյունները նորաստաղիալ լեզուներում ստացվել և պահպել են հին ստաղիալ վիճակներից («հարեթական» և նախորդ ստաղիաներից), իբրև այդ նախորդ ստաղիաների հատկանշերից մեկը։ Այսուղ ել ֆետիզացում և արխայիշացիս յեւ կատարվում այդ հնչյունների նկատմամբ նրանով, վոր բարդերը վերագրվում են մի այն հին դարսաշրջանաներին (կամ ավելի ճիշտ «լեզվաշրջաններին») և վոր նրանք վորոշ տրանսֆորմացիայով (ձևափոխումով) անցնում են հետագա շրջաններին։ Հետեւապես գուրս եւ գալիս, վոր հետագա այդ լեզվաշրջանները (կամ լեզվափիճակները) կամ նոր բարդ հնչյուններ չեն առաջացնում, թեպես ունենք իտալացոցնոր յ, չ կամ լեզերի րուց, ճ > ճ (որինակ դեն > ձեն)։ Կամ մեր բարբառների ք'եռի > «չեռի», բարդ «չ»-յով, կամ յեթե ունեն եւ, ապա դրանք պիտի հնագույն շրջանի անփոփոխ մնացած ստեղծագործությունը լինեն և հետագայում չեյին կարող գոյանալ։ Բարդության վորակն ել մարդուս կիսակենդանական լեզվում այլ կարող եր մինել քանի հետագա ասպիրատները։ Բայց սրա հետ միասին չպիտի հարմար առաջանական ապագարատի աստիճանական հարմարվելը մեր հընչման, սրա բովի յետելից (կոկորդից) ավելի առաջ գալը՝ դեպի բերանային խոռոչի մեջը և սկիզբը, մեծ եներգիա պահանջող և

* И. Мещанинов-ը յուր „Проблема классификации языков в свете нового учения о языке“ (1935) գրքում տալով ն. Մասի տեսությունը ի միջաց անում ե. „Пережиточно сохраняющиеся нормы предшествующей стадии, выраженной в языках яфетических систем, должны прослеживаться и в следующем их уже „индо-европейском“ оформлении. Если мы с этой стороны подойдем к „индоевропейским“ языкам, то увидим, что сложных заднеязычных звуков в языках „ин.-евр.“ системы не сохранилось; правда, сложные звуки переднеязычного ряда имеются налицо, но все же в значительно меньшем количестве, чем в яфетических, например, русские „ц“ и „ч“ (Տես Եջ 58—59) [14] Պուրս եւ գալիս, վոր սուսաց Ա, Չ միայն ստաղիալ փոխանցումով են ստացվել նոր չեյին կարող մինել (կ—տ-ից)։

լիստ բարդ (նման աբխազականին) հնագույն («կիսակենդանական») գիֆֆուլգոյիդ հնչյունների փոխանցումը նոր վորակի թերարդ և թե պարզ հնչյունների։

Մատնանշում են նաև մարդուս ֆիզիկական շրջապատի և վերջերս նաև կուլտուրական պայմանների ազդեցությունը լեզվի հնչյունական կազմի, հետեւապես և փոփոխության վրա։ Այսուեղ գժվար ե լինում կոնկրետ կերպով մատնանշել այդ կատակցությունը։ Ըստ Վունդտի, լեզվի հնչյունական կողմի ֆոնետիկական փոփոխությունները հետեւանք են բարդ հոգեֆիզիկական ակտի, վորը առաջանում և պատճառների համակցությունից՝ կոմպլեկտացիայից։ Բայց զլամավոր տեղը նա ելի հատկացնում և ընդհանուր կուլտուրական պայմաններին։ Լեզվաբան Վ. Պորֆերինսկին այս առթիվ տալիս ե հետեւյալ ճիշտ առարկությունը և մեկնումը։ «Այդպիսում, յես կարծում եմ, վոր ընդհանրապես չի կարելի ժխտել մարդուս շրջապատող ֆիզիկական և կուլտուրական պայմանների ազդեցությունը ի միջի այլոց և լեզվի հընչյունական կողմի փոփոխության վրա, բայց անմիջապես դըրսելորել (օնարужիտ) այդ ազդեցությունը մենք տակավին ի վիճակի չենք, վորովհետեւ նա (=ազդեցությունը) շատ ինստանցիաների և միջնորդավորող աստիճանների միջոցով և անցնում, մինչև վոր անդրադանում և այս կամ այն կերպ ասու հոգեֆիզիկական պրոցեսների վրա, վորոնք վերաբերում են խոսքին» (տես Նրա „Введение в языкоковедение“, Москва, 1913. Եջ 141)։

Մատնանշգում և հնչյունական վիճակի և փոփոխության նկատմամբ նաև լեզվին նախորդող և նրա մեջ մերժած այլ լեզվական սուբստրատի գերը, այսինքն, յերբ այլալեզու (կամ այլաբարբառ) մի հասարակություն յուրացնում և մի նոր լեզու (կամ բարբառ), իսպանկելով նոր ժողովրդի հետ։ Ըստ Ա. Տոմսոնի, «գժվար ե ցույց տալ աշխարհագրական կամ եթնոգրաֆիական մի վայր, ուր յեղած չինի լեզուների կամ առնվազն բարբառների խառնում» (Общ. яз., 259) կամ թե «լեզուների խառնվելու ժամանակ ընդհանրապես միաժամանակ առաջանում

* Հնչյունական փոփոխությունների հարմարվելը հողին (=տեղին) և կլիմային (почва и климат) պաշտպանել են, որինակ, Lotze (Mikrokosmos, 1858), Osthoff (Das. phys. und psych. Moment, 1879), H. Meyer (Zeitschrift für d. Altertum, 45), Schrijnen (Einführung in das Studium, 1921)։ Բայց լեզվաբանների մեծ մասը այդ թեորիան համարում ե անապացուցելի (տես Ա. Շորի ծանոթ. ճիշտ, գրքում, Եջ 244)։

և հոծ թվով մարդկանց մեջ յերկրեղվություն... լեզուների խառնվելու հետևանքով կարող են ի հայտ գտն փոփոխվող լեզվի մեջ վոչ միայն այն հնչյունները, վոր կան փոփոխվող լեզվի մեջ, այլև միանգամայն նոր հնձյուններ...» (Էջ 260) կամ թե «լեզուների խառնվելով ե բացատրվում կելաերենի, հայերենի, անգլերենի և այլոց խիստ փոխվելը» (Էջ 261): Լեզվական խառնուրդ գոյացումը, վորպես հիմնական լեզվասուբաստրատ, հատկապես մատնանշվում է ոռմանական կոչվող (Փրանսարեն, իսպանարեն, պորտուգալերեն, իտալերեն, ոռմանարեն) լեզուների վերաբերյալ*, ուր կազմաբար միավորները յեզել են ժողովրդական լատիներենը մի կողմից (իրեն գլխավորը) և կելաերենը, իբրեւրենը, դակերենը և այլն՝ մյուս կողմից: Ըստ Ռ. Շորի (де Сос-սյօր, Կурс общ. линг. 245) „Теория субстрата, выдвинутая Асколи и другими романистами для об'яснения различий романских языков, пользуется широким признанием в лингвистике конца XIX—начала XX веков (Wundt, Paul, Windisch, Schuchardt, Meillet, Feist...) Теорией субстрата определяет и яфтидология до момента введения понятия стадиальности (1924 г.),—ср. Н. Марр, Яфет. Кавказ и третий этнич. элемент в созидании средиземноморской культуры“ [15]:

Ժիմել լեզվական սուբստրատի գերը ժողովրդների խառնվելու (Völkermischung) ժամանակ չի կարելի, քանի վոր գտ կարելի յե ապացուցել բազմաթիվ փաստերով: Բայց այդ ազգակը լինում է լեզվի գոյացման և ընթացքի սկզբնական շրջանում: Իսկ յետո, այլևս չի կարելի հնչյունափոխական կամ այլ լեզվական նոր յերեւլույթները բացատրել այդ գոյացման լեզվափորձատիվներով: Լեզուն դառնում է նոր սիստեմ, և նախկին որինաչափությունները մշտնշենական չեն: Այս նույնը պիտի ասել և ապագայում

* Տուժունը բերում է և հետեւալ որինակները. «Հատվիայում ապրող բնիկ գերմանացիների արտասանության մեջ կարելի յե լսել կոշտ (վերաբ) և, ինչպես W. A. d. բառի մեջ, վոր կա և լատիշերենում կովկասյան և, թ, թ, և այլ «ամսուր հարվածով» [հնչյունները] անցել են վրացերենից հայերենին, հարևան շրջաններում յեղած յերկլեզվության պատճառով, և տարածվել դեպի արեմուք... (Էջ 259—260) կամ թե «Պրուսսիայի գերմաներենի հնչյունական առանձնահատկությունները բացատրվում են նրանով, վոր պրուսակները մեծ մասամբ բաւարիկական (= հին պրուսներ) և սլավոնական ծագումով են» (Էջ 261): Մատնանշենք մեր կողմից, թե վորքան պահպանողական և գովառական շեշտը յերբ այժմ մեր խորհրդային լավագույն ինտելիգենտները քաջ տիրապետելով դրական լեզվին, այնուամենայնիվ պահում են տեղական շեշտը:

խառնուրդ ձեռով գոյանալիք համամարդկային մի լեզվի նկատմամբ:

Ամենալընդունված կարծիքը հնչյունական փոփոխության նկատմամբ այն է, վոր նոր սերունդները իրենց փոխանորդության (գեներացիայի) հետևանքով ակամայից և անդիտակցորդն աստիճանական փոփոխության են յենթարկում հնչյունները: Ինչպես Դ. Ուշակովը ե ասում—«Լեզու յուրացնողները—յերեխաները կամ ոտարազդիները—աշխատում են վերաբուդրել այն հնչյունները, վորոնք լսում են, ընտրելով, այսպես ասած, շուշափմամբ այս կամ այն արտիկուլացիան, ընդվորում կրնարույսը հանդիսանում է ականջը: Բայց ինչքան ել շատ լինի նրա ջկողական (ընտրողական) ունակությունը, այնուամենայնիվ գա սահմանափակ է, և չնչին տարբերությունները նրա (ականջի) կողմից կարող են և չնկատվել իսկ այդ չնչին նրությունները հետեւանք են, արտիկուլացիայում յեղած թեկուզ չնչին տարբերությունների: Մյուս սերունդի ժամանակ կարող ե լինել ելի չնչին թերում (շեղում), և հետեւանքը լինում է, յերեմն յերկարատեսկ պրոցեսի, արդեն այլ հնչյուն» (այս նրա Կраткое введение в науку о языке, 1922 թ., Էջ 120): Այս նույնը ձեռնուրդում է Վ. Պորժեղինսկին (Էջ 140) այսպես. «Կա և այնպիսի կարծիք, վոր լեզվի հնչյունական կողմի փոփոխությունը կոսքի պրոցեսի հետ կապված լեզվի սոսկական գոյության անհամարեցած հետեւանքն է, ուր (խոսքի պրոցեսում) արտասանության ժամանակ սկզբում են ամենափոքր շեղումներ (минимальные уклонения), վորոնք մասամբ ուղղվում են, մասամբ ել կուտակվում են վորությամբ [ընդգծումը մերն ե, Գ, Ղ.] և ալիս են վերջիվերջո արդեն զգալի հետեւանքներ»: Այս մեր մատնանշած «սերունդների տեսության» („теория поколений“) կողմնակեցները յեղել են Bremer, Pipping, Oertel, Paul և այլն*:

Լեզվաբանները յեղել են Բրեմեր, Pipping, Oertel, Paul և այլն*:

* Հատկապես մեծ գեր խաղաց այդ կողմից գերմանացի Paul-ը յուր Prinzipien der Sprachgeschichte գրեցվ: Տես նաև զը Սոսսյուրի («Բնդի. լեզվաբանության կուրս») գիրքը, Էջ 141 և Ռ. Շորի ծանոթությունը (Էջ 244):

սելով «լեզվի եվոլյուցիայի նորմալ տիպի» մասին, նա ասում է, վոր անհատի տեսակետից այդ լեզուն իր գործառնության մեջ հանդիս է գալիս վորպես անգիտակից ասացիացիաների մի բարդ սիստեմ՝ արտադրող որդանների շարժումների և զգացումների մեջ, վորը (սիստեմը) թեպետ նույնությամբ ուրիշների մոտ չկա, բայց նմանը գտնում ենք և ուրիշների մոտ, և յուր նորմալ տիպով պարտադրվում է բոլորին. հետեւապես լեզուն թե ֆիզիոլոգիական և հոգեկան յերեսույթ և և թե սոցիալական: Բայց քանի վոր ասացիացիաների այդ սիստեմը անմիջապես չի կարելի փոխանցել մեկից մյուսին, վորովհետեւ լեզուն իր չե, այլ գործունելություն («յազык не вещь, „εργον, а деятельности, ενεργεια.“*), ապա յերեխան խոսելու սկզբնաշրջանում մեծ լարգաժությամբ և գդվարությամբ և ջանում վերաբարդել մեծերի այդ բարդ սիստեմը, բայց ամենայն ճշորությամբ այդ նրան չի հաջողվում. «Արտասանության վորոշ գետաներ» («Նըրբամասնություններ»): չեն ըմբռնվում նրա լուղությամբ, բառափխությունների վորոշ առանձնահատկություններ վրիպում են նրա ուշադրությունից, և ընդհանրապես այն սիստեմը, վոր նա իրեն համար հաստատեց, միայն մասամբ և համընկնում մեծերի սիստեմների հետ. ամեն անգամ, յերբ յերեխան սովորում ե խոսել նա մուծում և լեզվի մեջ վորոշ նորություններ» (տես նրա «Ներածություն»-ը ուսուց թարգմ., եջ 20—22): Ինչպես տեսնում ենք, Մեյյեն և մեծ գեր և հատկացնում սերունդների փոխանորդության: Մատնանշելով հին 1 տուլլե («1 փափուկ») հնչյունի փոխակերպվելը հյուսիսային Ֆրանսիայում նոր ս (=հայոց յ) սոնանտի, և այն ել ըստ տարիքների (1850—1855 թվերի ծնվածները գործ եին ածում 1 տուլլե, իսկ 1855—1860 թվականների ծնվածները «1»-ն փոխել եին «ս»), Հունաստանում այլևայլ ժամանակաշրջաններում և բարբառներում մինչև 328 թ. Քր. առաջ յերկակի թվի անհետացումը**, և տալով այդ յերեսութների անընդհատությունը և աննկատելի կուտակումը նոր սերունդների միջոցով, Մեյյեն այսուամենայնիվ վերջացնում ե. «Այդ փոփոխություն-

* Այս ասույթը պատկանում է Վիեննա քումբութին:

** „Двойственное число сохранилось в Аттике до конца V столетия до Р. Хр., но около 410 г. в надписях замечается небрежное его употребление...“[16], հետո գործ է ածվում Ուղ. և Հայց, հոլովերում, իսկ 329 թ. անհետանում:

ների պատճառները ընդհանրապես անհայտ են, հատուկ են վոչ թե մի տեղի, այլ գործում են ընդարձակ տարածությունների վրա» (եջ 22): Կարենոր և շեշտել, վոր Մեյյեն Սոսայուրի և կըրտամեր «յերիտքերականների (Loewe, Brugmann) նման ընդգծում ե հնչյունափոխությունների ժամանակագրությունը: Սոսայուրն այդ առթիվ ասում եր. «Ճանրագույն մեթոդաբանական սխալ... կայանում և նրանում, վորպես թե նրանով հավասար փաստերը գույություն ունենային մի անգամ ընդ միշտ, այնինչ իրոք նրանք գոյանում և անհետանում են ժամանակի վորոց հատվածներում» (Փ. դե-Սօսսյոր, Կурс օբщ. лингв., 139):

Ամենամեծ առարկությունը սերունդների գեներացիայի փակտորի դեմ բերում են այն, թե ինչու յերեխանները փոփոխում են միայն վորոշ ուղղությամբ, ինչու արտասանական մեր որդանների աշխատանքի մեջ չնչին շեղումները կուտակվում են միայն այսինչ ուղղությամբ. և յետո, ինչու լեզվի ամեն մի հաջորդական փոխանցում հայրերից յերեխաններին տանում և գեղի այս և վոչ այլ փոփոխումներին, վորքան ել չնչին լինեն դրանք. իսկ յեթե հնչյունափոխումը միանգամից ե լինում, ապա այդ բացատրում են կրկնվող սիմալունքներով (ավելացնելով զրանց մեջ օբմոլվա-ներ, օսլաշկ-ներ*), բայց բնավ չեն ասում թե ինչու ամեն մի տվյալ գեղգում վորոշ ուղղությամբ և այդ սըսալը կատարվում (Պօրժ. Վաճ. և յա., 142): Սոսայուրը հետեւայլ ձևով և առարկում գեներացիայի հնչյունական գործունեյության. „В самом деле, нельзя понять, почему данное поколение удерживает одни из усвоенных в детстве неточностей, а не другие, в одинаковой мере естественные; действительно, выбор ошибочных произношений представляется чисто произвольным, рационально не обоснованным. Далее, почему данное явление распространялось именно в данную эпоху, а не в другую? („Курс“ 141—142)[17]: Ենք այս բոլորի հետեւանքը այն ե, վոր հնչյունական փոփոխությունների պատճառների պարզումը, ինչպես Սոսայուրն ե ասում,

* Օբմոլվա-ն այն ե, վոր լավ չի արտասանված, կիսատ-պոստ և դուրս բերվում, իսկ Օսլաշկ-ն վատ լիելու հետեւանքով՝ սիմալ արտասանելն ե յուրացնողի մոտ:

հանդիսանում եւ լեզվաբանության ամենագծվար լենդիլներից մեկը*:

Կասկած չկա, վոր ընդհանուր հնչյունափոխության յերեւ վույթը սկսվում եւ մասնավոր գեպքից և անալոգիայի ազգեցությամբ «կույր» բնական ուժով** տարածվում եւ բոլոր նման գեպքերի վրա, ստանալով կանոնավոր որինաչափական արտահայտություն. իսկ մենք միշտ կամ կատարված վերջնական կամքիչ թե լավ ձևակերպած փաստն ենք արձանագրում, ինչպես հայոց $\sigma > \tau\pi$ ($>\psi$), հայոց $\epsilon > j\epsilon$, μ , η , φ , $\delta > p^\epsilon$, τ^ϵ , q^ϵ , ϱ^ϵ , ϑ^ϵ , α^ϵ կամ փ, β , φ , ζ ց (նայած բառագիրքին և բարբառին) կամ թե գերմաններեն բոլոր \bar{i} (ի յերկարը) գարձել եւ ու հետո¹ այ (win>Wein «գինի», triben>treiben, «հալածել, քշել», zit>Zeit «ժամանակ», lihen>leihen «շնորհել»...)** կամ գերմ. յերկար ն դառնում եւ այ (hūs>Haus «տուն», zān «ցանկապատ»>Zaun, րաշ «մուխ»>Rauch...) կամ յերկճայն և գարձել եւ յերկար \bar{i} , պահելով ուղղագրությունը (biegen «ձկել», lieb «սիրել», Tier «գաղան»..), կամ յերկու ձայնավորների միջև «հ»-ն դուրս եւ ընկնում (sehen>seen, leihen>leien..), փրանս. 1 փափուկը >y (յոտա), լատ. միջաձայնավոր s>r (*genesis>genetris, *asena>arena...) և այն և այն:

Այդ «որինաչափությունը» բացարձակ և մշտնչենական չի համարվում. սկսվելով մասնավորից նա տեսդենց և ստանում ընդգրկել բոլոր նման գեպքերը, սակայն հանդիպելով խոչընդուների՝ նա կամ կիսանանպարհին եւ կանգնում կամ ընդհանուրավես դադարում եւ և այդ լինում եւ վոչ միայն լեզվի տարերայնորեն դարձանալիս, այլ և գիտակցական կանոնավորման ժամանակ (դպրոցի, գրական լեզվի աղեցությամբ և այն): Բառերի հնչյունական փոփոխումները միշտ եւ լինելու յեն, և մարդկային գիտակցությունն ու կամքը այստեղ գեր չեն խաղում: Կոլ-

* Выяснение причин этих изменений [ընդհանուր հնչյունափոխությունների մասին ե] является одним из труднейших вопросов лингвистики („Kurs“, 139).

** Յերթասարդ քերականները այդպես ելիս ձևակերպում այդ «որենքը»—«Die Lautgesetze wirken mit blinder Naturgewalt» (=հնչյունականն ունքները դրսում են կույր բնական ուժով):

*** Համեմատիք գոկերի կամ դարձաբաղեների նույն որենքը (i>ai), կոմիկ>կոմիք, ծիծաղ>ծաղմաղ...

լեկտիվի յուրացման տեսակետից ել սկզբից միայն վորոշ քանակն և սկսում փոփոխված ձևով արտասանել իսկ այս կարող եւ կամ հող ունենալով տարածվել վողջ մասսաների մեջ կամ ել չդարձանալ և անհետանալ, այդ վերջին գեպքում այդ փոքրաթիվ խմբակի և խմբակների (հատկապես բարբառներում*) նոր արտասանությունը յերեւեն ծաղրանքի առարկա յէ գառնում, վորը ցույց եւ տալիս հնչյունական յերեսութիւն (ֆենոմենի) սահմանափակ լինելը և մասսաներից մերժվելը: Իսկ յեթե բարենպաստ ընդհանուր հող կա, սպաս այդ հնչյունական ֆենոմենը տարածվում եւ անարգել և կանոնավոր, ինարկե պատմական սահմանափակ շրջանում: «Բարենպաստ հողի» տեսակետից մինչև իսկ անհատները, մանավանդ քաղաքական հայտնի ճարտասաններ կամ գործիչներ, կարող են յերեւեն ուժեղ արտասանական տպագործություն թողնել իրենց խոսքի ինդիվիդուալ առանձնահատկությումը:

Ապա ի՞նչ յերթակացության ենք գալիս լեզվի հնչյունական փոփոխությունների պատճառները հայտնաբերելիս, թեպես այդը ըստ Սոսյուրբի, «լինգվիստիկայի գժվարագույն ինդիբներից մեկն ե»: Վորը պիտի լինի այս ինքում այն նորը վոր տալու յելեզվի մասերիալավական ըմբռնումը յուր պատմական դարձացման մեջ: Զպիտի խուսափել այսուեղ ևս վորոշ մոտեցում ցուցաբերել, թեպես այդ այժմ փորձի և պրոբլեմի գրվածքով միայն կարող ել լինել, հավակնություն չունենալով միանդամայն ճիշտ և վերլուծված համարել:

Ճիշտ պիտի համարել, վոր լեզվի հնչյունական դրությունը և փոփոխությունները ֆիկսացիայի յեն յենթարկվում լեզվի յուրացման ժամանակ, թե նորմալ ժամանակ (սերունդների կողմից) և թե լեզվախաչափորման ժամանակ (այլազգիների կողմից): Վերջին (խոտնվելու) գեպքում վորոշ որինաչափությունների և հըն-

* Իմ հայրենի Աշտարակ գյուղում ինչ-ինչ պատճառներից, շատերը սկսում են արասանել «մոնց» (=վոնց), «տովորել» փոխանակ սովորական ուղղորել (գիսսիմիլացիայով գարձել և տովորել), կամ «չեռի Շեր», «Շիշի», (=քեռի, կեր, իգի=այգի)… բայց գյուղի մեծամասնությունը այդ մերժում ե: Նույնը և ձևաբանական տեսակետից—զրուց, արուց, բերուց… և զրեց, արեց, բերեց…, ուր գերջինը հաղթանակում ե, թերես նաև զրական լեզվի աղջեցությամբ:

Հյունների ժառանգականության և ստացականության (ստացովի մինելու) ժամանակավոր գործունեյություն և միայն հանդես դալիս:

Իսկ յեթե վերցնենք լեզվի «նորմալ» ընթացքը,ուր չկան խաչափորության, գրի (գրական լեզվի) և այլ ֆակտորների ազդեցությունը, թեպես այդ նորմալը ևս հարաբերական հասկացողություն են, — ապա լեզվի վերաբարպրվելը, կապված գլխավորապես սերունդների գեներացիայի հետ, անհիմատելի կերպով վորոշ հնչյունների շեղում և առաջ բերում յուր նախկին վորակից: Մենք այդ պատճառ չենք համարում, քա լեզվի «կեցության» միակ ձևն եւ փոխանորդությամբ և ձեափխությամբ: Այստեղ սերունդները, վորոնք ավելի քիչ են նախապաշտպահ դեպի հին հնչյունապատճերները, ինչպես և լեզվի բոլոր կրողները, սոսկ կատարողների կամ դրսեվորող մեդիումների (medium) դեր են խաղում: Հնչյունի արտիկուլացիայի փոփոխումը կամա թե ակամա պետք եւ տեղի ունենա, արտասանական ավանդախիման կուտակումը վոչ գիտակցորեն և մի ուղղությամբ ընթանում և վոչ ել նախապես տըրաված և յեղել նրա արտասանական ունակությունների տվյալ մոմենտում: Այստեղ չկա մի ուղղության ինդիքը. հնչյունի տվյալ ժամանակի «նորմալ» արտիկուլացիայի խախտումը մի քանի ուղղությամբ և սկսում, դրանք իրար չեն հավասարակշռում, այլ լրացնում են և ի վերջո ի մի հայտարարի գալիս: Բավական ե, զոր արտաբերման խախտումը սկսվեց, այլս այդ հնչյունի նախկին մտապատճերը թուլանում և տեղի յեւ տալիս նորի: Այստեղ ևս պրիմատը հնչյունի պրակտիկան եւ:

Սակայն վորոն և բուն պատճառը այդ փոփոխության: Յեթե ասենք սերունդները, դրանով վոչինչ չի բացատրվում, ինչպես ամփեց վերելում: Հոգեփիզիկական կոմբինատոր ազդակները (ըստ Վունդատի) առաջ են գալիս մեր կարծիքով հնչյունի անդիտակցորեն փոփոխվելու հետևանքով և այդ փոփոխման հետ միասին, միայն դրա ընթացքում դառնում են արդեն և անհամեշտ աղդակներ: Իսկ հնչյունափխության բուն ապդակը, կապված լեզվական իրակությունների (հնչյուններ, ձևեր, բառեր, իմաստներ) ընդհանրապես փոփոխելիության անհրաժեշտության և բնականության հետ, մենք համարում ենք արտասանական նոր տասմաքրությունը, վորը իրեն անհամեսուրյուն ի հայտ ե գալիս հասարակայնորեն, և այն ել՝ լեզվի կոնկրետ մոմենտում, ամփոփում յուր կազմավորման մեջ թե լեզվական իմմանենտը, ապեցիֆիկ արտահայտությունը, և թե լեզվի պատճառահասարակական զարգացման իմպերատիվը, կապված

հասարակական մտայնության և լեզվի զարգացման պահանջի միասնականութեան հետ: Կոնկրետ փոփոխման ձևերը, ըստ այդմ, լինում են պատճական, թեպետև իրենց արտահայտության յեղանակով պայմանավորված են յուրաքանչյուր լեզվի այս կամ այն լեզվավորակի հետ, նրա սպեցիֆիկ ավշաների հետ: Այդ կոնկրետ փոփոխման ձևերը, սկզբելով կարծես թե տարերայնորեն, հոգեփիզիկական գուտ լեզվական ներքին աղղակներով (վորոնք թե ընդհանուր են և թե ձևավորվում կոնկրետ գեպքերի հետ), դրանք (փոփոխման ձևերը) հետզհետեւ նորմավորման են յենթարկվում, ընդզերկելով ձևաբանական ասսիմիլացիայի հետևանքով նորանոր բառեր: Հոգեփիզիկական այդ յերկրորդական ազդակները արդին արտաքուստ գերիշխում են, անհամեշտ աղդակներեն պայմանավորում են և յերեւյթը դարձնում «որինաչափություն», իբրև լեզվի ներքին գործոն: Իսկ բուն պատճառը, արտասանական նոր արամագրությունը, այլև մթագնված և լինում: Արտասանական այդ նոր արամագրությունը, կենսագործվելով լեզվի, այսպես կոչված, (ըստ Բողոքենի) «լեզվական մտածողության» մեջ, իրեն գոյացմանը կարծես թե իրականացնում ե կամ, ավելի լավ՝ ասած իրացնում ե լեզվահասարակայնության ընդհանուր «սոցիալական պատվերը»: Սակայն հնչյունական փոփոխություններ առաջացնող մեր այս «արտասանական նոր արամագրությունը» անմիջապես չի արտացոլում հասարակական մտայնության տեղատափություններն ու մակրնթացությունները: Լեզվի հնչյունական կատեղորիխան թե շատ ինքնահատուկ և թե յուրահատուկ ձևով ե արձագանգում հասարակական նոր արամագրության, բացի այն վոր լեզվի հնչածականական մասը շատ պահպանողական ե, հակառակ լեզվի իմաստական և լեքսիկական մասերի պատճառահասարական զյուրափոխման*:

Մարքսիզմի հիմնագիրներից հնչյունների փոփոխման պատճառահասարակագիտական ձիշտ արժեքավորումը տվել ե առաջին անգամ ֆր. ենգելսը՝ Բլումին զրած յուր նամակի մեջ, վորակեղ նրա ասելով առնվազն ծիծաղելի պիտի համարենք նրանց, ովքեր

* Հնչյունների, ինչպես մասսմբ այլ լեզվական կատեղորիխաների այդ ինքնահատուկ գերի մասին խոսելիս, պետք է հիշել կ. Մարքսի հետեւյլ խոսքը—«На „духе“ заранее тяготеет проклятие „отягощения“ его материей, которая выступает здесь в виде движущихся словес воздуха, виде звуков, коротко говоря, в виде языка» (Архив Маркса и Энгельса, кн. I, стр. 220)[18]:

հնչյունափոխությունը անմիջապես կապում էն եկոնոմիկայի հետ, ընդգծելով, վոր գերմանական բարբառների տարբերացման մեջ դեր և խաղացել նաև Սուլիփա—Տառնուս լեռնաշղթան*: ենդեմը սրանով ուզում և զգուշացնել գոեհիկ մատերիալիզմից («ենդեմիզմից»), վոր կարող են մտցնել նաև լեզվական բնագավառը**, բայց սրանով իհարկե չի բացասվում լեզվական յերկույթների, մինչև իսկ հնչյունական վորոշ փոփոխությունների, հետին կապը հասարակական-արտադրական սուբստրատի հետ, իրրե պայմանավորող, հեռավոր, բայց հիմնական, գործոնի հետ: Միջնորդավորող անցումները մեզ դեռ վորոշ չեն: Պարզականացումը (упрощенство) և մեխանիստական անմիջական վերածումը (сведение) գործին իրական պատմական բացարարություն չեն տալիս: Իսկ հնչյունական փոփոխման բնագավառն ավելի բարդ է, ավելի հեռու հասարակական զարգացման արտադրական բազիսից, թող թե, վոր այդ հնչյունական ֆենոմենը կրում է յուր մեջ նաև Փիզիկո-Փիզիոգրաֆական բնական մաս (կամ կողմ):

Բարբառների մերկելով և մասսաների կուլտուրական բարձր վերելքի հետևանքով վորոշ նորություն կարող է առաջանալ յեղած հնչական կողմի մեջ, բարբառային մի նոր ազգեցություն. սակայն, ըստ իս, այս պլոտեսը յերկար կտեղի, քանի վոր, կազմավորման (դաստիարակող) որդանները հանդերձ գըպուցով, գիր ու գրականությամբ, թատրոնով, կուսակցական ժողովներով և այլն ավելի ուժեղ ֆակտոր են յեղած արտասանության պահպանման համար, քան տեղական հնչական (և հնչյափոխական) պարտիկուլարիզմը: Լեզվի (և հնչյունական կողմի) բնագավառում ևս վճռողը լինում են պատմա-կուլտուրական հաջորդող ֆակտորները, քան սոսկ մեխանիկական կցկցումը բարբառների և նոր դասակարգերի տեղային պարտիկուլարիզմի:

* Едва ли удастся кому-нибудь, не сделавшись смешным, об'яснить экономически существование каждого маленьского немецкого государства в прошлом и в настоящее время, или об'яснить экономически происхождение верхненемецких изменений гласных, которое разделяет Германию (в отношении диалекта) на две половины, что усиливается еще географически цепью гор от Судетов до Таунуса». К. Маркс и Ф. Энгельс «Письма», изд. З-е, перев., ред. и прим. В. Адоратского, Москва — Ленинград, 1928 [19].

** Այս գոեհիկ սոցիոգրաֆմին մասամբ հարկ և տալիս ն. Մառը յուր «Яфетическая теория» (Баку, 1928, № 73) գրքում, ուր ի միջի այլոց t→d→ն համարվում են սիալ կերպով յերեք աստիճանի ձայնեղացում:

Պրոլետարիատը վերցնում է անցյալի զարգացած ժառանգությունը, թեկուղ և շահագործող նախկին դասակարգերի, և տեղի յետի մակար յուր բարբառամուծություններով: Այդ ժառանգությունն է հարկե բարձրացվում ե, հարստացվում ե, նոր պահանջներին և հարմարեցվում, կրելով ըստ այդմ վորոշ փոփոխություններ: Լեհական և յուր հնչյունական կողմով այդ տեսակետից բացառությունն չե:

Ապագա համամարդկային միասնական լեզուն և կազմվելու յև գերազանցորին պատմա-հասարակական ֆակտորների ազգագուներով, ինչպես վերեն ասվեց, այսինքն դեր են խաղաղածվելու լեզվի միացման տեսակետից միայն այն լեզուները, գորոնց միջոցով պլոտետարական հեղափոխությունն ու կուլտուրան տարածվելու յեն (ոռւաց, գերմանական, անգլիական, ոռմանական). բածվելու և մեխանիկական կցկցում կամ սինթեզ բայց լեզուների այսեղ ևս մեխանիկական կցկցում վաղաքական և պատմա-կուլտիվ կարող լինել վորովնետե վճռողը քաղաքական և պատմական առողջապահության համար այս լեզուների այսինքն կուլտորներն են*: Մինչև իսկ գլխավոր տուրական ընթացքն ե, ֆակտորներն են: Մինչև իսկ գլխավոր «կուլտուրական» նշանս լեզուների սիստեմների մեխանիկական կցկցում չի կարող լինել այսինքն՝ տարերայնությունը, վոր հետագա նում լեզվախառնման ժամանակ ավելի ուժեղ եր (թեպետ այտեղ ևս միշտ իշխել և պատմա-կուլտուրականը), այժմ ավելի յև պակասներու. և մարդկության միջամտությունը (վերեկց) նորմավորման յեղած և յենթարկել այդ պատմական—տարերայինը: Հաստատ կարող է յենթարկել այդ պատմական համամարդկային լեզվարկելի յեւ ասել, վոր ապագա միասնական համամարդկային լեզվականից վում հնչյունափոխական տարերայնությունը ևս թուրայնալու յեւ: վերաբերությունը հնչյունական փոփոխություն միշտ կլինի, մանաժիշտ ե, լեզվի հնչյունական փոփոխություն միշտ կլինի, մանա-

* Յեթե այս պատմա-հասարակական մատերիյել ասպեկտով մոտենանք, առաջ կը Սոսայուրի պնդումը, թե «վոչ մի տվյալ չունենք պնդելու, վոր ապագային պատմության բուռն դարաշրջաններին համապատասխանում են լեզվի գային պատմության բուռն դարաշրջաններին մեջ սուր փոփոխություններ» («Կորս» 142), ճշմարտության չեն հնչյունների մեջ սուր փոփոխությունները: Ու, Շորը: Վերջինս համապատասխանի, ինչպես ճիշտ դիտում է կամմենտատոր Ռ. Շորը: Վերջինս ասում է. «Դը-Սոսայուրի այս առարկությունը իմաստ կարող է ունենալ այն գեղաքում, յերբ նա ուղղված է հնչյունական փոփոխությունները անմիջապես հասարակա-տնտեսականից և պատմականից հանելու դեմ: Բայց լեզուների պատմությունը յուր տրամադրության տակ ունի ամենահարուստ մատերիալի ապագայուցելու համար այսեղ միջնորդագորդ աղերսակցությունների առկայությունը, յերբ առաջ և նետվում նոր տեղային կամ սոցիալական մի դաշտական գասակարգի լեզվի դերով, յերբ գրական լեզվի արտգիցիոն բարբառ իշխող գասակարգի լեզվի դերով, յերբ գրական լեզվի գրադարանը

վանդ խառնվելուց հետո, ուր տարբեր լեզուների հնչական միշտումները կարող են դեռ իրենց զգալ տալ. պատմությունը մեղայդ և վկայում: Սակայն փոփոխման վորակն ու քանակը այլ կարող են լինել քանի վոր որթոեպիտան (ուղիղ հնչելը) ավելի յեկաղմավորվելու ազգային կամ դասակարգային տարբերացնող (հեռացնող) մոմենտներ չեն լինելու, տարբերացնությունը թուլանալու յի, հասարակայնությունն ավելի յի զգացվելու յուր կուլտուրական միջամտությամբ և այլն: Հնչյունական փոփոխությունների (վորակով, քանակով, դիրքով՝ դիսպոզիցիայով) արժեքը, վորպես լեզվի ձևաբանական տեխնիկական սուբստրատ, միշտ ել կմնա: Հենց այդ ե յեղել հնչյունափոխության գլխավոր և պատմա-հասարակական գերը՝ ի սպաս լինել լեզվի ստրուկտուր մասին, լեզվի շինարարությանը, լեզվի առաջընթացին:

Բացի հնչյունափոխական այս լեզվահասարակական շինարարության մոմենտից, ֆոնետիկայի սոցիալական արժեքն և նաև այն, վոր հենց իրենք հնչյուններն են սոցիալական պրոդուկցիայի հակադրություն կենդանական դիֆփուզոյիդ աղմկաարտաբերումներին: Կոլեկտիվի մշակվածությունը լինելով՝ հնչյունները մինչև իսկ սուր դասակարգային պայքարի մոմենտներում ոգտագործվել կարող են և այդ պայքարի տեսակետից. յեթե ֆրանսիական կամ գերմանական բուրժուան յուր և հնչյունը դարձնելով յետնաեզրվային (կարտաօք), մոտ հայոց «զ»-ին, դրանով յուր արտասանության մեջ զատվել ե տենչում ժողովրդա-

նորմաներն են խախտվում և այլն: Այդ ասպեկտով յուրաքանչյուր լեզվի պատմությունը տալիս ե յուր փաստերով զրա հավաստումը. այդպես ե, որինակ, անգունորմանդական բարբառի դուրս վանվելը միջին անդերենով անդմական լեզվի պատմության մեջ, կամ բրանսիական մեծ հեղափոխությունից հետո՝ de la petit bourgeoisie parisienne արտասանության որթոեպիլէ կողմի ամբագնդվելը» (նույն գրքում, էջ 244): Այս նույնպես մոտամբ և արդարացվում. այժմյան ոռուական կամ հայկական արտասանությունը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո չի փոխվել. Վոչ միայն պատմության ըստոն շրջան-ներում նոր դասակարգի կամ խավի բարբառը կամ հնչյունական նորբությունը կարող ե փոխարինել կամ մասամբ փոխել նախկին տիրողներինը, վոր տառչ, մինչ կապիտալիզմն, ավելի յեր հայտնագործվում, այլև կարող ե լինել Եվրոպակարի լեզվի և արտասանության անցումը նոր դասակարգերին (ոլորետարիանին), մանավանդ ընդհանուր կուլտուրական այս նոր բարձր շրջանում: Հարցին պիտի մոտենալ կոնկրետ և դիալեկտիկորեն:

կան խավերից, ապա այդ հասարակական յերկույթը ստանում է և դասակարգային մասնավոր բնույթ, թեպետ պիտի ասել, վոր գեմուն ևս, ինչպես շատ այլ կուլտուրական բնագավառներում, նաև այստեղ հետեւմ ե այդ արտասանությանը և յուրացնում. բուրժուական ծագող այդ հնչյունի արտասանությունը այդ գեղքում դառնում է ընդհանրական:

Հնչյունի փոփոխման հասարակական սուբստրատի մասին մենք արդեն վերելում ասել ենք, ի հակադրություն վորոշ դպրոց-ների սոսկ անհատական փոփոխման փակտորի, իսկ այդ փոփոխման լեզվաշինարարական, այն եւ ձեաբանական արժեքի մասին, մենք կխոսենք «Ձևաբանություն» հատվածի մեջ:

ԳՐԻՒ ՄԵԶ ՀԻՇՎԱԾ ՈՌԻՍԵՐԵՆ ՏԵԿՍՏԵՐԻ
ԹՐԻԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

[1] Եջ 6.— Հարկ չկա ասելու, որինակը վոր լեզվի այն ուսուցիչը, վոր հիմովին չի ուսումնասիրել լեզվաբանության վորոց բաժինները, կիւրողանա զասավանդել միայն այնպես, ինչպես կկարողանա բժշկել այն հեքիմը, վորը չի ուսումնասիրել կազմախոսություն, բնախոսություն կամ դեղախոսություն (анатомия, физиология и фармакология: (ՏԵՌ. А. Томсон. Общее языковедение Одессы 1910. № 3):

[2] Եջ 12.— Պուրոն Դյուռինգը, արտաքսելով իր ուսումնական ծրագրից ամբողջ ժամանակակից պատմական քերականությունը, թողում և իր գպրոցում լեզուներ սովորելու համար միայն հնադարյան զասական բանասիրության վոճակը ձևած հնատարար տեխնիկական քերականությունը, իր ամերող գիպածաբանությամբ (կազուիստիկայով) և կամայականությամբ, վորոնք ծըզգիածաբանությամբ (Ակների և, վոր մենք նունդ են նրա պատմական հիմքի բացակայությանը... Ակների և, վոր մենք ունենք մի բանասերի հետ, վորը յերբեք չի լսել վերջին 60 տարվա լինգորդ այնպես ուժեղ յիշ արդյունավետ զարգացած պատմական լեզվաբնարյան մասին, և վորը այդ պատճառով, վորոնում և լեզվաբանության «ժամանակակից», վեհ կրթական տարրերը, վոհ թե Բոպպի, Գրիմմի և Դիցի, առ լուսահոգի Հեյդերի և Բեկկերի մոտ» (ՏԵՌ. Ф. Энгельс. Антидюриնգ, Москва 1932 Եջ 233): Ըստգծումը մերն ե. Ք. Ղ.:

[3] Եջ 18.— Բոլոր լեզուները և խոսվածքները, նույնիսկ ամենավայրենի և անկուլտուրական ժողովուրդներինը, գիտության համար ունեն հավասար արժեք. վերջինները, համենայն գետու, ավելի հարմար նյութ են գիտական ուսումնասիրության համար, քանի կրթական ժողովուրդների գրական լեզուները, վորոնք լեզվաբանի համար նույնն են, ինչ վոր ջերմոցային բույսերը՝ բուսաբանի համար: (ՏԵՌ. А. Томсон—Общее языковедение, Одесса 1910 Եջ 4):

[4] Եջ 20.— Առանց գերազանցատելու մեր այն միջոցները, վոր ունենք ընդհանրապես կենդանիների ներքին աշխարհը ուսումնասիրելու գործում, մենք ընդհանրապես կենդանիները, վոր մարդկային լեզվի պատմության, նրա ծագման վերաբերող մի քանի հարցեր իրենց լուծման համար կարենը ցուցմունքներ պետք ե ստանան կենդանիների լեզվի ուսումնասիրությունից: Այստեղ իսկ նշեմ, վոր վերջինիս եյտական տարրերությունը մարդկային լեզվից ներքին ապրումների վերջինիս եյտական տարրերությունը մարդկային լեզվից ներքին ապրահայտության բաժանվածության բացակայության մեջն ե. հնչյունը կամ արտահայտության բաժանվածության բացակայության մեջն ե. հնչյունը կամ հնչյունների զուգորդությունը կենդանիների մոտ արտահայտում և նրանց հնչյունների իրենի մասերի նրածանված մի ամբողջության: Ինքն ըստ ինքյան ապրումները, իրենի մասերի նրածանված մի ամբողջության: Ինքն ըստ ինքյան հասկաբալի յե, վոր լեզու՝ այս բառիս ներ իմաստով, չենք անվանի ակամա հնչյունական բեֆլեքսները, վոր այնքան բազմաթիվ են կենդանիների մոտ: Ըստգծումները մերն են: Ք. Ղ.:

* Թարգմանությունը կատարել է Մ. Քարամյանը:

[5] № 22.— Умение ми լեզու իր խոսակցական, իսկ գրավորը նաև գրական ձևով, սոցիալական միջավայրի գործունեյության արդյունք եւ. միջավայրի՝ փոխադաբար ազգող անհատների, զիշ միայն տվյալ ժամանակի, այլև նախորդ շրջանների. Սոցիալական բնույթ ունեցող ուրիշ յերևույթների՝ բարքերի, սովորությունների և այնի հետ ինքուն յուրացվելով մանկությունից՝ դառնում եւ ավյալ ժամանակի կողեկտիվի անդամների և նրա մասնակոր խմբակցությունների (լսու աշխատանքի, դասակարգայնության և այլն) հաղորդակցության բնական անհրաժեշտ նորման և թվում եւ, թե գոյություն ունի կարծեա թե անջատ ձեռվ այդ կովեկտիվի առանձից անհատների խելքից ու պատկերացումից: Իր զարգացման մեջ նա արտացորմ և հասարակության տնտեսական, սոցիալ-քաղաքական և մտավոր ապրումները: (Տե՛ս Պրօֆ. Յօհորուցի Առաջին Կուրս ռուսկոյ գրամմատիկա 1935).

[6] № 25.— «Homo sapiens»-ի ընտանիքի յերևալուց առաջ կենդանին շրջապատող աշխարհի հետ հաղորդակցության մէջ եր այդ աշխարհի ագենտներից ստացած անմիջական տպակորությունների միջոցով միայն, ագենտներից, փորունք ազգում ելին կենդանիների զանազան ընդունիչ գործիքների վրա, և տարիում ելին դեպի կենդանական ջղային սիստեմի համապատասխան բջիջները: Այս տպակորությունները արտաքին որյեկտների միակ ազգանշաններն ելին: Ապագա մարդու մոտ յերեան յեկան, զարգացան ու չափազանց կատարեալագործվեցին յերկրորդ աստիճանի ազգանշանները, այդ նախական ազգանշանների ազգանշանները՝ տրաստանելի, լսելի և տեսանելի բառերի ձեռվով: Այդ նոր ազգանշանները, վերջի վերջու մկնեցին նշանակել այն բոլորը, ինչ վոր մարդիկ անմիջականորեն ընդունում ելին, թե արտաքին և թե իր ներքին աշխարհից, և գործածվում ելին նրանց կողմից վոչ միայն փոխադաբա հաղորդակցության ժամանակ, այլև յեր մարդը մենակ եր ինքն իրեն հետ: Ի հարկե, բառի հակայական կարեռությունն եր, վոր պայմանավորեց նոր ազգանշանների այդպիսի գերազանցումը, թեև բառերն իրականության յերկրորդական ազգանշաններն ելին միայն ու այդպես ել մասցին...: Ծնորժիվ յերկու ազգանշանային սիստեմների և կյանքի հին ու տեսականորեն ազգող զանազան պայմանների զորությամբ մարգարին զանգվածը բաժանվեց գեղարվեստական, մտածող ու միջակ տիպերի: Վերջինը պատշաճ չափով միացնում եւ յերկու սիստեմների աշխատանքն եւ: Այս բաժանումը իրեն զգալ և տալիս թե անջատ մարդկանց և թե մարող ազգերի վերաբերմամբ: (Տե՛ս Հայության № 177 30-VII-35).

[7] № 29.— [«Ի՞րար մի բան ասելու】 պահանջը ստեղծեց իր համար մի որդան, կապիկի չզարգացած կոկորդը շնորհիվ աստիճանաբար ուժեղացող յերկեղների զանգաղ, բայց անշեղորեն կերպարանափոխում եր, և բերնի որդաններն աստիճանաբար սովորեցին իրար հետեւ արտասանել հոգորոշ հնչյունները: (Տե՛ս Փ. Յնգելս. Դալեկտիկա ու բնույթ 1929 թ. էջ 65):

[8] № 70.— «Բաղաձայն տարրը պարզ լին թե բարդ, վանկը հնչյունների ավյալ շարքում բացվելու և գոցվելու շարժումների վերջին սահմաններում գտնվող հատվածն եւ: (Տե՛ս Ա. Մեյե. Վարդակական բառեր և բառականություններ 1911. էջ 103-104, թարգմանություն Պոլ. Դ. Կուլպյանի):

[9] № 70 և 138.— «Հաղիվ թե մեկը, առանց ծիծաղելի դառնալու, կա-

րողանաւ անտեսապես բացատրել գերմանական ամեն մի թագավորության գոյությունը անցյալում և ներկայում կամ անտեսապես բացատրել ձայնագորների վերին-գերմանական փոփոխությունների ծագումը, [փոփոխությունների] վորոնք բաժանում են Գերմանիան (տիպակաբ վերաբերմամբ) յերկու կեսի, մի հանգամանք, վոր ավելի ուժեղանում և աօխարհագրականութեն Սուլեբերեցից մինչեւ Տառենու յերկարաձգվագլությունը՝ (Կ. Մարքս և Փ. Յնգելս, «Պիսմա» ամ 3-ը պեր. րե. և պր. Վ. Ադորատսկու, Մոսկվա-Լենինգրադ, 1928. տես Ենդեւսի համակը գրած 3. Բլումին):

[10] № 85.— «Ուուսերենում՝ Փրանսերենից տարբեր՝ լնդանուում առմամբ լեզուն արտասանում եւ ավելի յետին մասերում, յեթե հաշվի չառնել ուռակերենում հաճախ պատահող բաղաձայնների քիմքայնացումը Յերբ խոսելու ժամանակի ուռակերենը փոխում ենք Քրանսերենին, լեզուն առաջ եւ լնկնում և շարժիչ ուժը կարծեա թե մերափոխում եւ լեզվի առաջին մասերի վրա: (Տե՛ս, Ա. Տոմսոն, Օբщее языковедение, էջեր 216-217):

[11] № 90.— «Անգլերենում և հնչյունի սղումը (օպացիոն) հակառակ, վոր բավական տարածված եւ, համարվում եւ մի գունդաբանություն, վորին պետք չեւ հետեւել: Որինակ Թեքվերեյը հիշում եւ այն հայացքը, վորի համաձայն պետք չեւ հետեւել: Այսաքարքարական եւ, վոր այն անձնավորությունները, վորոնց խոսվածքին հատուկ և ի-ի այդ սղումը, յերբ խոսելու ժամանակի վորում են կոռեկտ լինել այդ հնչյունը մտցնում են այսակե, ուր պետք չեւ: (Տե՛ս Պոլիվանով, Լекции по введению в языкоизнание и общей фонетике. Берлин 1923 էջեր 25-26):

[12] № 93.— «Մի շաբք լեզուներում ձգտում կա բառավերջում չարտասանել ձայնեղ բաղաձայնները: Այդ ձգտումը բացատրվում և ձայնաբարերի աշխատանքը չլացնելու հակամիտությամբ, յերբ նրանք պետք և անցնեն հանգիստ վիճակին:» (Տե՛ս Ե. Պоливанов, Լекции по введ. в языковое изучение и общий фонетике, էջ 29):

...«Բոլոր այլ դեպքերում, բացի բառավերջից, ուռակերը լնդանը արագ ճիշտ են արբերում քրանսական և անցլիական ձայնեղները համապատասխան խորհրդական բայց նույնը դժվար և հաջողվում գերմանացիների վորոնց նայած իրենց բարբառին»: (Տե՛ս Ե. Պоливанов, Լекции по введ. в языковое изучение и общий фонетике, էջ 29):

[13] № 122.— «Պետք և խիստ տարբերել հնչյունի փոփոխությունը (Lautwandel) հնչյունի փոփարինումից (Lautwechsel): Սակայն թե մեկը, թե մյուսը կոչվում են ինքը նիշումնափոխություններ, կամ լեզվի փոփոխությունները ըստ հնչյունների: Բայց հնչյունի փոփարինումը պետք չեւ անվանել հընդունի փոփոխություն, ինչպես յերբեմն անում են: Հնչյունի փոփոխությունը տեղի յեւ ունենում բացառապես մոնեթիկութեն, մինչ հնչյունի փոփարինումը կարող և տեղի ունենալ նաև նշանակությունների ուժանդակությամբ, որինակ ունրաբանություններ ըստ նմանության, «ժողովրդական ետիմոլոգիայի» հային»: (Տե՛ս Ա. Տոմսոն. Օбщее языковедение էջեր 244-246)

[14] № 128.— «Հարեթական սիստեմի լեզուներում արտահայտված նախորդ ստալիների նորմաները, վոր պահպանվել են իբրև մնացուկներ, պետք և քննիկն նաև նրանց հետեւյալ արգելն «հնդկելուսական» ձևավորման մեջ: Յեթե մենք այս կողմից մոտենանք «հնդկելուսական լեզուներին», կամ

գոր բարդ յետնալեզվային հնչյունները չեն պահպանվել «Հնդկութագական» սիստեմի լեզուներում. [թեյև] ճիշտ ե, բարդ առաջնալեզվային շարքի հնչյուններ կան [ասկավին], բայց զգալի չափով պակաս քանակությամբ, քան հարեթականներում, որինակ՝ ուսուական և և ա» (Տե՛ս Ի. Մещанинов. Проблема классификации языков в свете нового учения о языке, 1935 г. Եջեր 58-59):

[15] Եջ 130.— «Բոմանական լեզուների տարբերությունները բացատրելու համար Ասկոնիի և յուսու բոմանաբանների կողմից առաջարկված սուբյեկտացի տեսությունը լայնորեն ձանաչված է XIX դարի վերջի և XX դ. սկզբի իզգաբանների կողմից (Wundt, Paul, Windisch, Schuchardt, Meillet, Feist...) Սուբյարատի տեսությունից սկսվում եր նաև հարեթաբանությունը, քանի չեյին մացրել ստագիականության գաղափարը, (1924),—համեմատիր Ն. Մառ, Յաֆետ. Կավказ и третий этнич. элемент в созидании средиземноморской культуры»: (Տե՛ս Սօսիոր, Կորս օբշ. Լինգ. Եջ 245):

[16] Եջ 133.— «Հիբրավի, չի կարելի հասկանալ ինչու տվյալ սերունդը պահպանում ե մանկությունից յուրացված անձառություններից մեկը, և վոչ թե մի ուրիշ, խսկանեա, սիսալ արտասանությունների ընարքությունը բոլորովին պատճական ե, բայնայնորեն չհիմնավորված: Հետո, ինչու ավյալ յերեսութեա տարածվել ե հենց այլ ժամանակաշրջանում և վահ թե մի ուրիշ»: (Տե՛ս Սօսիոր, „Կորս“ Եջեր 141-142):

[17] Եջ 132.— «Յերկակի թիվը պահպանվել Աստիկայում մինչև V դ. վերջը և. ք. Ք. ծ., բայց մոտ 410 թ. արձանագրություններում նկատվում ե նրա անփոյթ գործածությունը...»:

[18] Եջ 137.— «Վորու» վրա առաջկանից ծանրանում ե նյութով նրա «Ժանրաբեռնվելու» անեծքը նյութով, վորը այստեղ յերկան ե գալիս վորպես «դի շարժվող շերտեր, վորպես հնչյուններ, կարճ սասած՝ վորպես լեզու»: (Տե՛ս „Արխիվ Մարկս և Էնգելս, հ. 1, ստ. 220):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

եջ

Լեզվաբանության դրվագներ Յեղ Նշանակություններ	3
Լեզվաբանական Դիսթիլիններ	8

II ՔՆԴԱՅՆՈՒԹՅՈՒՆ

եջ

Լեզուն	17
Խոսք—Միտք	24
Արժանական վայրի գերլունություն	34

III ՀՆՉՑՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (Փոնեմիկ)

1. ՀԵՂՈՒՅՆԵՐԻ ԺԻԳԻՆՈԳԻԱ

Հնչյունաբանության դրվագներ	40
Արտասանական ապացարատը	43
Ցերաժշտական և արմելային հնչյուններ	48
Հնչյունների գասակարգումը	48
Զայնավորներ	46
Բաղաձայններ	54
Ցետնալեզվային բաղաձայններ	57
Միջնալեզվային բաղաձայններ	58
Առաջնալեզվային բաղաձայններ	58
Շըբնային բաղաձայններ	59
Աֆֆրիկաններ	60
Սոնանտներ	62
Հնչյունի քանակը	65
Հնչյունի տարբերությունը տոնի և արտաշնչության տեսակետից	67
Վանկ	68
Շեշտ	71
Ցերկաբառաններ (դիֆոններ)	74

ՀՆՉՑՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (Փոնեմիկ)

2. ՀԵՂՈՒՅՆԱԿԱՆ ՎԻՖԻՆՈՒՅՆԵՐ

77

Արտիկուլացիոն բաղա	81
Հնչյունագարգումը ունի նպատակադրում	83



Հնչյունական փոփոխությունների տեսակները	87
Հնչյունադիրքի ֆակտորությունը բառասկզբում	89
Հնչյունադիրքի ֆակտորությունը բառավերջաւմ	92
Հնչյունադիրքի ֆակտորությունը բառամիջում	95
Տեալան կամ ինտենսիվ բաղաձայն	97
Շեշտը վորպես հնչյունափոխության ֆակտոր	99
«Արտիկուլացիոն բազա»-ն վորպես հնչյունափոխական ֆակտոր	101
Կոչական և նման բառերի արտակարգ հնչյունափոխությունը	102
Դրափոխություն կամ յատկառաշություն («մետաթեզիս»)	103
Ժողովրդական ստուգաբանություն (Volksetymologie)	105
Ասսիմիլացիա և դիսումիլացիա	107
Բարդացում և պարզացում	113
Ըսդհանուր պատմական հնչյունափոխություն	115
Հնչյունական քանակի վերածումը նոր վորպի («Փոնեմայի»)	120
„Պերեօյ“ և «ալտերնացիա» հայեն	122
Հնչյունափոխությունների հարակցվելը մի բառի մեջ	125
Հնչյունափոխական «որենք»	135
Ըսդհանուր հնչյունափոխությունների պատմական պատճառը	139
Հնչյունաբանության սոցիալական արժեքը	141
Տեքստերի թարգմանությունը	145

ՀՀ Ազգային գրադարան



NL0239544

